Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՄԵՐՕՐՅԱ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Էդգար Էլբակյան

Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները

Երևան
Հեղինակային հրատարակություն
2015

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Է 280

«Մերօրյա հերոսը» ծրագիրն իրականացվում է ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ՀԿ-ներին դրամադրվող դրամաշնորհային ծրագրի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթի շրջանակներում

Հեղինակ՝ Էդգար Էլբակյան
Խմբագիր՝ Ալվինա Աղաբաբյան

Էլբակյան Է.
Է 280 Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները/ Է. Էլբակյան: - Եր., Հեղ. հրատ., 2015. - 188 էջ:

Գրքում ներկայացված են հայ-ադրբեջանական պատերազմի 1988-1994 թթ. և ներկայիս՝ 2014-2015 թթ. շրջափուլերը: Մատնացույց են արվում հակամարտության ծագման պատճառներն ու հայաստանանպաստ լուծման հնարավոր ուղիները: Գրքի Հուշամատյանը ներառում է 2014-2015 թթ. պատերազմական գործողությունների ժամանակ զոհված 10 հայ զինծառայողների կյանքի և սխրանքի նկարագրությունը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-0-1597-2

© Էլբակյան Է., 2015
© ««ԱՐՄՄԵՍ» գիտակրթական կենտրոն» ՀԿ, 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ Նախագահի
աշխատակազմի կողմից
տրամադրված դրամաշնորհ

««ԱՐՄՍԵՍ» գիտակրթական
կենտրոն» հասարակական
կազմակերպություն

«Մերօրյա հերոսը» դրամաշնորհային ծրագրի ղեկավար՝
Ալվինա Աղաբաբյան

«Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները» գրքի հեղինակ՝
Էդգար Էլբակյան

«Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները» գրքի «Հուշամատյանի» կազմման հեղինակային խումբ՝
Էդգար Արմենի Էլբակյան,
Սիրանուշ Սերոժի Մելիքյան,
Լուսինե Սուրենի Հակոբյան,
Աննա Ալբերտի Կարապետյան,
Հասմիկ Արթուրի Գյոզալյան,
Մարիամ Ռոբերտի Այդինյան:

Ծրագրի իրականացման և «Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները» գրքի պատրաստման աշխատանքներում ցուցաբերած աջակցության համար ««Արմսես» գիտակրթական կենտրոն» ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը, Արցախի Պաշտպանության բանակին, ՊԲ զորամասերի անձնակազմին, ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնին, Հայաստանի երիտասարդական հիմնադրամին, զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին և հարազատներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր իրենց խորհուրդներով, առաջարկություններով և դիտողություններով աջակցել են աշխատանքի տարբեր փուլերում:

«Մեր զոհված ընկերները մեզ զրկել են սխալվելու իրավունքից»...

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան

Եռաբլուր, 2014 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1994 թ. մայիսին Հայաստանն Ադրբեջանի դեմ պատերազմում հաղթական ավարտի հասցրեց շուրջ վեց տարի տևած ռազմական գործողությունները[1]: Կնքվեց հրադադարի մասին եռակողմ համաձայնագիր, որով պատերազմի այդ փուլն ավարտվեց:

Չնայած սրան՝ հայ-ադրբեջանական հրադադարի գծում տարատեսակ պատերազմական գործողությունները, սկսած 1994 թ. մայիսից, որպես այդպիսին երբեք չեն դադարել: Տարբեր տարիներին և տարբեր փուլերում հրադադարի խախտմամբ թշնամին հետապնդել է բազմախումբ նպատակներ, որոնց քվինտէսենցիան, սակայն, հայկական հանրությանը հոգեբանորեն զինաթափելը և բանակցային սեղանին շահաբաժիններ ստանալն է: Թշնամու կողմից հրադադարի հետևողական խախտման և պատերազմի մի նոր շրջափուլ սկսվեց 2014 թ. հունվարից և շարունակվում է առ այսօր (2015 թ. հոկտեմբեր):

Սույն գրքում արծարծվող առանցքային հիմնախնդիրը հենց այս շրջանի (2014 – 2015 թթ.) պատերազմի վերլուծական լուսա-

[1] Պատերազմը կոչվում է տարբեր անուններով՝ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ», «Արցախյան [ազատագրական] պատերազմ», «Ղարաբաղա-ադրբեջանական զինված հակամարտություն», «Արցախյան հերոսամարտ» և այլն: Կարծում ենք, որ պատերազմի անվանակոչման մեթոդաբանական խնդրականը պայմանավորված է քաղաքական իրակություններով, և տվյալ դեպքում գիտությունը ստորադասվում է քաղաքականությանը: Ըստ էության՝ 1988-1994 թթ. ներկայիս Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Քարվաճառի, Քաշաթաղի, Հադրութի, Մարտունիի, Ասկերանի, Շուշիի, Մարտակերտի, Ստեփանակերտի սահմաններում տեղի ունեցած ռազմական գործողությունները, որ ավարտվեցին 1994 թ. մայիսյան հրադադարով, պատերազմ էին նորանկախ Հայաստանի և Ադրբեջանի միջև: Հաշվի առնելով, որ վերջինիս հիմնական և առանցքային ճակատն Արցախն էր, պատերազմը կարելի է կոչել «հայ-ադրբեջանական արցախյան պատերազմ»: Ուշագրավ է, որ այս ձևակերպումը համընկնում է պաշտոնական Բաքվի կողմից հակամարտությանը տրվող անվանը՝ «Ermənistan-Azərbaycan, Dağlıq Qarabağ münaqişəsi» («Հայաստանա-ադրբեջանական ԼՂ հակամարտություն»), ուստի ջանալով զերծ մնալ ավելորդ շահարկումներից և թյուրըմբռնումներից՝ սույն աշխատության մեջ պատերազմը կկոչենք ավելի կարճ անվամբ՝ «հայ-ադրբեջանական պատերազմ»՝ հավատարիմ մնալով գիտական ճշմարտությանը:

բանումն է և դրա ֆոնին՝ վերջինիս հերոսների կյանքի և սխրանքի ներկայացումը և վերոգրյալի գիտաարժեքաբանական գնահատումը: Քննարկվող թեմաների կարևորությունը պայմանավորված է արդի տեղեկատվական հոսքում պատերազմի ներկա փուլի վերլուծության, պատճառների վերհանման և այդ համաշարում մարտական գործողություններին մասնակցած զինվորների հերոսական գործի ներկայացման անհրաժեշտությամբ՝ հատկապես հաշվի առնելով, որ ներքաղաքական և արտաքին քաղաքական առատ տեղեկատվահոսքի պայմաններում խոսքի առարկա թեման հաճախ թերի կամ ոչ համակարգային՝ դիպվածային, մեկնաբանություն է ստանում հայրենական մամուլի հրապարակումներում: Մինչդեռ հիմնախնդիրը խիստ այժմեական է, քանզի հետարդիական շրջանի հայկական մտածողության և սոցիալ-պատմական կյանքի համար խիստ կարևոր է նոր տեսակի ռազմական հերոսի կերպավորումը, որը մեկ քայլ առաջ կլինի նախկինի ֆիդայու մարմնացումից:

Բացի արժեքաբանական նշանակությունից, գրքում ներկայացված ինֆորմացիան կրում է նաև համակարգված սկզբնաղբյուրային բնույթ, քանի որ գրված է դեպքերի անմիջական ժամանակակիցների կողմից՝ գիտական բարեխղճության և անաչառության սկզբունքների պահպանմամբ: Պայմանավորված ռազմադաշտային իրականության և վերջինիս ինֆորմացիոն լուսաբանման խիստ յուրահատուկ առանձնահատկություններով, եթե պատերազմական լրահոսն ու քննական ստուգարկումը չեն իրականացվում հընթացս դեպքերի ծավալման, ապա հետագայում խիստ դժվարանում է դրանց հավաստի պատմության շարադրումը, իսկ առանձին դեպքերում դառնում է անհնար, ուստի՝ սույն գրքում արծարծված եղելությունների հավաստի շարադրանքն ապագայում կարող է որպես սկզբնաղբյուր ծառայել ժամանակաշրջանի և քննարկվող թեմաների պատմագիտական ուսումնասիրությամբ զբաղվողների համար:

Գիրքը բաղկացած է երեք մասից: Հաշվի առնելով ներկայիս ռազմական գործողությունների օրգանական կապը և հարակցական առնչությունը 1990-ական թվականների պատերազմի հետ՝ առաջին մասում քննության է առնվում հենց այդ պատմական

շրջանը: Թեև մասնագիտական և հրապարակախոսական գրականության մեջ հայ-ադրբեջանական պատերազմի այդ փուլի (1988-1994 թթ.) մասին շատ է գրվել, այնուամենայնիվ, առկա նյութերում տակավին մեծ բաժին են կազմում հերոսապատումները, հուշագրությունները, հարցազրույցները, ժամանակագրությունները: 2004 թվականին ընթերցողների սեղանին դրվեց «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ» մեկհատորյա հանրագիտարանը[2], որը թերևս առաջին փորձն էր համակարգելու և դասակարգելու պատերազմի վերաբերյալ առկա ինֆորմացիան: Պայմանավորված իրենց յուրահատուկ ժանրերով՝ թվարկված աշխատանքները հաճախ քննության չեն առնում պատերազմի պատճառներին, վերջինիս պարբերականացմանը, հայկական և ադրբեջանական գործողությունների պատճառահետևանքային կապերին վերաբերող հարցերը: Ըստ էության՝ թերի է նաև այն հարցի պատասխանը, թե ինչ գործոններով էր պայմանավորված հայկական կողմի հաղթանակը. այս հարցում տիրապետող մտայնությունը հանգում է բարոյահոգեբանական գործոնի բացարձականացմանը, որը, թեպետև դեր ունի հաղթանակի հարցում, այնուամենայնիվ, չի կարող լինել հաղթանակի միակ գրավականն ու գործոնը:

Առաջնորդվելով վերոբերյալ խնդրականներին լույս սփռելու հրամայականով՝ մեր աշխատանքի առաջին մասում համառոտ ներկայացրել ենք հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակագրական պարբերականացումը, ընթացքը, առանցքային ռազմական գործողությունները, ինչպես նաև ընդհանուր տրամաբանությունը և հայկական կողմի հաջողությունները պայմանավորող գործոնները:

Գրքի երկրորդ մասում շարադրված է 2014-2015 թթ. պատերազմական շրջափուլի քննական վերլուծությունը: Ներկայացված են թշնամու կողմից հրադադարի խախտման պատճառները և հետապնդած նպատակները, հայկական կողմի հակաքայլերը, ինչպես նաև թեմայի ընդհանուր ծիրում տեղավորվող հարակից

[2] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: 1 հատորով, Երևան, 2004:

ենթաթեմաներն ու հարցերը:

Գրքի երրորդ մասը հուշամատյան է՝ նվիրված 2014-2015 թթ. պատերազմում մարտնչած և հերոսաբար զոհված տասը զինծառայողների հիշատակին՝ Արմեն Հովհաննիսյան, Ազատ Ասոյան, Արարատ Խանոյան, Ջորիկ Գևորգյան, Սարգիս Մովսիսյան, Վարդան Մկրտչյան, Արշակ Հարությունյան, Էդուարդ Հայրապետյան, Հակոբ Խաչատրյան, Սամվել Հակոբյան[3]: Անվանական առանձին ակնարկներում ներկայացվում է յուրաքանչյուր զինծառայողի կյանքը՝ պատանեկությունը, նախազորակոչային շրջանը, ծառայության անցկացումը, ինչպես նաև վերջին հերոսական մարտը: Թվարկվում են այն բոլոր պարգևները, հիշատակի միջոցառումները, հուշարձանները, անվանակոչումները և ստեղծագործությունները, որոնք նվիրված են տվյալ հերոսի հիշատակին: Իրապատում կերպով մատնացույց են արվում հերոսներից յուրաքանչյուրի սխրանքը և հակառակորդի նպատակները վիժեցնելու հարցում ունեցած անգնահատելի ավանդը:

Սրա միջոցով հասարակությանն է ներկայացվում այսօրվա զինվորի կերպարը՝ որպես ժամանակակից հերոս, ով իր ավագների օրինակով՝ պատրաստ է խափանել հակառակորդի ռազմական պլաններն ու ապահովել Հայաստանի սահմանների անառիկությունը թշնամու ոտնձգություններից:

---

[3] Կապված այս զինծառայողների ընտրության հետ՝ այստեղ հարկ ենք համարում որոշ պարզաբանում կատարել՝ ի խուսափումն թյուրըմբռնումների և մեթոդաբանական անորոշության: Սույն գիրքը կազմելիս որպես ելակետային կողմնորոշիչ ենք ընդունել զինծառայողի կողմից գիտակցված կերպով հակառակորդի դեմ մարտական գործողությունների մեջ մտնելու հանգամանքը: Նշված մոտեցումը հիմնավորված է գրքի ընդհանուր մեթոդաբանական ապարատի շեշտադրումներով, բխում է վերջինից և որևէ կերպ միտում չունի նվազեցնելու Հայաստանի սահմանների պաշտպանության գործում մնացյալ բոլոր զինծառայողների ներդրումը:

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ (1988-1994 ԹԹ.)

Հայ-ադրբեջանական պատերազմը Հայաստանի ժամանակակից պատմության և ռազմական տարեգրության շրջադարձային էջերից է: Բավականին բարդ երկրաքաղաքական, սոցիալ-տնտեսական և հումանիտար պայմաններում Հայաստանին և Հայաստանի բնակչությանը հաջողվեց ադեկվատ արձագանքել արտաքին միջավայրից եկող սպառնալիքին, ձևակերպել և հետապնդել սեփական ռազմական ու դիվանագիտական օրակարգը: Սրա շնորհիվ ազատագրվեց ներկայիս Արցախի տարածքը, բարձրացավ Սյունիքի պաշտպանվածության աստիճանը, ասել է թե՝ Հայաստանը, որպես ազգ-պետություն, հաղթողի կարգավիճակով մուտք գործեց հետարդիական դարաշրջան:

Հայ-ադրբեջանական պատերազմի մասին հետհրադադարյան տարիներին ստեղծվել է առատ գրականություն: Այդուհանդերձ, բազմաթիվ խնդրականներ տակավին կարոտ են գիտական մանրազնին քննության: Առաջնորդվելով այդ թեմաներից որոշին լույս սփռելու հրամայականով՝ աշխատանքի այս մասում ներկայացվում են հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակագրական պարբերականացումը, ընթացքը, առանցքային ռազմական գործողությունները, ինչպես նաև ընդհանուր տրամաբանությունը և հայկական կողմի հաջողությունները պայմանավորող գործոնները:

Արցախյան ազատագրական պատերազմը կարելի է բաժանել հինգ հիմնական փուլերի[4].

1. 1988 թ. - 1991 թ. ապրիլ (սկիզբը՝ ղարաբաղյան/արցախյան[5] հարցի վերաբացումը և հայկական կողմի ինքնապաշտպանա-

[4] Գիտական շրջանառության մեջ Արցախյան պատերազմի պարբերականացման տարատեսակ փորձեր կան: Այդ շարքում գիտականորեն ամենահամակարգված և հիմնավորը տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 10:

[5] Այս գլխում «Ղարաբաղ» և «Արցախ» պատմաաշխարհագրական անունները կիրառվում են միևնույն ժամանակատարածական և իմաստային հագեցվածությամբ:

կան առաջին ձեռնարկումները, ավարտը՝ ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության զորքերի և ադրբեջանական ՄՀՆՋ/ՕՄՕՆ-ի (Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ/Отряд милиции особого назначения) բռնաճնշիչ և հարձակողական գործողություններ ԼՂԻՄ-ի հայկական բնակավայրերի դեմ),

2. 1991 թ. ապրիլ – 1991 թ. սեպտեմբեր (սկիզբը՝ խորհրդային զորքերի, ադրբեջանական ՄՀՆՋ-ի և զինված ժողովրդական բանդաների կողմից իրականացված «Օղակ» գործողությունը, ավարտը՝ Մոսկվայում հետադիմական ուժերի կողմից պետական հեղաշրջման ձախողումը և ԽՍՀՄ փաստացի փլուզման սկիզբը),

3. 1991 թ. սեպտեմբեր – 1992 թ. հուլիս (սկիզբը՝ Շահումյանում, Հադրութում և Մարտունիում թշնամու դեմ առաջին լուրջ դիմադրությունն ու հաջողությունը, խորհրդային ՆԳՆ զորքերի դուրսբերումը ԼՂՀ-ից[6] և պատերազմի հետագա տրամաբանության ուրվագծումը, ավարտը՝ թշնամու ուժերի լայնածավալ հարձակումն ամբողջ ճակատով, Շահումյանի և Մարտակերտի անկումը),

4. 1992 թ. օգոստոս – 1993 թ. աշուն (սկիզբը՝ հայկական զինված ուժերի վերակազմակերպումն ու անցումը կենտրոնացված հրամանատարության, ավարտը՝ ներկայիս Արցախի տարածքի մեծ մասից ադրբեջանական բնակչության և զորքերի դուրսմղումը, ներկա սահմանային և ժողովրդագրական ուրվագծի հաստատումը),

5. 1993 թ. դեկտեմբեր – 1994 թ. մայիս (սկիզբը՝ թշնամու ձմեռային հարձակումը ռազմաճակատի բոլոր ուղղություններով, ավարտը՝ հայկական ուժերի հաջող պաշտպանությունը, ռազմաճակատի գծի կայունացումը և հրադադարի հաստատումը):

Առաջին շրջանում ակտիվ, բայց, ինչն ամենակարևորն է, կազմակերպված ռազմական գործողություններ տեղի չէին ունենում: Այնուամենայնիվ, դեպքերի ընթացքը հստակ էր: ԼՂԻՄ-ի բնակչությունը որդեգրել էր ՀԽՍՀ-ի հետ վերամիավորվելու միջոցով ինքնորոշման ուղին, ինչին Ադրբեջանը հոգեվարք ապրող

---

[6] **Ուլուբաբյան Բագրատ**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 295:

«Պահանջում ենք Ղարաբաղը վերամիացնել Հայաստանին». ցույց Ստեփանակերտում (1988 թ.)

Խորհրդային Միության թողտվությամբ պատասխանում էր բռնի միջոցներով:

1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց «… խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի խոր ըմբռնման զգացում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու մասին հարցը, մաժամանակ ԽՍՀ Միության Գերագույն խորհրդի առաջ միջնորդել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու հարցի դրական լուծման մասին»[7]: Հաջորդ

[7] ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի որոշումը «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ

օրը որոշման տեքստը հրապարկվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Արդեն երկու օր անց՝ փետրվարի 22-ին, աղդամցիներից և բարդացիներից բաղկացած մոտ 8 հազարանոց մեծ մասամբ զինված ամբոխը «կարգ ու կանոն հաստատելու» նպատակով Աղդամից ճամփա ընկավ դեպի Ստեփանակերտ[8]: Վերջինիս մատույցներում ամբոխի դեմն առան որսորդական հրացաններով զինված հայկական խմբերը[9], որոնք այդ ժամանակ ինքնապաշտպանական ջոկատների նախատիպերն էին: Աղրբեջանական կողմն ունեցավ երկու զոհ, որոնցից մեկին՝ խառատ Ալի Հաջիևին, խոցել էր հենց աղրբեջանցի միլիցիոնները, իսկ մյուսի սպանության հանգամանքներն այդպես էլ օրենքով սահմանված կարգով չճշտվեցին[10]: Այնուամենայնիվ, ԽՍՀՄ Գերագույն դատախազությունը, մամուլի օրգանները՝ աղրբեջանական հեռագրական ընկերությունը, «ՏԱՍՍ»-ը, համամիութենական ռադիոն և կենտրոնական հեռուստատեսությունը, մթնոլորտը շիկացնելու համար ակտիվորեն հաղորդեցին աղրբեջանական զոհերի մասին՝ անտես առնելով վերևում նշված հանգամանքները[11]: Աստիճանաբար ուրվագծվում էր կենտրոնի մոտեցումը՝ նենգափոխելու և պիտակավորելու հայության սկսած շարժումը և վերջինիս արդարացի էությունը:

Աղդամցիների գրոհից, ինչպես նաև Սումգայիթում հայ բնակչության կոտորածից[12] հետո թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ ՀԽՍՀ-ում հայու-

---

կազմ տեղափոխելու հարցով Հայկական ԽՍՀ և Աղրբեջանական ԽՍՀ գերագույն խորհուրդների առջև միջնորդության մասին», *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք*, http://www.nkr.am/hy/decision--of-the-special-session-of-the-nkao-council-of-peoples-deputies-of-xx-session/41/ (հղվել է 27.09.2015):

[8] **Степанян Карен**, Карабахский конфликт 1988 – 2006 (Хроника Карабахского конфликта), *"Информационно-аналитический портал Miacum.am"*, http://miacum.am/docs/xronica/ (հղվել և ներբեռնվել է 27.09.2015).

[9] **Պետրոսյան Ռազմիկ**, Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997, էջ 52:

[10] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջ 21:

[11] Նույն տեղում, էջք 20-21:

[12] Աղրբեջանի Սումգայիթ քաղաքում աղրբեջանական իշխանությունների կողմից պետական մակարդակով կազմակերպված քաղաքի հայ ազգաբնակչության կոտորած և զանգվածային տեղահանություն, որը տեղի է ունեցել 1988 թվակա-

թյան շրջանում հասունացավ ինքնապաշտպանության հրամայականը: ԼՂԻՄ-ում ինքնապաշտպանական ջոկատների կազմակերպումն ընթանում էր հիմնականում տեղային մակարդակով՝ ըստ գյուղերի և մարզկենտրոն Ստեփանակերտի: Տեղին է նկատել, որ այդ շրջանում ինքնապաշտպանական ջոկատները գործում էին ըստ օբյեկտիվ իրականության պահանջների: Իսկ իրականությունը դեռևս համակարգված պատերազմական չէր, և հակամարտության այս փուլը հիմնականում աչքի էր ընկնում անասնագողության, խափանարարության, վնասատվության, թալանի, ավազակային հարձակումների և այլ անօրինական գործողություններով[13]: Այդ է պատճառը, որ ջոկատների հիմնական գործառույթը շուրջօրյա, տեղ-տեղ՝ միայն գիշերային հերթապահությունն էր, երբ ադրբեջանական կողմից նմանատիպ գործողությունների հավանականությունն ավելի մեծ էր:

Նկարագրական են Մարտակերտի շրջանի Գետավան գյուղի կամավորական ջոկատներից մեկի[14] հրամանատար Արայիկ Սարգսյանի հուշերը հակամարտության այդ շրջանի մասին. «... Այդ ժամանակվանից (Ղարաբաղյան շարժման սկսվելուց հետո – *Է. Է.*) կազմակերպեցի ինքնապաշտպանական ջոկատներ: Հաշվի առնելով, որ գյուղը շրջապատված է թուրքական (իմա՝ ադրբեջանաբնակ – *Է. Է.*) բնակավայրերով, մի կողմից՝ Իմերեթ Գյարավենդը[15], մյուս կողմից՝ Չարեքտարը, Աղդաբանը և հարևանությամբ Քելբաջարի շրջանը, [ինչպես նաև որ] գետի մյուս ափում հայկական գյուղեր կան, որոնց ևս վտանգ է սպառնում, երևի թե Ղարաբաղում առաջին ինքնապաշտպանական ջոկատներից մե-

---

նի փետրվարի 27-29-ը: Պաշտոնական տվյալներով՝ սպանվեց 26 հայ, թեպետ իրականում այդ թիվը հասնում էր շուրջ 100-ի: Սումգայիթի ջարդերն Ադրբեջանի պատասխանն էին ԼՂԻՄ-ի բնակչության ինքնորոշմանն ու նախերգանքը եղան գալիք պատերազմի:

[13] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 9:

[14] Գետավանում ի սկզբանե կազմավորվել են երկու անջատ ջոկատներ: Դրանցից երկրորդի հրամանատարը Հ. Թամրազյանն էր: Մինչև Մարտակերտի պաշտպանական շրջանի կազմավորումը (1992 թ. սեպտեմբեր) այս երկու ջոկատները գործել են առանձին (Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 160):

[15] Մեջբերման մեջ հավատարիմ ենք մնացել աղբյուրում նշված գրությանը, սակայն մեր կողմից սույն գրքի մեջ այս բնակավայրի անվանումը (“İmarət Qərvənd”) ադրբեջաներենից տառադարձել ենք «Իմերեթ-Գերվենդ»:

կը ստեղծեցինք մենք: 1988 թ.-ի վերջերից մենք արդեն… **գիշերը պոստի էինք կանգնում** (այստեղ և այսուհետ բոլոր ընգծումները մերն են – *Է. Է.*), պահպանում էինք մեր բնակչության անվտանգությունը, **ցերեկը թուրքերի հետ մասին գնում էինք աշխատանքի**: Նախ անասնագողությունն էր շատանում նման պայմաններում, թուրքերը մեզ վրա էին գցում, … մենք իրենց վրա էինք դնում: Որպեսզի նման բաներ չլինեն, հերթապահություն սահմանեցինք, որը գիշերներն իրականացվում էր կամավոր հիմունքներով…»[16]: Ասվածի օրինակով պարզ է դառնում, որ կամավորական խմբերն այդ շրջանում ավելի շատ ոստիկանական-պահնորդական նշանակություն ունեին և դասական ռազմական իմաստով տակավին զինված կազմավորումներ չէին, թեպետ հետագայում հենց վերջիններիս կերպափոխման շնորհիվ առաջ եկան կազմակերպված մարտական գործողություններում ինքնապաշտպանություն և հակահարձակում իրականացնող ջոկատները:

Անշուշտ, այդ անցումը տեղի չունեցավ դյուրությամբ կամ առավել ևս՝ ինքնընստինքյան: Դա հետևանք էր տարերային կերպով առաջ եկած շարժման հենց սաղմնավորման փուլում այն կազմակերպելու և համակարգելու ջանքերի: Արդեն 1988 թ. վաղ գարնանը Ստեփանակերտում սկսեց գործել Արցախի պաշտպանության շտաբը[17], որը, ըստ էության, նպատակ էր դրել կազմակերպելու ինքնապաշտպանական գործը ԼՂԻՄ-ի տարածքում[18]: Շտաբի պետը Ռազմիկ Պետրոսյանն էր, նրա տեղակալը՝ Ռոլես Աղաջանյանը[19]: Շտաբն առաջին հերթին պահակակետեր ստեղծեց Ստեփանակերտում: Դրանք յոթն էին՝ Նոր Արմենավանում,

---

[16] **Բակուր**, Արցախյան գոյամարտի համահավաք, գիրք չորրորդ, հինգերորդ, Երևան, 2011, էջք 119-120:

[17] Ստեղծման ժամանակ, հասկանալի պատճառներով, շտաբը չէր կարող կոչվել իր անունով, ուստի՝ որոշվեց այն ստեղծել «Քաղաքացիական պաշտպանության շտաբ» անվան տակ: Այդ է պատճառը, որ հետագա շրջանի գրականության մեջ շտաբը կոչվում է տարբեր կերպ՝ «Արցախի պաշտպանության շտաբ», «Արցախի ինքնապաշտպանության շտաբ», «ԼՂ կամավորական ջոկատների ընդհանուր շտաբ»: Սույն գրքում կիրառվում է «Արցախի պաշտպանության շտաբ» տարբերակը, որով այն կոչում է հենց վերջինիս հիմնադիր պետը՝ Ռազմիկ Պետրոսյանը:

[18] **Պետրոսյան Ռ.**, Արցախի պաշտպանության դիրքերում…, էջք 51-57:

[19] Նույն տեղում, էջ 53:

Հեքիմյան փողոցի վրա, կոշիկի և գյուղգործիքների գործարանների մոտ, Պուշկին և Բեկզադյան փողոցների խաչմերուկում, Ուզբեկստան փողոցի վրա (Կրկժանից ներքև), Լեսնայա (ներկայումս՝ Աշոտ Հովհաննիսյան) փողոցի վրա եղած համար 9 դպրոցի մոտ և Բաղրամյան փողոցի վրա[20]: Շտաբի ջանքերով հաշվառման վերցվեցին քաղաքի ավտոբուսներն ու բեռնատարները, մշակվեց մոբիլիզացիոն ընդհանուր պլան, ցուցակագրվեցին առկա ջոկատները: Կենտրոնական շտաբի օրինակով շտաբներ ստեղծվեցին նաև տեղերում՝ Մարտակերտում, Մարտունիում, Հադրութում, Ասկերանում, Շոշ գյուղում, Կրկժանում, Տողում, Քարինտակում և այլուր: Կենտրոնական շտաբն էր հանձնառու շրջանների հետ հեռախոսային կապը պահելու, զենքի հայթայթման[21] և առաքման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շրջաններ զինված խմբեր ուղարկելու համար: Արդեն այդ շրջանում ԼՂԻՄ-ում գործող կամավորական խմբերը մշտապես կապի մեջ էին ՀԽՍՀ ազգային-ազատագրական օջախների հետ և վերջիններից ստանում էին մարդկային և նյութական ահռելի աջակցություն[22]՝ զենք, զինամթերք, դեղորայք, մարդուժ, առանց որոնց ղարաբաղյան շարժումը կմարեր ծագման իսկ օրերին:

Ադրբեջանական կողմի կոշտ արձագանքը ԼՂԻՄ-ի բնակչության քաղաքական կամքին, Սումգայիթի և Բաքվի ջարդերը[23] և ԼՂԻՄ-ում ծավալվող դեպքերն աստիճանաբար ուրվագծում էին

---

[20] Նույն տեղում:

[21] Զենքի հայթայթման հարցն ամենադժվարն ու պատասխանատուն էր: Զենքի հիմնական աղբյուրը ՀԽՍՀ-ից էր: Զենքի կուտակման և առհասարակ շարժման սկզբնավորման վաղ փուլում ջոկատների կազմակերպման հարցում Մարտակերտում մեծ դեր ունեցան Վիգեն Շիրինյանը Չլդրան գյուղից, Ասկերանում՝ Սլավիկ Միրզոյանը Սառնաղբյուր գյուղից, Հադրութում՝ Վիգեն Գրիգորյանը Տող գյուղից («Տողի Վիգեն»), Մարտունիում՝ Վլադիկ Խաչատրյանը Մարտունիից, Բերդաձորում՝ Առնո Մկրտչյանը Հինշեն գյուղից («Բերդաձորի Առնո») և Հրաչ Պետրոսյանը Եղցահող գյուղից:

[22] **Աբրահամյան Հրանտ**, Կամավորական ջոկատներից մինչև Պաշտպանության բանակի ստեղծումը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2006, № 3, էջք 125-126:

[23] 1990 թվականի հունվարի 13-19-ին Ադրբեջանի ժողովրդական ճակատի կողմից կազմակերպված և իշխանությունների կողմից հովանավորված գործողություններ, որոնց հետևանքով Բաքվի հայ բնակչությունը ենթարկվեց բռնագաղթի, սպանվեցին, վիրավորվեցին և անհայտ կորան հազարավոր հայեր:

հակամարտության հետագա ընթացքը: Աճող ազգայնամոլության պայմաններում Բաքվում կոմունիստական վարչակարգի հեղինակությունը գնալով նվազում էր, և բարձրանում էր Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺՃ) հեղինակությունը: Վերջինս արդեն 1989 թ. օգոստոսից սկսեց զինված խմբավորումներ ուղարկել Ղարաբաղ: Տեղի թյուրքական բնակչությունը նույնպես ակտիվորեն լծված էր հայության դեմ պայքարին և ամեն ինչ անում էր՝ բռնությունների միջոցով ԼՂԻՄ-ի հայության ինքնորոշումը խափանելու համար:

Այդ նպատակով դեռևս 1988 թ. սեպտեմբերից ադրբեջանցիները փակեցին Ստեփանակերտից հայաբնակ Քարինտակ տանող ճամփան: Ի հակակշռումն սրա՝ 1989 թ. վերը հիշատակված Ռոլես Աղաջանյանի տնօրինած շինարարական կազմակերպությունն անտառների միջով նոր ճանապարհ բացեց Շոշից Քարինտակ[24]: 1989 թ. օգոստոսի 13-ին խոջալվեցի բանդիտները պայթեցրին Աղդամի շրջանի տարածքով անցնող երկաթուղու Աղդամ-Ստեփանակերտ կայարանամեջ ուղեմասի բավականին երկար մի հատված: Սա հարմար պատրվակ դարձավ Ադրբեջանի իշխանությունների համար՝ հայտարարելու, որ երկաթուղային փոխադրումները դեպի Լեռնային Ղարաբաղ այլևս անհնար են: Բնավ ոչ պատահականորեն հենց նույն օրը Շուշիի ադրբեջանցիներն իրենց հերթին քանդեցին Ստեփանակերտի ջրատարը[25]: Երկաթգծի վերականգնումից հետո նույն 1989 թվականի դեկտեմբերի 11-ի գիշերը և 17-ի գիշերը խոջալվեցի թյուրքերը դարձյալ պայթեցրին այն[26]: Ջրատարը նույնպես վերականգնվեց, սակայն 1990 թ. հունվարի 16-ին Շուշիի և հարակից ադրբեջանաբնակ գյուղերի միացյալ հանրահավաքի մասնակիցները Ստեփանակերտը բնաջնջելու կոչերից հետո շարժվեցին դեպի Ղայբալու (այլ անվամբ՝ Ղայբալիշեն, ներկայումս՝ Գայլատուն), որտեղ գտնվում էր մարզկենտրոնը խմելու ջրով ապահովող ջրատարի

[24] **Մարտիկյան Գոհար**, Ապրելու բանաձև, գիրք յոթերորդ, Երևան, 2014, էջ 7:

[25] **Էլբակյան Էդգար**, Աղդամի ազատագրման պատմական դասերը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 25 հուլիս 2015, թիվ 139 (6185), էջ 5:

[26] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջք 134-135:

ակունքը, և ավերեցին այն[27]: Որպես պատասխան գործողություն՝ Շուշիի շրջանում քարինտակցիները պարբերաբար փչացնում էին ադրբեջանաբնակ Նաբիլար գյուղում տեղադրված Շուշիի ջրատար պոմպակայանն ու բարձր լարման էլեկտրահաղորդալարի գծերի հենասյուները: Առաջին այդպիսի գործողությունը տեղի է ունենում 1991 թ.[28] հոկտեմբերի 11-12-ին. պայթեցվում է ջրմուղը[29]: Եվս մեկ ամիս անց պայթեցվեց նաև էլեկտրալարը[30]:

Քարինտակի օրինակով երևում է, որ այնտեղ, որտեղ աշխարհագրական դիրքն ու միջավայրը բարենպաստ էին, հայերը կարողանում էին նույն կերպ հակադարձել թշնամու գործողություններին: Այդուհանդերձ, հաղորդակցային առումով ուժերի հավասարակշռությունը հօգուտ Ադրբեջանի էր: Մարզը սնուցող կամ մարզն օղակող հիմնական ճանապարհներն անցնում էին Ադրբեջանական ԽՍՀ տարածքով, և Ադրբեջանը ձգտում էր ընդհանրապես վերահսկողության տակ առնել Ստեփանակերտ տանող բոլոր ճանապարհները: Այդ նպատակով 1990 թ. հունվարի 3-ին նույն խոջալվեցիները փակեցին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհը և քարկոծեցին հայկական մեքենաները[31]:

Առհասարակ հարկ է նկատել, որ Աղդամ-Շուշի գծի նկատ-

---

[27] Նույն տեղում, էջ 142:

[28] Գոհար Մարտիկյանի «Ապրելու բանաձև» հուշապատումի նշված գրքի մեջ (էջ 12) ներկայացված 1990 թ. հոկտեմբերի 12-ի խափանարարական գործողությունը համընկնում է ադրբեջանական աղբյուրներում 1991 թ. հոկտեմբերի 11-ով թվագրվող համանման գործողության հետ (տես Dağlıq Qarabağ: hadisələrin xronikası (1988-1994-cü illər) (Լեռնային Ղարաբաղ. դեպքերի ժամանակագրություն (1988-1994 թթ.) - *ադրբեջաներեն*), Bakı, 2005, էջ 35): Ելնելով դեպքերի ժամանակագրական զարգացման ընդհանուր տրամաբանությունից՝ ավելի արժանահավատ ենք համարում, որ տվյալ գործողությունները տեղի են ունեցել հենց 1991 թ.: Այդ կարծիքին է նաև Աշոտ Պետրոսյանը՝ «1991-ի հոկտեմբերից Քարինտակի և Շոշի ջոկատներին հրահանգ է տրվում՝ թուրքերին հանել Քարինտակից հիւսիս-արևմուտք ուղղութեան մէկ քիլոմեթրի վրայ գտնուող Նաբիլար գիւղից, այնուհետև պայթեցնել Շուշիի ջրմուղը և բարձրավոլթ ելեկտրաաշտարակը, որպէսզի Շուշիին ջրազուրկ անեն և հոսանքից զրկեն» (**Պետրոսեան Աշոտ**, 22 Տարի Առաջ Թշնամին Ջախջախուեց Ու Ետ Շպրտուեց Քարինտակում, *«Ազդակ»*, 5 փետրվարի 2014 թ., http://www.aztagdaily.com/archives/172252 (հղվել է 04.10.2015)):

[29] **Պետրոսեան Ա.**, 22 Տարի Առաջ..., նույն տեղում:

[30] Dağlıq Qarabağ..., էջ 43.

[31] **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջ 137:

մամբ վերահսկողության հաստատումը և Ղարաբաղի հայության հաղորդակցային շրջափակումն անդրկովկասյան թյուրքերի (հետագայում՝ 1930-ականների կեսերից՝ ադրբեջանցիներ) ռազմավարական իդեայի բաղկացուցիչ մասն էր դեռևս 20-րդ դարասկզբից: Սկսած 1905 թվականի հայ-թաթարական ընդհարումներից՝ թշնամին պարբերաբար դիմում էր այս մարտավարությանը[32]: Դարավերջի իրականության պայմաններում արդեն ցամաքային ենթակառուցվածքների հանդեպ վերահսկողությունից զատ՝ ադրբեջանցիները ձգտում էին ԼՂԻՄ-ի հայության համար անհասանելի դարձնել նաև օդային հաղորդակցությունը ՀԽՍՀ-ի հետ, որը, ի դեպ, նախքան Լաչինով անցնող միջանցքի ազատագրումը ՀԽՍՀ-ի հետ կապվելու, զենք-զինամթերք, դեղորայք և այլևայլ օգնություն ստանալու հիմնական միջոցն էր մարզի հայության համար[33]: 1989 թ. դեկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերն ադրբեջանցիները պայթեցրին Ստեփանակերտի օդանավակայանի թռիչքուղու կենտրոնը. առավոտյան դադարեց օդային կապը Երևանի հետ[34]: 1990 թ. ապրիլին, փորձելով հաղթահարել փաստացիորեն լիակատար շրջափակումը, հայերը Մարտակերտից ոչ հեռու՝ դաշտի մեջ, սարքավորեցին գրունտային թռիչքադաշտ «Ան-2» ինքնաթիռների համար: Ադրբեջանական ՄՀՆՋ-ը և խորհրդային զորքերը, սակայն, քանդում էին այդպիսի թռիչքադաշտերը[35]: Ըն-

---

32 **Elbakyan Edgar**, A New Legal Approach Towards the Nagorno-Karabakh Conflict Peaceful Resolution, *International Journal of Social Sciences*, III(5), 2014, էջ 44.

33 Կյանքին սպառնացող մահացու վտանգի պայմաններում, հաճախ անտեսելով նաև եղանակային անբարենպաստ պայմանները՝ այդ տարիներին ինքնաթիռներ և ուղղաթիռներ էին օդ բարձրանում Գորիսի, Սիսիանի և Երևանի «Էրեբունի» օդանավակայաններից: Պատահում էր, որ մեկ օրվա ընթացքում օդաչուները Ստեփանակերտ և հակառակ ուղղությամբ էին թռչում 20-25 անգամ: Ստեփանակերտ էին տեղափոխվում զենք, զինամթերք, ազատամարտիկներ, իսկ Ստեփանակերտից՝ վիրավորներ: Պատերազմի այս շրջանում հայ օդաչուների անձնազոհ ծառայության մասին տես **Պետրոսյան Ռ.**, Արցախի պաշտպանության դիրքերում..., էջք 148-151, ինչպես նաև «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ» հանրագիտարանի՝ օդաչուներին նվիրված հոդվածաշարը (էջք 672-693):

34 **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջ 133:

35 **Հովհաննիսյան Արծրուն**, Օդային դիմակայությունը Արցախյան պատերազմում, *«Հայ կինվոր»*, 05(870), 09.02.2011 – 16.02.2011, http://www.hayzinvor.

դամենը մեկ ամիս անց՝ 1990 թ. մայիսի 21-ին, ադրբեջանցի աշխատավորները խորհրդային զինվորականների պաշտպանության ներքո դաշտը հերկելու պատրվակով փչացրին թռիչքադաշտի սարքավորումները[36]:

Այսպիսով, 1989-1990 թթ. ձմեռվանից ԼՂԻՄ-ում և ՀԽՍՀ սահմանակից շրջաններում կիսապատերազմական վիճակ էր: Թերևս միայն կազմակերպված ղեկավար կենտրոնների բացակայությունն է պատճառը, որ այդ շրջանի դեպքերը դժվար է միանշանակ կոչել որպես պատերազմական: Ադրբեջանցիների հախուռն հարձակումների հիմնական թիրախն էին Երասխը[37], Նոյեմբերյանը, Ստեփանակերտը (Կրկժանից), Ասկերանը (Խոջալուից), Մարտունին (Աբդալ/Ավդալ և Գյուլաբլը գյուղերից), Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, Մարտակերտի գյուղերը (Միր-Բաշիրի, Աղդամի և Քյալբաջարի[38] շրջաններից), Բերդաձորի գյուղերը (Շուշիից): Նշված բոլոր ուղղություններով հայկական կամավորական ջոկատներն անցնում էին պաշտպանության, երբեմն դիմում կանխարգելիչ հակահարձակողական գործողությունների:

Դիցուք՝ 1989 թ. դեկտեմբերի 6-7-ին «Տիգրան Մեծ» կամավորական ջոկատի մի խումբ մարտիկներ Կոռնիձորից հարձակման անցան «Ստրոյկայի» ուղղությամբ: Վերջինս Բաքվի նախաձեռնությամբ կառուցվող ադրբեջանաբնակ ապագա բանավան էր: Այն ընկած էր Լաչին-Ղուբաթլու ճանապարհի արևելահայաց մասում, և վերջինիս կառուցման դեպքում փաստացիորեն ադրբեջանական կողպեքի տակ կհայտնվեր նաև Գորիսի շրջանից

---

am/1620.html (հղվել է 27.09.2015):

36 **Степанян К.**, Карабахский конфликт..., նույն տեղում:

37 1990 թ. հունվարին այս ուղղությամբ ծավալված դաժան մարտերում հայկական ուժերն ազատագրեցին Երևան-Գորիս ճանապարհի նախալեռնային հատվածում գերիշխող դիրք զբաղեցնող Քյարքի ադրբեջանաբնակ գյուղը (ներկայումս՝ Տիգրանաշեն):

38 Այս տարածքի նախապատերազմյան-ադրբեջանապատկան ժամանակվա անվան այլանձև գրություններից («Քելբաջար», «Կելբաջար», «Քյալբաջար») սույն գրքում օգտագործվում է Քյալբաջարը՝ հիմք ընդունելով հարցի շուրջ Սամվել Կարապետյանի դիտարկումը (տես **Կարապետյան Սամվել**, Վերջապես ո՞րն է ճիշտ անվանաձևը (Քարվաճառ տեղանվան մասին), *«Հայաստանի Հանրապետություն»*, 19 ապրիլ 1992, էջ 2):

Ստեփանակերտ տանող այլընտրանքային ճանապարհը (Կոռնիձոր - Մըղրդարա (պատմական Մեղի, ներկայումս՝ Մեղվաձոր) – Լիսագոր - Շուշի), որը Լաչինի ադրբեջանապատկանության պատճառով խիստ կարևոր էր հայ ազատամարտիկների համար: Ըստ «Տիգրան Մեծի» հրամանատար Կորյուն Ղումաշյանի՝ «… Հարձակումը հաջող անցավ, և բանավանի շինարարությունը մեկընդմիշտ դադարեցվեց»[39]: Փորձելով զարգացնել հաջողությունը՝ ջոկատի մարտիկները դեկտեմբերի 8-ին հարձակվեցին Ղուբաթլուի շրջանի Ջիջիմլի գյուղի[40] վրա: Մարտի ժամանակ զոհվեց Ուջանի «Վահագնաձին» կամավորական ջոկատի մարտիկ Նորայր Հարությունյանը: Ինչպես հիշում է Կորյուն Ղումաշյանը. «Նրա մահը ցնցել էր բոլորիս: Որոշ չափով մեր ընկերոջ վրեժը լուծեցինք, մտանք գյուղ, մի քանի տուն վառեցինք: Չեմ մոռանա այդ օրը՝ երկու ադրբեջանցի խփեցի»[41]: Այս օրինակի հիման վրա հիմնավոր ընդհանրացում կատարելով՝ կարելի է պնդել, որ այդ շրջանում ջոկատները գործում էին առանց հստակ ռազմավարական ծրագրի, սպորադիկ գործողություններով[42] և նման պայմաններում առավելագույնը կարող էին լուծել միայն կարճաժամկետ առօրեական-գոյապահպանական խնդիրներ:

---

39 **Հարությունյան Սամվել**, Օրագրային գրառումներ, *«Հայ կինվոր»*, 33(949), 23.08.2012 – 29.08.2012, http://www.hayzinvor.am/16477.html (հղվել է 27.09.2015):

40 Ջիջիմլին Կոռնիձորից 3,5 կմ հարավ է: Խորհրդային տարիներին գտնվում էր Ադրբեջանական ԽՍՀ Ղուբաթլուի շրջանում և 800 մ էր հեռու ՀԽՍՀ-ի Գորիսի շրջանի սահմանից: Ենթադրվում է, որ մինչև 18-րդ դարի կեսը Ջիջիմլիի տեղում եղել է հայաբնակ Վանոցա գյուղը: Տարածքում հաստատված սունի թյուրքերը 1905 թ. հայ-թաթարական բախումների ժամանակ անասնագողությամբ էին զբաղվում Կոռնիձոր և Տեղ հայկական գյուղերում, ինչը հարուցեց հայերի պատասխան վրեժխնդրական հարձակումը և 15 ջիջիմլիցի թուրքերի սպանությունը (**Կարապետյան Սամվել**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջք 184-185): Գյուղը ներկայումս կոչվում է Վանոցա, անբնակ է, վերջինիս տարածքը մտնում է Քաշաթաղի շրջանի Ճաղկաբերդի գյուղական համայնքի մեջ: Հարուստ է հայկական և մահմեդական պատմամշակութային հուշարձաններով:

41 **Հարությունյան Ս.**, Օրագրային գրառումներ..., նույն տեղում:

42 Կոնկրետ Ջիջիմլիի գործողության պարագայում կարելի է ենթադրել, որ ջոկատի տղաները կանխավ չէին իրականացրել հետախուզություն և հիմնականում անծանոթ էին տեղանքին: Բանն այն է, որ վերջիններս դեկտեմբերի 5-ին էին հասել Կոռնիձոր, ուստի՝ գործնականորեն քիչ է հնարավոր, որ երեք օրում բավարար պատկերացում կազմած լինեին տեղանքի մասին (**Հարությունյան Ս.**, Օրագրային գրառումներ..., նույն տեղում):

Ահա այս ռազմավարական մտահոգությունով էր պայմանավորված, որ 1990 թ.-ի հունվարի վերջին և փետրվարի սկզբին ՀԽՍՀ տարածքի կամավորական ջոկատները բարձրացրին միասնական ինքնապաշտպանության կենտրոն կազմակերպելու հարցը: Շատերի շրջանում, սակայն, ցանկություն չկար հրաժարվելու ինքնագործ կեցվածքից և խմբապետային գործելաոճից: Այնուամենայնիվ, աստիճանաբար հաջողվում էր միասնական հրամանատարության տակ ժողովել անջատ գործող խմբերին: Նույն հրամայականը կար նաև Արցախում, հատկապես, որ դեռ տարեսկզբին Բաքվում ակտիվ կոչեր էին հնչեցվում և աշխատանքներ էին տարվում, որպեսզի բնակչությանը մղեն զինվելու և հայերի դեմ գործելիք կամավորական խմբերին անդամակցելու[43]: Քանի որ ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում միութենական հանրապետությունները չէին կարող ունենալ սեփական օրինավոր զինված ուժեր, ադրբեջանցիները գրանցվում էին ՄՀՆՋ-ում՝ ստանալով համազգեստ, զենք, զինամթերք[44]: Արդեն 1990 թ. հունվարի 20-ին ուղղաթիռների 15 չվերթներով Ստեփանակերտին հարակից Մալիբեյլի գյուղ են հասցվում ադրբեջանական ՄՀՆՋ-ի հատուկ ջոկատները, որոնք հետագա ամիսներին տեղաբաշխվում են մարզի և վերջինիս հարակից շրջանների ադրբեջանաբնակ գյուղերում և սկսում հարձակումներ գործել հայկական բնակավայրերի վրա:

Ինչպես երևում է, ԽՍՀՄ արագընթաց անկման ֆոնին թե՛ Հայաստանը[45], թե՛ Ադրբեջանը սեփական ռազմաքաղաքական նախապատրաստություններն էին տեսնում, որոնք միտված էին իրադրության փոփոխությանն ընդառաջ՝ սեփական օգտին

---

43 **Cafersoy Nâzim**, Elçibey dönemi Azerbaycan dış politikası (Haziran 1992 – Haziran 1993) (Էլչիբեյի շրջանի Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը (1992 թ. հունիս – 1993 թ. հունիս) - *թուրքերեն*), Ankara, 2001, էջ 22:

44 **Ցալանուզյան Միքայել**, Անկախության ժամանակագրություն, *«Հայ կինվոր»*, 36 (901), 15.09.2011 - 21.09.2011, http://www.hayzinvor.am/6022.html (հղվել է 28.09.2015):

45 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի ազգային խորհուրդը համատեղ որոշում ընդունեցին վերամիավորման մասին: Այդ օրվանից Արցախը Հայաստանի մաս է, և «Հայաստան» եզրույթը կարող է կիրառվել հենց այդ հավաքական իմաստով:

վերաձևավորել ստատուս-քվոն: Ըստ որում՝ ստատուս-քվոյի առանցքը տարածքային բաղադրյալն էր, որ ձևավորվել և պահպանվել էր Խորհրդային Միության կողմից: Հենց տարածքային նման վարչաբաժանումն էր պատճառը, որ կոնֆլիկտում, հանձին հայերի, կար հստակ արտահայտված տուժող կողմ, որը և փորձեց 1988 թ. փոխել իրերի գոյություն ունեցող դրությունը: ԼՂԻՄ-ի բնակչության նման որոշումը, անշուշտ, պայմանավորված էր ազգային-քաղաքական, անվտանգային մտահոգություններով և զարգացման բարենպաստ պայմանների ընտրությամբ, որոնք անհնար էին առանց 1920-ականների սահմանահատությամբ հաստատված պատմաքաղաքական անարդարության հաղթահարման: Ի դեպ, հենց այս նույն տրամաբանությամբ 1989 թ. հուլիսի 26-ին Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց շրջանը վերամիացնել ԼՂԻՄ-ին և դիմեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ քննելու հարցը[46]: Նույն օրվա երեկոյան Շահումյան ժամանեց Վ. Պոլյանիչկոն[47]՝ պահանջով, որ բեկանվի շրջխորհրդի որոշումը: Ստանալով կտրական մերժում՝ Պոլյանիչկոն հայտարարեց՝ «… Ով այստեղ չի ուզում ապրել, թող հեռանա, քանի մենք … չենք քշել ուժով»[48]:

Սպառնալիքն առավել քան հստակ էր: Ջանալով կանխել հայկական իրավապահանջումների տարածքային տիրույթը՝ 1991 թ. հունվարի 14-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով լուծարում էր Շահումյանի շրջանը և վերջինիս տարածքը կցում Կասում Իսմայիլովի շրջանին (այդուհետ՝ Գորանբոյի շրջան)[49]: Սրանով հիմքն էր

---

46 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 519:

47 1988-1991 թթ. Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար և Հանրապետական կազմկոմիտեի նախագահ: Այդ պաշտոնում վարել է ծայրահեղ հակահայկական քաղաքականություն, կազմակերպել և ղեկավարել հայկական գյուղերի բռնի տեղահանման և շարժման ճնշման գործողությունները (նույն տեղում, էջ 564):

48 **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջ 112:

49 “Azərbaycan SSR Şaumyan (kənd) rayonunun ləğv edilməsi haqqında” Azərbaycan SSR Ali Soveti rəyasət heyətinin fərmanı (Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը «Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի (...) շրջանի

դրվում ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում Ղարաբաղում վարչատարածքային կացության առաջին լուրջ փոփոխության: Ինչ վերաբերում է բուն ԼՂԻՄ-ին, ապա ԽՍՀՄ փլուզման պահին գործող իրավակարգում վերջինիս կարգավիճակը սահմանված էր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» Ադրբեջանական ԽՍՀ օրենքով (1981 թ. հունիսի 16[50]): Օրենքի երրորդ հոդվածից բխում էր, որ ԽՍՀՄ միասնական իրավատարածքում ԼՂԻՄ սահմանների անձեռնմխելիությունն իրավական տեսանկյունից վճռված և երաշխավորված էր նույն սկզբունքով, որով սահմանված էր Ադրբեջանական ԽՍՀ սահմանների անձեռնմխելիությունը: Այսպես, «… ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի համաձայնության», ինչը ենթադրում էր, որ ԼՂԻՄ-ը սեփական տարածքի վրա ուներ նույնքան ինքնիշխանություն, որքան Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ ԼՂԻՄ-ից դուրս գտնվող հանրապետական տարածքի վրա[51]:

Այս պայմաններում Ադրբեջանն առայժմ զերծ էր մնում ԼՂԻՄ տարածքների հանդեպ վարչական ոտնձգությունից: Պատճառն այն է, որ Ադրբեջանի ղեկավար Այազ Մութալիբովը որոշել էր Ղարաբաղի հարցում կենտրոնի աջակցությունն ապահովելու նպատակով լոյալ քաղաքականություն վարել: Այդ նպատակով 1991 թ. մարտի 17-ին Ադրբեջանը մասնակցեց ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորների համագումարի որոշմամբ (1990 թ. դեկտեմբերի 24) նշանակված հանրաքվեին, որտեղ պետք է որոշվեր Միության պահպանման հարցը[52]: Ըստ արդյունքների՝ Ադր-

---

լուծարման մասին» - *ադրբեջաներեն*), *"Azərbaycan Respublikası Ədliyyə Nazirliyi, Normativ hüquqi aktların vahid internet elektron bazası"*, 14 հունվարի 1991 թ., http://www.e-qanun.az/framework/6480 (հղվել է 03.10.2015).

[50] «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ» մեծարժեք աշխատության մեջ սույն օրենքի ընդունման թվականը սխալմամբ նշված է 1986 թ. (էջ 225):

[51] Մեզ չհաջողվեց ձեռք բերել սույն օրենքի բնօրինակը (տես "Закон Азербайджанской Советской Социалистической Республики о Нагорно-Карабахской автономной области", Баку, 1987), ուստի՝ օգտվել ենք միջնորդ աղբյուրից՝ Закон Азербайджанской ССР о Нагорно-Карабахской автономной области (от 16 июня 1981 г.), *"Правовая папка" карабахского конфликта*, http://www.iatp.am/gharabagh_conflict/pravpap.htm (հղվել է 03.10.2015):

[52] Постановление СНД СССР от 24 декабря 1990 года № 1856-1 «О проведении

բեջանում (բացառյալ Նախիջևանը) մասնակցության աստիճանը կազմել էր 75.1 տոկոս, որից 93.3 տոկոսը կողմ էր քվեարկել նորացված Միության պահպանմանը[53]: Հայաստանը բոյկոտեց հանրաքվեն: 1990-1991 թթ. հատվածում Մոսկվայի հանդեպ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության որդեգրած քաղաքականությունների տարբերությամբ է բացատրվում Ղարաբաղի հարցում ռուսական կողմի մոտեցումը և «Օղակ» («Կոլցո») գործողության կյանքի կոչումը:

Այսպիսով, ուսումնասիրելով պատերազմի առաջին շրջանը՝ կարելի է արձանագրել, որ թեպետ համակարգված հայեցակարգային կամ փաստաթղթային որևէ ամրագրում այդ շրջանի ադրբեջանական գործողությունները չունեն, որին հնարավոր է հղում կատարել, այնուամենայնիվ, դեպքերը վերլուծելով՝ հստակ է դառնում այն եզրահանգումը, որ հակամարտության այս պարբերաշրջանում **թշնամու նպատակն էր մշտական ճնշումների, պարբերական հարձակումների և զինաթափումների, շրջափակման և կոմունիկացիոն ահաբեկչության միջոցով խափանել ԼՂԻՄ հայության ինքնորոշումը:**

«Օղակ» գործողության իրականացմամբ սկսվում է հակամարտության **երկրորդ շրջանը**: Ադրբեջանի մարտավարությունն այս շրջանում նկատելի փոփոխություն ապրեց, այն է՝ Արցախից հայերի դուրսքշման միջոցով հօգուտ իրեն լուծել հարցը: Փաստացիորեն ցեղասպանական այս գործողությունը տևեց ընդուպ մինչև օգոստոս: Ապրիլի 30-ից մայիսի 8-ը տեղահանվեցին վարչականորեն Խանլարի շրջանում գտնվող Գետաշեն և Մարտունաշեն գյուղերը[54], մայիսի 13-16-ը՝ Հադրութի շրջանի Ջրա-

---

референдума СССР по вопросу о Союзе Советских Социалистических Республик», *Ведомости СНД и ВС СССР*, 1990, № 52, էջ 1161.

[53] Azərbaycanda bu gün (Այս օրը Ադրբեջանում – *ադրբեջաներեն*), *"Lent.az"*, http://news.lent.az/news/119236 (հղվել է 03.10.2015).

[54] Հարևան Ազատ և Կամո գյուղերը հայաթափվել էին տակավին 1990 թ. փետրվարին: Այստեղ առհասարակ տեղին է նշել, որ ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ներքին զորքերի աջակցությամբ ադրբեջանական օմօնականների բռնաճնշիչ գործողություններն «անձնագրային ռեժիմի հսկողության» քողի տակ սկսվել էին տակավին 1990 թ. փետրվարից և որոշակիորեն արձագանքն էին ԼՂԻՄ և ՀԽՍՀ վերամիավորման որոշման: Այնուամենայնիվ, այդ շրջանում թշնամու գործողությունների հիմնական նպատակը ահաբեկումն էր (խուզար-

բերդ, Քարինգ, Առաքյուլ, Բանաձոր, Կարմրաքար, Սարալանջ, Արևշատ, Քարագլուխ, Մյուլքադար, Պետրոսաշեն[55], Ծամձոր, Ցոր, Խանձաձոր, Շուշիի շրջանի Եղցահող, Ծաղկաձոր, Հինշեն գյուղերը, հուլիսի 6-ից օգոստոսի 19-ը՝ Շահումյանի շրջանի էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերը[56]: «Օղակի» ընթացքում բնակավայրերը պաշարելու և զինաթափելու «սև գործը» հիմնականում իրականացնում էին ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության ներքին զորքերը և ՋՈՒ տարբեր ստորաբաժանումները (այդ թվում՝ զրահատեխնիկա և օդուժ)՝ բաղկացած հիմնականում էթնիկ ռուսներից և ուկրաինացիներից, իսկ ադրբեջանցի օմօնականները ներխուժում, ավերում և թալանում էին բնակավայրերը, բռնաբարում, սպանում և տեղահանում բնակիչներին[57]: «Օղակ» գործողության ընթացքում ընդհանուր թվով հայաթափվեց 23 հայկական գյուղ[58]: Չնայած շոշափելի կորուստներին՝ «Օղակ» գործողությունը նպաստեց, որ հայկական ինքնապաշտպանական ուժերը գործեն ավելի կազմակերպված, համախմբվեն միասնական ռազմական օրակարգի շուրջ և ստանան առաջին մարտական մկրտությունը:

«Օղակի» ավարտը և Ղարաբաղում իրադրության նորովի զարգացումը կախված էին ռուսական գործոնի ազդեցության փոփոխությամբ: 1991 թ. օգոստոսի 18-21-ին Մոսկվայում պետական հեղաշրջման և նոր միութենական պայմանագրի տապալումը

կություններ, տղամարդկանց ձերբակալում, թալան, խորհրդային զինվորների կողմից հայերի վաճառք ադրբեջանցիներին, բերքի և ունեցվածքի փչացում), իսկ «Օղակի» ժամանակ հիմնական մարտավարություն դարձավ գյուղերի հայաթափումը, ասել է թե՝ ինքնորոշման իրավունքի կրողներին վերացնելով՝ Ղարաբաղը վերջնականապես Ադրբեջանին կցելը:

55 Դեռ դարասկզբին Պետրոսաշենը կարևոր դիրք էր զբաղեցնում այն առումով, որ կապող օղակ էր Զանգեզուրի և Ղարաբաղի միջև: 1918 թ. աշնանը՝ Անդրանիկի՝ կեսկատար մնացած ղարաբաղյան արշավանքից հետո, թյուրքերը գրոհեցին և գրավեցին նաև Պետրոսաշենը՝ էլ ավելի բարդացնելով հայկական զույգ երկրամասերի միջև կապը (**Վրացյան Սիմոն**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 329):

56 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 695:

57 Նույն տեղում:

58 **Դևրիկյան Տիգրան**, Կողմերը մնացին դեմ հանդիման, *«Հայ կինվոր»*, 10 (926), 15.03.2012 - 21.03.2012, http://www.hayzinvor.am/12277.html (հղվել է 04.10.2015):

փաստացիորեն ազդարարեցին ԽՍՀՄ գոյության աստիճանական դադարումը: Դա զգացվեց նաև երկրաքաղաքական առումով կայսրության ծայրամաս հանդիսացող Ղարաբաղում, որտեղ խորհրդային զորքերը սեպտեմբերից սկսած[59] գրեթե դադարեցին մասնակցություն ունենալ ռազմական գործողություններին[60]: Հեղաշրջման անհաջող փորձից հետո Լեռնային Ղարաբաղից հեռացել էր նաև հանրապետական կազմկոմիտեի ղեկավար Պոլյանիչկոն[61]: Արմատապես փոխվեց նաև քաղաքական կացությունը. Ադրբեջանը, որտեղ Այազ Մութալիբովը հավանություն էր տվել պետական հեղաշրջմանը, վերջինիս պարտությունից հետո ընդունեց հռչակագիր Ադրբեջանական Հանրապետության պետական ինքնիշխանության վերականգնման մասին և որոշում՝ այդ հռչակագիրն ընդունելու մասին[62]: Եվս երեք օր անց՝ սեպտեմբերի 2-ին, ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային ժողովրդական լիազոր ներկայացուցիչների համատեղ նստաշրջանը որոշում կայացրեց ընդունել հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրա-

---

[59] 1991 թ. օգոստոսին ուշագրավ դեպք պատահեց Հաթերքում, որ խորհրդանշական առումով համարվում է Ղարաբաղում ՄՀՆՋ-ի նահանջի սկիզբը: Օմօնականների կողմից շրջապատված գյուղի կանայք՝ մեկտեղված «Փառանձեմ» անվամբ ազատագրական խմբակում, ամսի 13-ին գերի վերցրին, զինաթափեցին ռուս օմօնականների մի ամբողջ զորաջոկատ՝ զինամթերքով և ռազմական մեքենաներով հանդերձ՝ պահանջելով ազատ արձակել իրենց գերեվարված համագյուղացիներին: Կանայք հեռագիր հղեցին Ելցինին և Գորբաչովին՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումը և միաժամանակ սպառնալով, որ «եթե հարձակման փորձ լինի, մենք մեզ ու ձեր զինվորներին կպայթեցնենք միանգամից»: Այս գործողության շնորհիվ՝ ազատ արձակվեց ամսի 13-ին պատանդ վերցված հաթերքցի Գևորգ Պետրոսյանը, և օմօնականներն ընդմիշտ հեռացան տարածքից (տես **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջք 262-263, ինչպես նաև Կանանց պահանջը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 17 օգոստոս 1991, թիւ 175(238), էջ 1):

[60] **Степанян К.**, Карабахский конфликт..., նույն տեղում:

[61] **Յալանուզյան Մ.**, Անկախության ժամանակագրություն..., նույն տեղում:

[62] Որոշման և հռչակագրի տեքստը տես Azərbaycan Respublikasının dövlət müstəqilliyini bərpa etmək haqqında Bəyannamə barəsində Azərbaycan Respublikasi Ali Sovetinin qərarı (Ադրբեջանական Հանրապետության պետական ինքնիշխանության վերականգնման մասին հռչակագրի վերաբերյալ Ադրբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի որոշումը - *ադրբեջաներեն*), «Azərbaycan Respublikası Ədliyyə Nazirliyi, Normativ hüquqi aktların vahid internet elektron bazası», 30 օգոստոսի 1991 թ., http://www.e-qanun.az/framework/6592 (հղվել է 05.10.2015):

պետության (ԼՂՀ) հռչակման մասին[63]:

Այսպիսով սկսվում է պատերազմի **երրորդ շրջափուլը**, որը դարձակետային էր պատերազմի հետագա տրամաբանության որոշարկման տեսանկյունից: Շրջափուլի հենց սկզբից ակնհայտ դարձավ, որ հայկական և ադրբեջանական կողմերը մնացել են դեմ հանդիման, և որ «հավասարակշռողի» դեր կատարող երրորդ կողմը չունի այն ուղղակի ազդեցությունը, որ ուներ մինչ այս: Ինչպես վերևում նշվեց, սեպտեմբերից սկսած՝ խորհրդային զորքերի ուղղակի մասնակցությունը ռազմական գործողություններին գրեթե դադարեց: Սրա փոխարեն Մոսկվան փորձեց հակամարտության գոտում ազդեցությունը չկորցնելու համար առաջանալ դիվանագիտական դաշտում:

Այդ նպատակով 1991 թ. սեպտեմբերի 21-23-ին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինը և Նուրսուլթան Նազարբաևն այցելեցին տարածաշրջան, եղան Երևանում, Ստեփանակերտում, Գյանջայում, Բաքվում, ինչի արդյունքում սեպտեմբերի 23-ին հյուսիսկովկասյան Ժելեզնովոդսկ քաղաքում Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի և Ղազախստանի ղեկավարների կողմից ստորագրվեց համատեղ կոմյունիկե: Ժելեզնովոդսկյան հանդիպմանը ԼՂՀ ներկայացուցիչները մասնակցում էին դիտորդի կարգավիճակով[64]: Կոմյունիկեն բաղկացած էր տասը կետից և, ըստ էության, պարունակում էր զուտ օրվա հրամայականով թելադրված կարճաժամկետ կարգավորումներ՝ անտես առնելով հակամարտության էութենական ծագումն ու կարգավորումը: Առաջին կետով նախատեսվում էր մինչև 1992 թ. հունվարի 1-ը ԼՂ տարածքից բոլոր զինված կազմավորումների դուրսբերումը՝ բացառությամբ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և ԽՍՀՄ ՊՆ ներքին զորքերի զորամասերի: Երրորդ կետով նախատեսվում էր բռնագաղթի ենթարկված բնակչության վերադարձը գյուղեր, չորրորդով՝ պատանդների ազատ արձակումը: Հինգերորդ կետով նախատեսվում էր բոլոր տեսակի հաղորդակցային ենթակառուցվածքների նորմալ կենսագործունեությունը: Հաջորդիվ (6-րդ

[63] Որոշման և հռչակագրի տեքստը տես **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջք 267-268:

[64] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 214:

կետ) նախատեսվում էր Ռուսաստանի և Ղազախստանի ներկայացուցիչներից ստեղծել ինֆորմացիոն խումբ, որը լիազորված կլինի պատրաստել հակամարտության գոտու իրադարձությունների պաշտոնական ինֆորմացիան[65]:

Սույն փաստաթուղթը դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների վերջին փորձն էր հակամարտության կարգավորման ղեկը ստանձնելու, սակայն իրականությունն արդեն փոխված էր, և կոմյունիկեն, որպես այդպիսին, մնաց թղթի վրա: Այդ փաստաթղթի թողած միակ հետևանքն այն էր, որ վերջինիս հիմքում ընկած սկզբունքները հետագայում շատ հաճախ կիրառվեցին միջնորդական այլ խմբերի կողմից[66]: Ուշագրավ է ժելեզնովոդսկյան գործընթացի վերաբերյալ ԼՂՀ գործադիր կոմիտեի նախագահ Լեոնարդ Պետրոսյանի հարցազրույցը «Դրոշակին», որտեղ, պատասխանելով այն հարցին, թե ինչ միջոցներով պետք է վերացվի լարվածությունը, վերջինս հայտարարեց. «… Եթե այդ խնդիրը (խաղաղության և կարգ ու կանոնի հաստատումը – *Է.Է.*) իրենք (խորհրդային/ռուսական զորքերը – *Է.Է.*) չկարողանան լուծել, եթե ներքին զորքերը չստանձնեն հայերի պաշտպանությունը …, այդ դեպքում մենք մտածելու ենք սեփական ուժերով պաշտպանություն կազմակերպելու մասին»[67]: Ռազմադաշտային գործողությունների իրական ընթացքն ու տրամաբանությունն ավելի մոտ էին վերոբերյալ հարցազրույցի տրամաբանությանը:

Իսկ պատկերն այսպիսին էր: 1991 թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը «Ադրբեջանական Հանրապետության անվտանգությունն ապահովելու նպատակով» հրամանագիր ստորագրեց Պաշտպանության խորհրդի ստեղծման մասին[68]: Եվս 10 օր անց՝ հոկտեմբերի 9-ին, Ադրբեջա-

---

[65] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն…, էջք 270-271:

[66] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ…, էջ 214:

[67] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն…, էջք 271-272:

[68] “Azərbaycan Respublikası Müdafiə Şurasının yaradılması haqqında” Azərbaycan Respublikasi prezidentinin fərmanı (Ադրբեջանական Հանրապետության նախագահի որոշումը «Ադրբեջանական Հանրապետության պաշտպանության խորհրդի ստեղծման մասին» - *ադրբեջաներեն*), «Azərbaycan Respublikası Ədliyyə Nazirliyi, Normativ hüquqi aktların vahid internet elektron bazası», 29 սեպտեմբե-

նի Գերագույն խորհուրդն արտահերթ նիստում որոշում ընդունեց ազգային ինքնապաշտպանական ուժերի ստեղծման մասին[69]՝ վերջնականապես հիմքը դնելով ազգային բանակաշինության գործընթացին: Ղարաբաղի տարածքում ադրբեջանական բանակի ստորաբաժանումները ձևավորվում էին դեռևս 1989 թ.-ից տարածքում առկա օմօնականների և ժողովրդական զինված խմբավորումների հիմքի վրա: Հայկական կողմից պատերազմի կազմակերպումն առայժմ ընթանում էր ինքնապաշտպանական ուժերի գործակցության միջոցով՝ թույլ կենտրոնացված հրամանատարությամբ: Առաջին քայլն այս ուղղությամբ արվեց 1991 թ. դեկտեմբերի 17-ին. Ստեփանակերտում Լեոնարդ Պետրոսյանի գլխավորությամբ ստեղծվեց ինքնապաշտպանության կոմիտե[70]:

Ինչ վերաբերում է 1991 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ուժերի դասավորությանն ու ճակատային գծին, ապա Մարտունիում շրջկենտրոնը հայտնվել էր պաշարման մեջ. ադրբեջանաբնակ Ղարադաղլու, Ամիրանլար, Վեյսալու գյուղերից անընդհատ հրետակոծվում ու գնդակոծվում էր Մարտունի քաղաքն ու շրջակա գյուղերը՝ Խնուշինակը, Ճարտարը, Գիշին[71]: Մարտակերտում նույնպես բարդ էր սահմանային գյուղերի վիճակը. Չափարը, Գետավանը, Զարդախաչը մշտապես վտանգված էին Աղդաբանի, Իմերեթ-Գերվենդի և Ումուդլուի կողմից: Սեպտեմբերի վերջին Շահումյանում հարձակման ենթարկվեցին Կարաչինարը և Մանաշիդը, ամսի 25-ին Շուշիից հրետակոծման ենթարկվեցին Քարինտակը, Շոշը և Ստեփանակերտը, Խոջալուից՝ Ասկերանն ու Նորագյուղը, իսկ ադրբեջանական օմօնականները փորձում էին ներթափանցել Ստեփանակերտի արվարձաններ: Արդեն 1991 թ. դեկտեմբերից համակարգված հրետակոծման էր ենթարկվում ԼՂՀ ամբողջ տարածքը: Թշնամու հիմնական կրակակետերն էին

րի 1991 թ., http://www.e-qanun.az/framework/6671 (հղվել է 16.10.2015).

69 Qarabağ tarixinin salnaməsi (1991-ci il) (Ղարաբաղի պատմության մատենագիտություն (1991 թ.) - *ադրբեջաներեն*) (ժամանակագրություն), «Azərbaycançılıq - milli eyniyyətdən qlobal dünyaya pəncərə» tədqiqat və təbliğat platformu, http://azerbaycanli.org/az/page643.html (հղվել է 17.10.2015).

70 **Դևրիկյան Տ.**, Կողմերը մնացին դեմ հանդիման..., նույն տեղում:

71 **Առաքելյան Սերժ**, Եվ խաղաղ են բացվում առավոտները, *«Հայ փնվոր»*, http://www.hayzinvor.am/20735.html (հղվել է 18.10.2015):

Շուշին[72], Խոջալուն, Աղդամը, Ղայբալուն, Մալիբեյլին, Ջանհասանը, Ավդալը, Գյուլաբլրն: Բացի այս, Ստեփանակերտի բնակիչները դիպուկահարների կրակի էին ենթարկվում նաև Կրկժանից՝ այդ ժամանակվա Ստեփանակերտի ադրբեջանաբնակ արվարձանից[73]: Հաղրութում, որտեղ «Օղակ» գործողության ընթացքում գրավվել էր 13 հայաբնակ գյուղ, իրավիճակն ավելի բարդ էր, քանզի օգտվելով նոր գրավված տարածքների գերիշխող դիրքերից՝ թշնամին գնդակոծում էր շրջանի մնացած բնակավայրերը[74]:

Ռազմադաշտային նման կացությունը հուշում էր ապագա գործողությունների տրամաբանությունը. **թշնամին պետք է փորձեր հենվել ունեցած դիրքերի վրա և քայլ առ քայլ հայերին քշել շրջանի բնակավայրերից, իսկ հայկական կողմի խնդիրն էր լինելու ոչնչացնել և վերահսկել այն բոլոր հաղորդակցային ուղիները, բարձունքները, կրակակետերի վերածված ադրբեջանաբնակ և հայաթափված բնակավայրերն ու շրջանները, որտեղից թշնամին սպառնում էր Արցախի և Սյունիքի հայկական բնակավայրերին**: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հայ-ադրբեջանական պատերազմը հայկական կողմի համար պաշտպանական էր[75], և անգամ հարձակողական և հակահարձակողական գործողու-

---

[72] 1991 թ. նոյեմբերից մինչև 1992 թ. մայիսի սկիզբն ադրբեջանական կրակակետերից, գերազանցապես՝ Շուշիից, Ստեփանակերտի վրա արձակվել է շուրջ 4741 արկ, որից մոտ 3 հազարը՝ «Գրադ» կայանքից: Հրետակոծությունների հետևանքով զոհվել է 111 և վիրավորվել 332 մարդ, ավերվել են 370 բնակելի տուն և շինություն (**Աբրահամյան Հ.**, Կամավորական ջոկատներից մինչև..., էջք 128-129): Ի պատասխան սրա՝ հայկական ուժերը Շոշ գյուղից «Ալազան» հրթիռներով կրակում էին Շուշիի վրա և միևնույն ժամանակ 1992 թ. գարնանից փակ պահում Ստեփանակերտ-Շուշի ճանապարհը՝ կանխելով զենք-զինամթերքի և դիզելային վառելիքի փոխադրումն ադրբեջանական վերահսկողության տակ գտնվող տարածք: Ադրբեջանը Շուշիի մատակարարումն իրականացնում էր Ղուբաթլու-Լաչին-Շուշի հարավարևմտյան ճանապարհով, որը հայկական ուժերը փորձում էին գնդակոծել Քարինտակի շրջակայքից (**Պետրոսյան Ռ.**, Արցախի պաշտպանության դիրքերում..., էջք 152-153): Այնուամենայնիվ, խափանարարական միջոցառումները բավական չէին Շուշիից եկող վտանգը կանխելու համար, և քաղաքի ազատագրումը հրամայական էր:

[73] **Степанян К.**, Карабахский конфликт..., նույն տեղում:

[74] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 586:

[75] «Պաշտպանական» եզրույթը մակաբերվել է տրամաբանական մտահանգմամբ: Սույն համաշարում այն չի հավակնում արտահայտել մասնագիտական՝ ռազմագիտական, եզրույթի իմաստ:


ՂԱՐԱԲԱՂԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ (1991-94 թթ.)
ՍԵՎԱՆԻ ԼԵՃ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԱՏԱՄԱՐՏԻՆ ՄԱՍ
ԱԶԱՏԱՄԱՐՏԻՆ ՄԱՍ
ԱՍՏԱՂԱԿԵՐՏ
ՄԱՐՏՈՒՆԻ
ՇՈՒՇԻ
ԼԱՉԻՆ
ԳՈՐԻՍ
ՍՈՒՍԱՆ
ՄԱՐԱԼԻԿ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՄԱՐԴԱԿԵՐՏ
ՄԱՐԴԱԿԵՐՏԻ ՄԱՍ
ՄԱՐՏՈՒՆԻ ՄԱՍ
ՄԱՐՏՈՒՆԻ ՄԱՍ
ՄԱՐՏՈՒՆ

թյուններն իրենց բնույթով պաշտպանողական նշանակություն ունեին:

Հարձակողական և հակահարձակողական գործողությունները սկզբնավորվեցին նախկին ԼՂԻՄ-ի տարածքում թշնամական օջախների վերացմամբ՝ որպես անվտանգային առաջնահերթ միջոցառում: Այս փուլում քչերը կարող էին պատկերացնել՝ ինչ կլինի պատերազմի վերջնական արդյունքը, այդ թվում՝ կողմերի միջև սահմանային և ժողովրդագրական պատկերը: Իսկ նման արդյունքը հետևանք էր ադրբեջանական ռազմավարության և դրան հակառակ հայկական կողմի ադեկվատ պատասխանի:

Պատերազմի երրորդ շրջանում հայկական ուժերի հարձակողական-հակահարձակողական գործողությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ ժամանակագրական հաջորդականության և ռազմավարական նպատակադրման.

1991 թ. հոկտեմբերի 30 – Հադրութի շրջանի Տող գյուղի ինքնապաշտպանական ջոկատը, Ստեփանակերտի և Հադրութի կամավորական ջոկատներն Արկադի Տեր-Թադևոսյանի ընդհանուր հրամանատարությամբ գրոհեցին Տող գյուղի ադրբեջանաբնակ հատվածում տեղակայված թշնամու օմօնական զորամասը: Թշնամու օմօնականները բնակչության հետ միասին խուճապահար լքեցին գյուղը: Տողի ազատագրումը բարերար բարոյահոգեբանական ազդեցություն թողեց Հադրութի շրջանի ինքնապաշտպանական ուժերի և բնակչության վրա:

1991 թ. նոյեմբերի 15 – Տողի ազատագրմանը հաջորդեց Հադրութի շրջանի Սարինշեն և Ցոր գյուղերի, ինչպես նաև մերձակա հեռուստաաշտարակի բարձունքի ազատագրումն Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարությամբ գործող ինքնապաշտպանական ուժերի կողմից: Նույնն օրն ազատագրվեց նաև հարևան Ծամձոր գյուղը:

1991 թ. նոյեմբերի 16-17-20 – Զարգացնելով հաջողությունը՝ Հադրութում հայկական ուժերն ազատագրեցին Էղիլլուն (ներկայումս՝ Ուխտաձոր), Սալաքյաթինը և Քարագլուխը:

1991 թ. նոյեմբերի 19 – Ազատագրվեց Մարտունի քաղաքի ադրբեջանաբնակ հատվածը՝ Խոջավենդը:

1991 թ. դեկտեմբերի 11 – Հայկական ինքնապաշտպանական ուժերը թշնամուց ազատագրեցին Շահումյանի շրջանի Թոդան գյուղը:

1991 թ. դեկտեմբերի 23 - Ազատագրվեց Ասկերանում ադրբեջանական գլխավոր հենակետերից Լեսնոյե/Մեշալի գյուղը: Առավոտից մինչ ուշ երեկո տևած գործողության ընթացքում ոչնչացվեցին 27 օմօնականներ, 30-ը վիրավորվեցին: Հայկական կողմից զոհվեց 1 ազատամարտիկ, 2-ը վիրավորվեցին: Տեղին է նշել, որ Մեշալիի թյուրքերը 1960-ականներին Բաքվի քաղաքականության հետևանքով այստեղ էին տեղափոխվել Քյալբաջարի և Լաչինի շրջանից[76]:

Նույն օրն ինքնապաշտպանական ուժերն ազատագրեցին Մարտակերտի շրջանում գտնվող Ումուղլու գյուղը (ներկայումս՝ Ակնաբերդ), իրո ճարակ դարձրին Իմերեթ-Գերվենդի դեռևս կանգուն հատվածը:

1991 թ. դեկտեմբերի 24 – Ազատագրվեց Մարտակերտի շրջանում գտնվող և ռազմավարական առումով կարևոր դիրք ունեցող Սրխավենդը:

1991 թ. դեկտեմբերի 26-27 – Սկսվեց Կրկժանի ռազմական հենակետերի վնասազերծման օպերացիան:

1992 թ. հունվարի 7 – Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղի ինքնապաշտպանական ուժերը և Էջմիածնի կամավորական ջոկատը կասեցրին թշնամու հարձակումը Ակնաղբյուրի ուղղությամբ և հակագրոհով ազատագրեցին Հախբլլու գյուղը:

1992 թ. հունվարի 19-22 – Հայկական ինքնապաշտպանական ուժերն առանց կորուստների վերջնականապես կործանեցին Կրկժանի բլուրների վրա ամրացած օմօնականների դիրքերը:

1992 թ. հունվարի 26 – Քարինտակ գյուղի կամավորական ուժերը ժամեր տևած անհավասար մարտում կարողացան մեծաքանակ կորուստներ պատճառել թշնամուն և անառիկ պահել գյուղը:

1992 թ. փետրվարի 9-11 – Հայկական ինքնապաշտպանական ուժերն ազատագրեցին Ստեփանակերտ-Մարտունի ճանա-

---

[76] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն..., էջք 297-298:

պարիի վրա ընկած և կրակակետերի վերածված Մալիբեյլին և հարևան Ղուշչիլարը:

1992 թ. փետրվարի 17 – տեղի ինքնապաշտպանական ուժերը «Արաբո» ջոկատի հետ միասին ազատագրեցին Մարտունիի շրջանի մի շարք հայկական գյուղերի մեջ սեպի պես խրված Ղարադաղլու գյուղը (ներկայումս՝ Վարանդա), որտեղից հսկողության տակ էր պահվում Մարտունի-Ստեփանակերտ ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին:

1992 թ. փետրվարի 22 – Դարձյալ Մարտունիի շրջանում ազատագրվեց Յուխարը Վեյսալու ադրբեջանաբնակ գյուղը, որտեղից սկսած 1991 թ. դեկտեմբերի 16-ից[77]՝ հարձակումներ էին իրականացվում Ճարտարների ուղղությամբ:

1992 թ. փետրվարի 25-26 – Ազատագրվեց Ասկերանին և Ստեփանակերտին սպառնացող Խոջալուն և Ստեփանակերտի օդանավակայանը:

1992 թ. ապրիլի 8 – Լեոնիդ Ազգալդյանի ղեկավարած «Ազատագրական բանակ» կամավորական ջոկատն առավոտյան շեշտակի և նախապես փայլուն մշակված գրոհով ազատագրեց Մարտակերտի շրջանի սահմանային գյուղերին սպառնացող Աղդաբան և Չայղովուշան բարձրադիր գյուղերը: Հաջորդ օրն «Ազատագրական բանակը» մեկնեց թշնամու կողմից գրավված Մարաղա գյուղը, և Աղդաբանը վերստին անցավ ադրբեջանական վերահսկողության տակ: Գյուղը վերջնականապես ազատագրվեց 1993 թ. մարտի վերջին՝ քյալբաջարյան օպերացիայի օրերին:

1992 թ. ապրիլ ամիս – Թշնամական հիմնական կրակակետ շարունակեց մնալ Շուշին, որի հետ ռազմավարական գիծ էին կազմում Քյոսալար, Ջանհասան, Կարագյավ գյուղերը[78]:

1992 թ. մայիսի 8-9 – Ազատագրվեց Շուշին:

1992 թ. մայիսի 17-18 – Ազատագրվեցին Լաչին քաղաքը (ներկայումս՝ Բերձոր) և Աղավնոյի գետահովիտը, այսպիսով վերա-

---

[77] **Աբրահամյան Հ.**, Կամավորական ջոկատներից մինչև..., էջք 127-128:

[78] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 14:

«Ազատագրական բանակ» ջոկատի մի խումբ մարտիկներ (1992 թ.): Կենտրոնում Լեոնիդ Ազգալդյանն է

կանգնվեց ցամաքային կապը Արցախի և Զանգեզուրի միջև[79]:

Շուշիի և Լաչինի ազատագրումն ինքնապաշտպանական ուժերի շրջանում վերջնական հաղթանակի պատրանք ստեղծեց: Շատերը համոզված էին, որ դրանով պատերազմն ավարտված է: Բանը հասավ նրան, որ Հայաստանի տարբեր շրջաններից եկած մարտիկների մի մասը վերադարձավ տուն, նույնն արեցին նաև տեղական ջոկատների անդամները՝ անցնելով սովորական աշխատանքային առօրյայի: Սրան զուգահեռ ծայր առավ նաև մեկ այլ արատավոր երևույթ, որ 1992 թ. գարուն-ամառ ամիսներին նկատելիորեն բարոյալքեց զորքը: Խոսքը կուսակցական շահերի բախման ուղղակի ազդեցությունն էր պատերազմի վրա՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ակնհայտ էր, որ ռազմաճակատի կարգավորման հին մեխանիզմը, հատկապես՝ ջոկա-

[79] Հաշվի առնելով նշված զույգ ռազմական գործողությունների գերլուսաբանվածությունը հայաստանյան գիտահրապարակախոսական գրականության մեջ՝ հարկ չենք համարում առանձին կանգ առնել վերջիններիս նկարագրության և ռազմավարական կարևորության վրա:

տային պայքարը սպառել է իրեն: 1992 թ. հունիս-հուլիս ամիսներին թշնամու կազմակերպված հարձակումը հայկական ռազմաքաղաքական ղեկավարությանը ևս մեկ անգամ բերեց այդ մտքին: Ադրբեջանական բանակը, համալրված Գյանջայում տեղակայված խորհրդային դեսանտային զորամիավորումների մնացորդներով, ռազմաճակատի հյուսիսային թևում անցավ ուժեղ հարձակման: Ընկան Շահումյանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Արծվաշենը: Թշնամին նկատելիորեն առաջացավ Հադրութի և Մարտունիի շրջանների ուղղությամբ: Օգոստոսին վիճակն օրհասական դարձավ հատկապես Մարտակերտի ուղղությամբ. վտանգի տակ հայտնվեց ամբողջ շրջանը: Թշնամու մտադրությունն էր բոլոր կողմերից Ղարաբաղն առնել կրակի օղակի մեջ՝ ստիպելով բնակչությանը փախչել: Այս էր պատճառը, որ ընդհուպ մինչև սեպտեմբեր-հոկտեմբեր թշնամին ակտիվ հարձակման չէր դիմում Լաչինով անցնող միջանցքի ուղղությամբ՝ նպատակ ունենալով բաց պահել «փախուստի միջանցքը»:

Թե՛ Երևանում, թե՛ Ստեփանակերտում հասունացավ այն միտքը, որ առանց կանոնավոր զորամիավորումների, կուռ բանակային կարգապահության հաղթանակն անհնար է: ՀՀ-ում դեռ տարեսկզբին՝ հունվարի 28-ին, կառավարության կողմից ընդունվել էր որոշում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին», իսկ առհասարակ տարերայնորեն ձևավորվող կամավորական ջոկատները դեռ 1990 թ. ամռան վերջից մեծ մասամբ ընդգրկվել էին Ներքին գործերի նախարարության համակարգում ստեղծված առաջին կանոնավոր ստորաբաժանման՝ Հատուկ գնդի կազմի մեջ: Գնդի զինվորներն իրականացնում էին սահմանային բնակավայրերի պաշտպանություն, բացի այդ՝ նրանցից շատերը մեկնեցին Արցախ՝ մասնակցելու հայկական բնակավայրերի պաշտպանությանը: Իսկ Ստեփանակերտում 1992 թ. օգոստոսի 12-ին կառավարությունը զորակոչի մասին որոշում ընդունեց, որով բանակ էին զորակոչվում 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ: Օգոստոսի 15-ին Արցախի Գերագույն խորհրդի նախագահության ու Մինիստրների խորհրդի միացյալ նիստը որոշում ընդունեց Պաշտպանության պետական

կոմիտե ստեղծելու մասին[80]: Վերջինիս վերապահվեց պատերազմի տարիներին գործադիր իշխանության և ռազմական դրության իրականացման լիազորությունները[81]: Նույն օրը ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը հանդես եկավ հեռուստատեսային կոչով՝ հորդորելով Հայաստանի յուրաքանչյուր շրջանից հավաքագրել 10-15 կռվող տղաների, որոնցից կազմվելու էր մահապարտների գումարտակ: Կարճատև մարզումներից հետո Երևանից Ստեփանակերտ մեկնած 375 մահապարտները, չնայած ծանր կորուստներին՝ անգնահատելի դեր ունեցան Մարտակերտի շրջանում թշնամու հարձակումը կասեցնելու, Չլդրան, Վաղուհաս, Հարությունագոմեր գյուղերը մեկընդմիշտ ազատագրելու և Սարսանգի ջրամբարի անվտանգությունն ապահովելու հարցում: Արցախ մեկնելուց երկու ամիս անց Երևան վերադարձավ ընդամենը 83 մահապարտ. մի մասը զոհվել էր, մեծ մասը՝ վիրավորվել[82]…

Մինչև 1992 թ. ռազմաճակատի հիմնական ուղղությունը Մարտակերտն էր: Թշնամին իր հերթին փոխել էր մարտավարությունը և աշնան-ձմռան ամիսներին Քյալբաջարից (Ղոչազ-Հոչանցի ուղղություն[83]) և Ղուբաթլուից («Ստրոյկայի» և «Կոբրայի դիր-

---

80 Պատերազմի գրագետ կազմակերպման առումով կարևոր էր պաշտպանական շրջանների կազմավորումը, որոնք, չհաշված մասշտաբային տարբերությունը, համահունչ էին Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված ռազմաճակատներին: 1992 թ. օգոստոսի 14-ին ստեղծվեցին Կենտրոնական, Ասկերանի, Հադրութի, Մարտունիի, Մարտակերտի, Շուշիի պաշտպանական շրջանները:

81 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 555:

82 **Էլբակյան Էդգար**, Զինված ուժերի 23-ամյակը և Կարսի անկման դասերը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 29 հունվար 2015, թիվ 13(6059), էջ 4:

83 Ղոչազ (Հոչանց) սարը ռազմավարական ահռելի նշանակություն ուներ Լաչինի շրջանի հյուսիսում: Այս ուղղությամբ ահեղ մարտեր ծավալվեցին հատկապես նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին: 1992 թ. դեկտեմբերի 2-3-ին բարձունքի ազատագրման համար մղված մարտերում զոհվեցին Հրաչ Սուրիկի Թովմասյանը, Վլադիմիր Աղասու Հայրապետյանը (Հովիկ), Արթուր Համլետի Ներսիսյանը, Արտակ Գուրգենի Հովհաննիսյանը, Սարգիս Ռուբենի Հովհաննիսյանը, անհայտ կորավ Էրիկ Մարգարյանը, ընդհանուր առմամբ՝ 12 տղաներ, որոնց դիակները Ներքին գործերի նախարարության հատուկ նշանակության ուժերի և Սյունիքի աշխարհազորայինների շնորհիվ միայն ապրիլին գտնվեցին և հանձնվեցին մայր հողին: Խոշտանգումների հետքեր կրող դիակները դավադրաբար ականապատված էին, և դրանք Ղոչազի վրայից անվնաս հեռացնելու ժամանակ հնարավոր

քերի» ուղղություն) ակտիվ հարձակողական գործողություններ էր իրականացնում Լաչինի ուղղությամբ: Ակնհայտ էր թշնամու նպատակը ոչ միայն կտրելու Լաչինով անցնող միջանցքը, այլև հնարավորության դեպքում գրավելու ամբողջ հարավային Սյունիքը: Այսպես, դեռևս 1992 թ. ապրիլի 24-ից Կապանի շրջանում սահմանային ընդհարումները վերաճել էին իրական պատերազմի: Կապանի հիվանդանոցը սկսել էր գործել նկուղներում: Զանգվածաբար հրետակոծվում էին Կապան քաղաքն ու սահմանամերձ Ներքին Հանդ, Ծավ, Սրաշեն, Շիկահող, Ճակատեն, Գեղանուշ, Սյունիք, Ագարակ, Եղվարդ, Կաղնուտ, Դավիթ Բեկ և Ուժանիս բնակավայրերը: Կառուցված հողային պատնեշները և շրջանցիկ ճանապարհներն ի զորու չէին ապահովելու և երաշխավորելու բնակչության անվտանգությունը: 1992 թ. հունիսին Լուսակերտում տեղակայված ՀՀ ԶՈՒ գնդի հրամանատար Յուրի Խաչատուրովը զորամասի անձնակազմով գործուղվեց Գորիսի, Կապանի, Մեղրիի շրջաններ և զորամասի ստորաբաժանումներով ամրացնելով դիրքերը՝ համակարգեց պաշտպանական ուժերի ղեկավարումը:

Աշնան վերջերին Ներքին Հանդ գյուղի շուրջ 3 կմ-անոց ճանապարհն անցավ ադրբեջանցիների վերահսկողության տակ: Օրակարգային խնդիր էր հավաքագրել գործող բոլոր խմբերն ու ջոկատները, մեկտեղել նրանց գործողությունները և միջոցներ ձեռնարկել վերացնելու հակառակորդի առավել վտանգավոր հենակետերը: 1992 թ. նոյեմբեր ամսին, ի վերջո, կայացվեց համապատասխան որոշումը: ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Հրաչյա Անդրեասյանը մշակեց ռազմավարական ծրագիր, որը նպատակաուղղված էր թշնամուն շրջանի հարակից տարածքներից դուրս շպրտելուն և Կապանը հրետակոծությունից փրկելուն: Օպերացիայի ղեկավար նշանակվեց Յուրի Խաչատուրովը, որի գլխավորությամբ Կապանում ստեղծվեց օպերատիվ շտաբ, որտեղ իրականացվում էին կազմակերպչական աշխատանքները: Երկշաբաթյա հետախուզությունից հետո որոշվեցին հարձակման ուղղությունները՝ Ծուռնուխի ուղղությամբ գեներալ-

---

չեղավ խուսափել վիրավորներից:

մայոր Գուրգեն Դալիբալթայան, Կարմրաքարի ուղղությամբ՝ գեներալ-լեյտենանտ Հրաչյա Անդրեասյան, Կապանի ուղղությամբ՝ Յուրի Խաչատուրով: Նշված գործողությունն իրականացվեց շուրջ կեսժամյա հրետանային պատրաստությունից հետո՝ դեկտեմբերի 10-ի վաղ առավոտյան՝ 06:30-ին: Գործողությանը մասնակցում էին Կապանի սահմանապահ գումարտակը, Սիսիանի, Վանաձորի, «Արաբո», «Սև հովազ» ջոկատները, որոնց հաջողվում է մի քանի ժամ տևած մարտերից հետո լիակատար պարտության մատնել թշնամուն: Մաքրագործվեցին կրակակետերի վերածված շուրջ 10 աղրբեջանաբնակ գյուղեր՝ Աղքենդը, Ղազանչին, Սայիդլարը, Գյունդշլաղը, Դարալին, Ջանբարը, Շայրֆլը, Փիրվեյսլին, Աշաղը և Յուխարը Յեմեզլին: Ղուբաթլուի ուղղությամբ ակտիվ կանխարգելիչ գործողություններ էին իրականացվում Էյին (Ակն), Չարդախլու, Աշաղը և Յուխարը Ջիբիքլի (Ներքին և Վերին Ճապկուտ) գյուղերի ուղղությամբ, որոնք իշխող դիրք ունեին Դավիթ Բեկ և Շուռնուխ գյուղերի նկատմամբ:

Կապանի օպերացիայի շնորհիվ բացվեցին Ներքին Հանդ, Ծավ, Ագարակ և Եղվարդ գյուղերի ճանապարհները: Զանգելանյան «կույրաղիքի» վերացումը և ռազմավարական բարենպաստ դիրքերի գրավումը կարևոր դեր խաղացին ապագայում նշված երկու շրջաններն ազատագրելու հարցում[84]: Բացի այդ, Շահումյանի, Մարտակերտի անկումից հետո և Լաչինի ուղղությամբ ծանրագույն մարտերի պայմաններում Կապանի օպերացիայի հաջողությունն էապես բարձրացրեց զորքի տրամադրությունը և հող նախապատրաստեց քյալբաջարյան հարձակման համար[85]:

Թե՛ Կապանի օպերացիան, թե՛ քյալբաջարյան օպերացիան հարկ է դիտարկել մեր կողմից վերոբերյալ պաշտպանական պատերազմի տրամաբանության մեջ: Առաջինը նպատակ ուներ ապահովելու Սյունիքի անվտանգությունը, իսկ երկրորդը՝ վերաց-

---

[84] **Էլբակյան Էդգար**, Պատերազմի շատ կարևոր մի էջը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 11 դեկտեմբեր 2014, թիվ 225(6034), էջ 3:

[85] Այս երկու գործողությունների նախաձեռնման և առհասարակ 1992 թ.-ի աշնանը բանակի և պատերազմի ճիշտ կազմակերպման հարցում նշանակալի էր պաշտպանության նորանշանակ նախարար Վազգեն Մանուկյանի դերակատարությունը:

նելու թշնամու լաչինքյալբաջարյան խմբավորումը, որ սպառնում էր Մարտակերտի և Վարդենիսի շրջաններին: Ինչպես և Կապանի օպերացիայի, այնպես էլ Քյալբաջարի ազատագրման որոշումն ընդունվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի ամենաուղղակի միջամտությամբ: 1992-1993 թթ. ձմռանը ռազմաճակատը հավասարակշռելուց հետո՝ փետրվարին, հայկական ուժերը ձեռնամուխ եղան Մարտակերտի ազատագրմանը, որն անհնար էր առանց Քյալբաջարի ազատագրման: Վերջինիս գրոհը կազմակերպվեց երեք ուղղություններով: Վարդենիսի շրջանից կանխարգելիչ գործողությունները ղեկավարում էին Գուրգեն Դալիբալթայանը և Հրաչյա Անդրեասյանը: Մարտակերտ-Վանք-Չարեքտարի կողմից գրոհը ղեկավարում էր լեգենդար Ավոն՝ ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը: Հարձակման երրորդ ուղղությունը՝ Լաչին - Նարնջլար (Նարեշտար) - Զյուլֆյուղարլի (Զուար), ղեկավարում էր Յուրի Խաչատուրովը: Պաշարված ադրբեջանական քյալբաջարյան խմբավորմանը Գյանջայի կողմից եկող օգնական ուժն իր հերթին հանդիպեց հայկական ուժերի դիմադրությանը, և շրջանին վերատիրելու ջանքերն անցան ապարդյուն[86]: Ապրիլի 5-ին հայկական ուժերը վերահսկողություն հաստատեցին Օմարի լեռնանցքի նկատմամբ[87]: Տեղին է նշել, որ ռազմագործողության առաջին իսկ օրերից խաղաղ բնակչության զգալի մասը, ներառյալ՝ զինվորականությունը, հեռացել էին քաղաքից, իսկ շրջանում և հատկապես՝ շրջկենտրոն Քյալբաջարում մնացած սակավաթիվ բնակչությանը, հիմնականում՝ կանանց և ծերերին, տրվեց ազատ նահանջի իրավունք[88]:

---

[86] **Էլբակյան Էդգար**, 21 տարի առաջ ազատագրվեց Քարվաճառը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 4 ապրիլ 2014, թիվ 58(5867), էջ 5:

[87] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջ 665:

[88] Պահպանվել են այն վավերագրական կադրերը, որտեղ Մոնթեի զինվորներից Մուշկապատցի Աբոն (Աբրիկ Ռուբենի Հայրապետյան) ադրբեջաներենով իրազեկում է ադրբեջանական քաղաքացիական բնակչությանը, որ «Հայաստանի զորքերը մտել են Քյալբաջարի շրջան և Լաչինի հյուսիսային գյուղեր: Մենք խաղաղ բնակիչներին ճանապարհ ենք տալիս, ճանապարհները փակ են, այսպես թե այնպես դուք փախչելու այլ տեղ չունեք: Մենք խաղաղ բնակիչներին չենք սպանելու, տասը ժամ ժամանակ ենք տալիս ձեզ» (տես Ermənistan ordusu kurtulmuş Kəlbəcərdə (indiki Karvacar) qalan sakinlərə yol verir («Հայաստանի բանակն

Քյալբաջարյան օպերացիայի հաջող ընթացքից հետո հայկական հրամանատարությունը հնարավորություն ստացավ մեկտեղելու և կոորդինացնելու Մարտակերտի և Աղդամի ազատագրման գործողությունները: Առհասարակ պատերազմի տարիներին Աղդամի կարևորությունը երկու կողմերի համար էլ կտրուկ աճեց: Բացի այն, որ քաղաքը գտնվում էր հարթավայրային մասում և տանկային հարձակումների համար հարմար ելակետ էր, այն նաև հաղորդակցային կարևոր հանգույց էր: Եվլախից Նախիջևան, Ֆիզուլիից Մարտակերտ բոլոր ճանապարհներն անցնում էին Աղդամով[89]: Սա հավելյալ բարդություն էր ստեղծում հայկական ուժերի համար, քանզի վերահսկողությունը Մարտակերտ - Աղդամ ճանապարհի վրա թույլ էր տալիս թշնամուն պահպանել կապը երկու քաղաքների միջև և չզիջել դիրքերը: Կոորդինացնելով մարտակերտյան և աղդամյան գործողությունները՝ հայկական ուժերը շեղող-հակահարձակողական գործողությունների դիմեցին Աղդամի ուղղությամբ՝ նպատակ ունենալով թշնամու ուժերը գամել այստեղ և հյուսիսից շրջանցելով՝ վերահսկողություն հաստատել Մարտակերտ-Աղդամ մայրուղու նկատմամբ:

1993 թ. հունիսի 12-ին և 15-16-ին հայկական ուժերը հարավից և հյուսիսից հարձակումներ ձեռնարկեցին աղդամյան ուղղությամբ՝ զբաղեցնելով Յուսիֆջանլի, Մարզիլու, ինչպես նաև Ալիմադաղլի, Քյուրդալար, Մոլլալար, Գալայչըլար, Ալիաղալը գյուղերը: Հնարքն աշխատեց, և թշնամին զգալի քանակով խմբավորումներ տեղափոխեց այս ուղղությամբ, ինչի շնորհիվ հունիսի 25 -ին հայկական ուժերին հաջողվեց հյուսիսից օղակել մայրուղին

ազատագրված Քյալբաջարում (ներկայումս՝ Քարվաճառ) մնացած բնակիչներին ազատ ճանապարհ է տալիս - *ադրբեջաներեն*), “YouTube”, “Edgar Elbakyan” ալիք, 26 փետրվարի 2014 թ., https://www.youtube.com/watch?v=4DdmZiCR42k (հղվել է 18.10.2015)):

[89] Արդեն 2006 թվականին, իր «Աղդամի գրավումը» փաստավավերագրական ֆիլմում անդրադառնալով Աղդամի կարևորությանը, ադրբեջանցի լրագրող Անար Յուսիֆովը դառնությամբ պետք է արձանագրեր, որ «... բոլորի հայացքն ուղղված էր Աղդամին, ... քանզի Ղարաբաղ տանող միակ ճամփան Աղդամն էր, ... և առանց Աղդամին տիրելու անհնար էր տիրել Ղարաբաղին» (AĞDAM – İşğal (1 hissə) (Աղդամի գրավումը (մաս 1) - *ադրբեջաներեն*), “YouTube”, “AzeriFighter” ալիք, 23 մարտի 2007 թ., https://www.youtube.com/watch?v=8vWkU7iQMXk (հղվել և ներբեռնվել է 17.10.2015)):

և ազատագրել Փափրավենդ (ներկայումս՝ Նոր Կարմիրավան), Սոֆուլու և Բոյահմեդլի (ներկայումս՝ Նոր Հայկաջուր) գյուղերը: Մեկ օր անց՝ Մաղավուզի, Պուշկենյալի և «Տելեվիշկայի» ուղղությամբ կատաղի մարտերից հետո, արդեն հունիսի 27-28-ին, հայկական ուժերին հաջողվեց մեկամյա օկուպացիայից ազատագրել Մարտակերտ քաղաքը: Աղդամմարտակերտյան այս ռազմագործողության ընթացքում Մարզիլուում (Աղդամի շրջան) և Մաղավուզում (Մարտակերտի շրջան) զոհվեցին տաղանդավոր հրամանատարներ Մոնթե Մելքոնյանը և Կարո Քահքեջյանը[90]:

1993 թ. հուլիսին արդեն մարտերը կենտրոնացան Աղդամի ուղղությամբ: Անհրաժեշտ էր վերահսկողություն հաստատել քաղաքի նկատմամբ բարձր դիրք զբաղեցնող օբյեկտների նկատմամբ, այդ պատճառով հիմնական մարտերը կենտրոնացան Մարտունի-Ստեփանակերտ խաչմերուկի և Ստեփանակերտի հանդեպ գերակա դիրք ունեցող Ուղտասարի (Շելլի), Խրդրլուի, ինչպես նաև «Հանգստյան տան» դիրքերի ուղղությամբ: Այս ուղղություններով կոտրելով թշնամու դիմադրությունը՝ արդեն հուլիսի 22-ին Ասկերանի պաշտպանական շրջանի մարտիկներն Աղդամի մատույցներում էին[91], իսկ ամսի 23-ին Աղդամը լիովին մաքրված էր թշնամուց:

Աղդամն ազատագրված է. 1993 թ. հուլիս

Բնավ չնվազեցնելով 1993 թ. գարուն-ամառ ամիսներին հայկական զորքերի հաջողությունների արժանիքը՝ տեղին է նշել, որ այս շրջանում Հայաստանը նկատելիորեն օգուտ քաղեց նաև Ադրբեջանում հասունացած ներքաղաքական և իշխանական

---

[90] Համապատասխանաբար տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջք 481 և 659:

[91] **Էլբակյան Էդգար**, Աղդամի ազատագրման պատմական դասերը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 25 հուլիս 2015, թիվ 139(6185), էջ 5:

սուր ճգնաժամից: Քյալբաջարի անկումը ծայրահեղ կերպով վատացրեց Ադրբեջանի զորքի և իշխանական շրջանակներում բարոյահոգեբանական կացությունը. սկսվեցին կաղրային զտումներ, Բաքվում մտցվեց պարետային ժամ: Պաշտպանության նախարար Ռահիմ Ղազիևն ազատվեց պաշտոնից[92]: Փոխարենն աճել էր Գյանջայում տեղակայված հրամանատար Սուրաթ Հուսեյնովի հեղինակությունը: Վերջինս, պատերազմի սկզբում չունենալով ռազմական կրթություն, հավաքագրել էր կամավորների ջոկատ և մասնակցել Մարտակերտի գրոհին: Այդ կապակցությամբ 1992 թ. հուլիսի 2-ին նախագահ Էլչիբեյի հրամանագրով ստանձնել էր փոխվարչապետի լիազորությունները և նշանակվել Ադրբեջանի նախագահի արտակարգ և լիազոր ներկայացուցիչը Ղարաբաղի և հարակից շրջանների հարցով[93]: Սակայն 1993 թ. փետրվարին՝ մարտակերտյան ուղղությամբ հայկական կողմի հակահարձակման օրերին, հակասություն առաջացավ Բաքվի և Հուսեյնովի միջև, որի ինքնակա գոյությունն ու իշխանությունը մտահոգում էր Էլչիբեյին: Այս ամենի հետևանքով Հուսեյնովն ազատվեց զբաղեցրած պաշտոնից[94]:

Ի պատասխան սրա՝ վերջինս ռազմաճակատում գործող իր ուժերի զգալի մասը հետ քաշեց Գյանջա: Այն բանից հետո, երբ 1993 թ. մայիսի 28-ին ռուսական զորքերը հեռացան Գյանջայից, կառավարական ուժերը սկսեցին գրոհել ապստամբ գնդապետի բազան: «Թայֆուն» անունը ստացած այս օպերացիան, սակայն, ձախողվեց, և արդեն հունիսի 10-ին հենց Հուսեյնովի խմբավորումները սկսեցին գրոհել Բաքվի ուղղությամբ[95]: Ստեղծված օրհասական կացության մեջ նախագահ Էլչիբեյը ճարահատյալ մայրաքաղաք է հրավիրում Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ և նախկի-

---

92 **Эвоян Лия**, Воздействие внешних факторов на внутриполитическую ситуацию в Азербайджане, *Բանբեր Երևանի համալսարանի*, 138.6.33, Երևան, 2012, էջ 40:

93 **Qasımlı Musa, Hüseynov Cavid**, Azərbaycanın baş nazirləri (Ադրբեջանի վարչապետները - *ադրբեջաներեն*), Bakı, 2005, էջ 63.

94 Նույն տեղում:

95 **Эвоян Л.**, Воздействие внешних факторов..., էջ 40.

նում Ադրբեջանական ԽՍՀ կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Հեյդար Ալիևին, որն ուներ պետական կառավարչական գործի մեծ փորձ և գործակալական ամուր ցանց Ռուսաստանում և Ադրբեջանում[96]: Ինքը՝ Էլչիբեյը, հունիսի 17-ի լույս 18-ի գիշերը հեռանում է Նախիջևան: Հունիսի 27-ին Բաքվում կայանում են բանակցություններ քաղաք ժամանած Հեյդար Ալիևի և զորքը քաղաքի մատույցներում պահող Սուրաթ Հուսեյնովի միջև: Հենց նույն օրը վերջինիս խմբավորումները լքում են մայրաքաղաքի մերձակայքը: Երկրի ղեկավարումն անցնում է Հեյդար Ալիևի ձեռքը[97]:

Ահա այսպիսի պայմաններում էր, որ Ադրբեջանը կորցրեց միասնական կենտրոնացված հրամանատարությունը ռազմաճակատում, որը փաստացիորեն կազմալուծվեց: Սա թույլ տվեց հայկական ուժերին զարգացնել հաջողությունը և օգոստոսի 22-ին ազատագրել Ֆիզուլի քաղաքը (ներկայումս՝ Վարանդա) ու համանուն շրջանի մեծ մասը՝ միաժամանակ վերահսկողություն հաստատելով Ֆիզուլին Ջեբրայիլի և Զենգիլանի հետ կապող մայրուղու նկատմամբ[98]: Արդյունքում՝ հայկական կողմին անցան Ջեբրայիլ քաղաքը և համանուն շրջանի մեծ մասը (օգոստոսի 23), ինչպես նաև Հորադիս քաղաքն ու երկաթուղային կայարանը (հոկտեմբերի 24)[99]: Ռազմաճակատի հարավ-արևմուտքում նույնպես, օգտվելով թշնամու կողմից հրադադարի չպահպանման հանգամանքից, հայկական ուժերը, անցնելով հակահարձակման, օգոստոսի 31-ին և նոյեմբերի 1-ին ազատագրեցին Ղուբաթլուն (ներկայումս՝ Որոտան)[100] և Զենգիլանը (ներկայումս՝ Կովսական)[101]: Վերջին երկուսի ազատագրումը հնարավոր դար-

---

96 Նույն տեղում, էջք 35-42:

97 Ֆորմալ իրավական առումով Հեյդար Ալիևն Ադրբեջանի նախագահ ընտրվեց 1993 թ. հոկտեմբերի 3-ին կայացած նախագահական ընտրություններում:

98 **Ճառուկյան Գոռ**, Հորադիզ. 1993 թ.-ի հաղթանակների վերջին հանգրվանը, *“Times.am”*, 21 հունվարի 2014 թ., http://times.am/?p=37417&l=am (հղվել է 19.10.2015):

99 **Ցալանուզյան Միքայել**, Ինչպես 1993-ին իրանական զորքը մտավ Ադրբեջան, *«Ռազմինֆո»*, 24 օգոստոսի 2014 թ., http://razm.info/7805 (հղվել է 19.10.2015):

100 Ղարաբաղյան ազատագրական պատերազմ..., էջք 697-699:

101 Նույն տեղում, էջ 194:

ձավ Բաշարաթի բարձունքում (ներկայումս Ամուտեղ) թշնամու կատաղի դիմադրությունը կոտրելուց հետո: Ճանապարհը դեպի Հակարի և Որոտան գետերի հովիտ բաց էր:

Այսպիսով, 1993 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռազմաճակատը որոշ բացառություններով ձեռք բերեց այն սահմանային և վարչական[102] ուրվագիծը, որն առկա է այսօր:

Նորընտիր նախագահ Հեյդար Ալիևը փորձեց արմատական բեկում մտցնել պատերազմի ընթացքի մեջ և մի վերջին փորձը կատարեց հետ բերելու կորցրած տարածքները: Սկսվեց պատերազմի **վերջին** և հայկական ուժերի համար ամենածանր շրջանը[103]: Համալրված վարձկաններով՝ ադրբեջանական բանակը կատաղի գրոհի անցավ ռազմաճակատի բոլոր հնարավոր ուղղություններով: Թշնամու խնդիրն էր կոտրել հայերի դիմադրությունը, հետ գրավել ռազմավարական կարևորություն ունեցող դիրքերն ու բնակավայրերը՝ այդպիսով դյուրացնելով միանգամից

1993 թ. հոկտեմբեր: Հայ զինվորները՝ ազատագրված Հորադիս քաղաքում: Յավոր, 3 ամիս անց թշնամին հետ գրավեց քաղաքը:

[102] Զենգիլանի ազատագրումից մեկ ամիս անց՝ արդեն 1993 թ. դեկտեմբերի 2-ին, նախկին Լաչինի, Ղուբաթլուի և Զենգիլանի շրջանների տարածքում ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ կազմվեց Քաշաթաղի վարչական շրջանը՝ Բերձոր կենտրոնով:

[103] Հրադադարից հետո, հիշելով պատերազմի այդ շրջանը, Վազգեն Սարգսյանն ասել է՝ «... վերջին ութ ամիսների մեր չարչարանքը բառերով հնարավոր չէ ներկայացնել» («Հաղթանակով վերադարձ». հրադադար՝ 1994թ. մայիսի 12, “YouTube”, “Edgar Elbakyan” ալիք, 11 մայիսի 2014 թ., https://www.youtube.com/watch?v=krqjyq403do (հղվել է 20.10.2015)):

խոշոր տարածքների նվաճումը: Արցախի տեղագրական առանձնահատկություններով պայմանավորված այս մարտավարությունը, ըստ էության, հենց հայկական կողմին էր հաջողություն բերել 1991-1993 թվականներին, և այժմ Ադրբեջանը փորձում էր նույն մեթոդով գործել: Դրանով էլ հենց պայմանավորված էին 1993-1994 թթ. թշնամու ճմեռային գրոհի ուղղությունները: Հարավում հիմնականը Բայլական (Ժդանով) - Հորադիս ուղղությունն էր, որի նպատակը ռազմավարական ահռելի կարևորություն ունեցող Հորադիս քաղաքի և երկաթուղային կայարանի վերագրավումն էր: Ցավոք, 1993 թ. դեկտեմբեր-հունվար ամիսներին ընթացած կատաղի մարտերում թշնամուն հաջողվեց հունվարի 5-ին վերատիրել քաղաքին[104]:

Արևելքում թեժ էին մարտերը Շահբուլաղի (Տիգրանակերտ) և Փափրավենդի ուղղությամբ. թշնամու նպատակն էր վերահսկողություն հաստատել Ասկերան - Աղդամ - Մարտակերտ ավտոճանապարհի նկատմամբ: Առավել դաժան էին մարտերը հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ Մաղաղիս - Թալիշ և Օմարի լեռնանցք: Բանն այն է, որ հայկական ուժերի շարքում թեկուզ մեկ ուղղությամբ ճեղքում մտցնելը, մեկ ուղղությամբ դիրք գրավելն այնքան հրամայական էին Ադրբեջանի համար, որ անգամ ցրտաշունչ և ձյունառատ ձմռան պայմաններում որոշվեց հարձակում իրականացնել անգամ այս վերջին ուղղությամբ՝ նպատակ ունենալով Յանշաղի հատվածում առաջանալ դեպի Քարվաճառի խաչմերուկ և Գյանջայից օգնական ուժերի ներհոսքի միջոցով գրավել ամբողջ շրջանը: Չնայած թշնամու կողմից հունվարի վերջին գրանցած որոշակի հաջողության՝ փետրվարի 18-ին հայկական ուժերին հաջողվեց վերջնականապես վերագրավել Քյալբաջարի շրջանի հյուսիսը և Օմարի լեռնանցքը[105]: Տեղագրական և եղանակային անբարենպաստ պայմանների

---

[104] Müstəqillik ərəfəsində və müstəqillik illərində mühüm hadisələrin xronologiyası (1988-2011) (Անկախության շեմին և անկախության տարիներին կարևոր իրադարձությունների ժամանակագրություն (1988-2011 թթ.) - *ադրբեջաներեն*), Azərbaycan Respublikası Prezidentinin İşlər İdarəsi, Prezident Kitabxanası, էջ 11, http://files.preslib.az/projects/republic/az/azr6_1.pdf (հղվել է 19.10.2015).

[105] **Степанян К.**, Карабахский конфликт..., նույն տեղում:

Արագածի և Սպիտակի կամավորականները Քարվաճառում

պատճառով այդ գրոհի ժամանակ ադրբեջանցի զինվորների մի մասը, այդպես էլ մարտի մեջ չմտած, ցրտահարությունից սառցակալեց և մահացավ, իսկ մնացածը գլխովին ջախջախվեց լեռնաշղթայի երկայնքով գերակա դիրքեր զբաղեցրած հայկական ուժերի կրակից:

Օմարի ուղղությամբ ծանր մարտերից հետո նույնպիսի բարդ կռիվներ ծավալվեցին Հորադիսի և Ֆիզուլիի ուղղությամբ, ինչպես նաև Մարտակերտի շրջանում: Երկու ուղղություններում էլ թշնամուն չհաջողվեց ճեղքել հայկական դիրքերը: Հարավային ուղղությամբ հայկական ուժերի համառ դիմադրությունը, ինչպես նաև ապրիլին Մարտակերտի ուղղությամբ ձեռնարկած հարձակողական գործողությունը (Արեգասարի օպերացիա)[106] վերջնա-

[106] Սա հայկական կողմի վերջին հարձակողական գործողությունն էր, սկսվել է ապրիլի 9-ին: Թշնամուց գրեթե լիովին ազատագրվել է Մարտակերտի շրջանի հյուսիսարևելյան՝ Մադաղիս-Չայլու-Թալիշ հատվածը: Մարտակերտյան գար-

կանապես վճռեցին պատերազմի ելքը: Ստեղծված պայմաններում Ադրբեջանը ստիպված էր գնալ հրադադարի մասին համաձայնագրի կնքման: Վերջինս ստորագրվեց 1994 թ. մայիսի 12-ին:

Խոսելով հայ-ադրբեջանական պատերազմի նշանակության մասին՝ հարկ է առաջին հերթին առանձնացնել **անվտանգային գործոնը**: Քաջածանոթ հանգամանք է, որ Խորհրդային Միության գոյության տարիներին Հայաստան պետությունը, որպես ՀԽՍՀ, սեփական անվտանգային խնդիրներ չէր առաջադրում և ինքնուրույն չէր լուծում դրանք: Պատկերը փոխվեց ԽՍՀՄ փլուզումից և միութենական հանրապետությունների անկախացումից հետո: Հայաստանը, ժառանգելով ՀԽՍՀ քաղաքական սահմանները, հայտնվեց լրջագույն անվտանգային հիմնախնդրի առջև: Խնդիրն այն էր, որ 1920-ականներին Նախիջևանի և Ղարաբաղի պատկանելության ապօրինի վճռահատության հետևանքով արաքսյան ենթաերկրաքաղաքական շրջանի երրորդ առանցքային բաղադրիչը՝ Սյունիքը, կարող էր զրկվել պաշտպանունակությունից՝ երկու կողմից հայտնվելով թշնամական ուժերի հարձակման տակ: Սյունիքին սպառնացող վտանգն ավելի առարկայական և շոշափելի դարձավ Արցախում ընթացող ռազմական գործողությունների հետևապատկերին: Ակնհայտ էր, որ պարտությունը Ղարաբաղում մահվան սպառնալիքի առջև էր կանգնեցնելու Զանգեզուրը և առհասարակ Հայաստանի գոյությունը: Սակայն Հինալ սարից մինչև Միջնավան և Թալիշից մինչև Հորադիս հայկական հողերի ազատագրումը Հայաստանի և Հայաստանի նշված շրջանների բնակչության համար անվտանգության կարևորագույն և երկարաժամկետ հնարավորություն ստեղծեց, իսկ Արաքս գետի հայաստանապատկան հատվածի երկարացումն ու թյուրքական պետությունների ցամաքային սահմանները աշխարհագրորեն հեռացնելը ՀՀ անվտանգության էական հիմնատարրն էին:

Պատերազմի նշանակության հետ կապված հաջորդ կարևոր տարրը **բանակաշինությունն** է: Դժվար է ասել, ինչ ընթացք

նանային գործողության ժամանակ թշնամուց բացի ծանր և ցավալի կորուստներ է կրել նաև հայկական կողմը:

կստանար անկախ Հայաստանի զինված ուժերի ստեղծման գործընթացը, և ինչպիսին կլիներ հանրության լայն շերտերի ընկալումն ու վերաբերմունքը վերջինիս հանդեպ, եթե չլիներ արցախյան պատերազմը, և բանակը կայացած չլիներ վերջինիս բոցերում: Հաղթական պատերազմի կարևորագույն ձեռքբերումներից մեկն էլ հենց կամավորական - ֆիդայական ջոկատների կազմակերպումն ու դրանց հենքի վրա անցումն էր կանոնավոր բանակի: Այսպիսով՝ վերականգնվեց նաև հայ ազգի՝ որպես քաղաքական միավորի ռազմական ինքնությունը, ինչը նորագույն շրջանում նույնպես ուներ շուրջ երեքդարյա պատմություն (սկսած Արցախ-Սյունիքի մելիքական տների զինված ուժերից մինչև արևմտահայոց ֆիդայական ջոկատներ) և անկախության ու արտաքին սպառնալիքի պայմաններում կարոտ էր հետագա կատարելագործման:

Հայ-ադրբեջանական պատերազմում հաղթանակը հնարավոր դարձավ սկզբնական փուլում հայ ժողովրդի ինքնակազմակերպման, ռազմաճակատի արդյունավետ կազմակերպման, ռազմական օպերացիաների պրոֆեսիոնալ ծրագրման և իրականացման, թիկունքի նվիրումի և յուրաքանչյուր ազատամարտիկի անձնազոհ պայքարի շնորհիվ: Տարբեր հաշվարկներով այդ պատերազմում զոհվեցին 7000-10000 ազատամարտիկներ…

Պատերազմի ընթացքում օտար նվաճումից ազատագրվեց հայրենի հողի շուրջ 12000 կմ^2 տարածք…

«ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ». ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2014-2015 ԹԹ.)

Գերմանացի ռազմական տեսաբան և մտածող Կառլ Կլաուզեվիցը համարում էր, որ «պատերազմը սոսկ քաղաքական ակտ չէ, այլ իրական քաղաքական գործիք՝ քաղաքական հարաբերության շարունակությունը, պարզապես այլ մեթոդներով»[107]: Ասույթի վերածված այս խոսքերը լավագույնս բնորոշում են հետհրադադարյան շրջանի հայ-ադրբեջանական պատերազմական գործողությունները, այդ թվում՝ 2014-2015 թթ. իրադարձությունները:

1994 թ. տանուլ տալով պատերազմը և 1990-ականների վերջին ու 2000-ականների սկզբին չկարողանալով շոշափելի հաջողության հասնել նաև դիվանագիտական ասպարեզում՝ Ադրբեջանը որդեգրեց պատերազմի նոր տրամաբանություն՝ դիպուկահարների պատերազմ, դիրքային պատերազմ, դիվերսիոն հարձակումներ, գյուղերի և առհասարակ խաղաղ բնակչության թիրախավորում և այլն: Թեև նմանատիպ գործողությունները մշտապես տեղ են ունեցել հետհրադադարյան ռազմաճակատային իրականության մեջ, այնուամենայնիվ, 2014 թվականից թե՛ քանակական, թե՛ նպատակադրումների առումներով դրանք ձեռք բերեցին որակապես նոր բովանդակություն:

2013 թ. նոյեմբերի 19-ին Վիեննայում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը թշնամու համար հստակ ազդանշան եղավ, որ աշխարհաքաղաքական և տարածաշրջանային ներկա պայմաններում բանակցային ճանապարհով հաջողության հասնել հնարավոր չէ, քանզի ի հեճուկս իրեն՝ ստատուս-քվոն բխում է հակամարտության մեջ շահեր ունեցող բոլոր հիմնական խաղացողների շահերից, այդ թվում՝ Հայաստանի: Այս պայմաններում Իլհամ Ալիևին մոտ կանգնած փորձագիտական և մտավորական շրջանակները սկսեցին ահազանգել, որ սառեցված/չլուծված հակամարտության կարգավիճակը կարող է առհավետ մոռացության տալ Լեռնային Ղարաբաղի հակամար-

[107] **Carl von Clausewitz**, On War, Book 1, Chapter 1, 24.

տությունը թե՛ ներքին, թե՛ միջազգային շրջանակներում[108], և որ հարկավոր է բոլոր հնարավոր, այդ թվում՝ ռազմական միջոցներով **հակամարտությունը մշտապես «տաք» պահել**[109]: Մյուս կողմից՝ Ադրբեջանում 2013 թ. հոկտեմբերին կայացած նախագահական ընտրությունների արդյունքում պարզ դարձավ, որ իրական ընդդիմության բացակայության պայմաններում գործող նախագահն ամենավճռական քայլերով շարունակելու է իշխանության ավտորիտացման ուղեգիծը՝ դրանից բխող արտաքին քաղաքական վարքով[110]:

2014 թ. հունվարի 9-ին Բաքվում Իլհամ Ալիևի նախագահությամբ կայացավ կառավարության՝ 2013 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքներին և 2014 թվականին նախատեսվող անելիքներին նվիրված նիստը: Ալիևի ելույթի մի զգալի հատվածը վերաբերում էր արտաքին քաղաքականությանը՝ գերազանցապես հայ-ադրբեջանական հակամարտությանը: Ելույթի մեջ տեղ գտած հիմնական թեզերը հետևյալն էին՝

ա. «ՀՀ-ն տարբեր պատրվակներով ձգձգում և խոչընդոտում է բանակցային գործընթացը»,

բ. «համանախագահները, անընդունելի համարելով ստատուս-քվոյի պահպանումը, միևնույն ժամանակ բավարարվում են լոկ խոսքերով, որ հարցի խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի, մինչդեռ «աշխարհում բոլոր ոլորտներում ուզածիդ չափ այլընտրանք կա»»,

գ. «չբացառելով հարցի ռազմական լուծումը՝ Ադրբեջանը շա-

---

108 Ադրբեջանի ուղեղային կենտրոնների և խորհրդատվական հանրության շրջանում տիրող մտայնությունների ուսումնասիրության հիման վրա սույն եզրակացությունը մասնավոր փորձագիտական զրույցի ընթացքում մեզ է հայտնել «Նորավանք» ԳԿՀ վերլուծաբան Անուշավան Բարսեղյանը:

109 Նման քաղաքականությունը բխում է նաև ադրբեջանական իշխանությունների կողմից երկրի ներսում տարիներ շարունակ ստեղծված այն մտայնությունից, որ «Էսօր-Էգուց» իրենք ձեռնամուխ են լինելու «հողերի ազատագրմանը», և դրանից հետո Ադրբեջանում այլ խնդիր չի մնալու, քանզի միակ խնդիրը «հայկական օկուպացիան» է (**Խաչատրյան Աստղիկ**, Չպարտվածի կերպարի կերտման գործընթացն Ադրբեջանում, *Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում*, Երևան, 2013, էջ 136):

110 **Էլբակյան Էդգար**, 2015 թվականը և Ադրբեջանը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 15 հունվար 2015, թիվ 3(6049), էջ 3:

ռունակելու է բանակցությունները՝ միևնույն ժամանակ աճեցնելով սեփական ռազմական ներուժը, որն իր հերթին կարող է ազդեցություն գործել բանակցային գործընթացի վրա»,

դ. «Ադրբեջանի պետական գանձարանը տասն անգամ գերազանցում է հայկականը, հետևաբար՝ ՀՀ որևէ հնարավորություն և ներուժ չունի մրցելու Ադրբեջանի հետ»[111]:

Հայկական վերլուծական շրջանակները շտապեցին սա որակել որպես Ադրբեջանի ներքին լսարանին ուղղված քարոզչական տեքստ՝ Ադրբեջանին բնորոշ ստանդարտ ձևակերպումներով[112], իսկ Արցախի նախագահի մամուլի քարտուղար Դավիթ Բաբայանը հայտարարությունը որակեց որպես «քաղաքական սանտակլաուսություն»[113]:

Հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը[114], սակայն, պարզվեց, որ

---

111 İlham Əliyevin sədrliyi ilə Nazirlər Kabinetinin 2013-cü ilin sosial-iqtisadi inkişafının yekunlarına və 2014-cü ildə qarşıda duran vəzifələrə həsr olunmuş iclası keçirilmişdir (Իլհամ Ալիևի նախագահությամբ տեղի է ունեցել կառավարության՝ 2013 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքներին և 2014 թվականին նախատեսվող անելիքներին նվիրված գործադիր նիստը - *ադրբեջաներեն*), *Azərbaycan Prezidentinin Rəsmi internet səhifəsi*, 9 հունվարի 2014 թ., http://www.president.az/articles/10792 (հղվել է 17.10.2015 թ.):

112 Տես օրինակ **Էլբակյան Էդգար**, Ալիևյան հռետորաբանության Էությունը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 14 հունվար 2014, թիվ 1(5810), էջ 3; **Աբրահամյան Տիգրան**, Ալիևը փորձում է զրոյացնել միջնորդների ջանքերը, *"Panorama"*, http://www.panorama.am/am/politics/2014/01/13/t-abrahamyan/ (հղվել է 18.10.2015):

113 **Բաբայան Դավիթ**, Ալիևի հայտարարությունը «քաղաքական սանտակլաուսություն» է (հարցազրույց), 10 հունվարի 2014 թ., http://www.tert.am/am/news/2014/01/10/Aliev/970139 (հղվել է 17.10.2015):

114 Հունվարի 19-ի լույս 20-ը համընկնում է այն օրվա հետ, երբ 1990 թ. խորհրդային բանակը Բաքվում կարգուկանոն մտցնելու և հայերի կոտորածները կանգնեցնելու համար մտավ Ադրբեջանի մայրաքաղաք, և ըստ ադրբեջանական պատմագիտական նարատիվի՝ քաղաքում իրականացրեց «ադրբեջանցիների կոտորած»: Առհասարակ հետաքրքիր է զննադիտարկել տարեկան կտրվածքով այն պարբերաշրջանները՝ օրերն ու ամիսները, որոնց ընթացքում թշնամին ակտիվանում է: Վիճակագրությունը հուշում է, որ դրանք լինում են հստակ քաղաքական դեպքերի ու գործընթացների հետ առնչվող օրեր: Հունվարից զատ՝ թշնամին ակտիվանում է նաև փետրվարի վերջին, մարտի սկզբին, ինչպես դա եղավ 2015 թ.՝ կապված, այսպես կոչված, «Խոջալուի կոտորածի» տարելիցի հետ: 2014 թ. նոյեմբերի 12-ին հայկական պատկանելության «Մի-24» ուղղաթիռի խոցումը, և այս տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսների ադրբեջանական ակտիվությունն իրենց հերթին կարող են կապվել Հայաստանի զինված ուժերի կողմից

Ալիևի տեքստն ավելի շուտ կարելի էր տեղավորել պատերազմի անուղղակի հայտարարության համաշարում: Թշնամու դիվերսիոն խմբերը կեսգիշերնանց միաժամանակյա հարձակումներ գործեցին Կորգանի (հարավարևելյան) և Ջրաբերդի (հյուսիսարևելյան) դիրքերի ուղղությամբ: Մարտակերտում կռիվը տևեց գրեթե ամբողջ գիշեր: Թշնամու հետ անհավասար դիրքային մարտում մինչև վերջ կռվեց և զոհվեց կրտսեր սերժանտ, ջոկի հրամանատար Արմեն Լևոնի Հովհաննիսյանը[115]: Հայկական կողմի պատասխանի արդյունքում՝ թշնամին այդ մարտում կրեց առնվազն 8 մարտական կորուստ[116]: Դեպքը խորապես ցնցեց հայաստանյան, այդ թվում՝ սփյուռքյան հասարակությանը: Արմենի սխրանքը բերնեբերան անցնելով՝ միաժամանակ բնակչության հոգեբանության մեջ ուրվագծեց նոր իրականության զգացումը: Հասարակական-քաղաքական շրջանակներում, ընդհուպ մինչև սոցցանցային տիրույթ, գնալով հաստատվեց այն համոզմունքը, որ «1994 թ. մայիսին կնքվել է հրադադարի մասին համաձայնագիր, հետևաբար՝ պատերազմը չի ավարտվել»:

2014 թ. պատերազմական գործողությունները վերջնականապես հաստատեցին այս իրողությունը: Հատկապես թեժ էր հուլիս-օգոստոս ամիսների հատվածը[117], որը հետագայում պաշտպանու-

---

իրականացվող զորավարժությունների հետ, որոնց մասնակցում են նաև Արցախում գտնվող ստորաբաժանումները: Նման օրերին ադրբեջանական ակտիվացումը դժվար չէ կապել այն երևույթի հետ, որ հակառակորդը փորձում է հոգեբանական ճնշում գործադրել Հայաստանի վրա՝ ցույց տալու, որ «ոչինչ մոռացված չէ, ոչ ոք մոռացված չէ»՝ հուսալով այդ կերպ **անկումային տրամադրություններ առաջացնել մեր բնակչության շրջանում**, բայց և ամենակարևորը՝ ճեղքվածք դիրքապահների շարքերում: Այս հարցում թշնամու շարժառիթները քաղաքական են. պատերազմական քայլերի միջոցով Հայաստանին և հակամարտության մեջ ներգրավված մյուս դերակատարներին ցույց տալ հարցի նկատմամբ իր անփոփոխ ու անզիջում դիրորոշումը և ձգտել դրա միջոցով բանակցային զիջումներ կորզել կողմերից:

[115] Արմեն Հովհաննիսյանի կենսագրական ակնարկը տես սույնի էջք 83-100:

[116] «Մի կես ժամ բոյ ենք տվել, նրանք 8 զոհ են տվել, մի քանի տասնյակ վիրավոր». «Գարեգին Նժդեհ» մեդալներ՝ թշնամու դիվերսիոն խմբին հետ շպրտած զինվորներին, *“HAYNEWS.AM”*, http://haynews.am/hy/1390829986 (հղվել է 20.10.2015):

[117] Հայկական զինուժի կորուստները 2014 թվականին. Ռազմինֆո, 31 դեկտեմբերի 2014 թ., http://razm.info/58122 (հղվել է 18.10.2015):

թյան նախարարի մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանի կողմից «Սիվիլնեթ» համացանցային լրատվականին տված հարցազրույցում սահմանվեց որպես «օգոստոսյան հնգօրյա միկրոպատերազմ»[118]՝ համաձայն ռազմագիտական եզրութաբանության: Միկրոպատերազմի հիմնական դեպքերը կարելի է դասավորել հետևյալ ժամանակագրական հաջորդականությամբ՝

2014 թ. հուլիս 26 - Գիշերը թշնամին դիվերսիոն հարձակում գործեց Մարտակերտի ուղղությամբ: Այդ կռվում զոհվեց ժամկետային զինծառայող Խաչատուր Բաղասյանը:

2014 թ. հուլիս 31 - Առավոտյան դարանակալած թշնամին հարձակվեց հացի մեքենայի մոտ շարժվող հայ դիրքապահների վրա՝ ըստ ամենայնի նպատակ ունենալով գերեվարել վերջիններիս: Անզեն ձեռնամարտի բռնվելով թշնամու հետ՝ կռվեցին և քաջի մահով ընկան սերժանտ Արարատ Խանոյանը և շարքային Ազատ Ասոյանը: Շարքային Նորայր Քամալյանը ծանր վիրավորվեց:

2014 թ. օգոստոսի 1 - Հայկական զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումը պատասխան պատժիչ գործողությամբ թշնամու թիկունքում ոչնչացրեց առնվազն 8 զինծառայողի[119]:

---

[118] 5-օրյա միկրոպատերազմ (հարցազրույց **Արծրուն Հովհաննիսյանի** հետ), *“CIVILNET”*, http://civilnet.am/2014/08/12/artsrun-hovhannisyan-azerbaijan-armenia-conflict-interview/#.ViG4eX4rLIU (հղվել և ներբեռնվել է 17.10.2015):

[119] Այն, որ հայկական հատուկ ստորաբաժանման պատժիչ գործողությունը պատասխան էր թշնամու հուլիսերեսունմեկյան դիվերսիայի, վերջնականապես հաստատվեց, երբ միկրոպատերազմից հետո՝ օգոստոսի 12-ին, «Արմենիա Թիվին» հրապարակեց «Հայ հետախույզների մասին շշուկով խոսում են ադրբեջանական ասքերը» ռեպորտաժը: Տեսանյութում ստորաբաժանման մարտիկներից մեկը պատմում է. «Ժամը 10-ն ա իլալ առավոտը, սկացալնք, վեր «Եղնիկներ» դեպք ա իլալ: Մեր կամանդիրներան հրամանը ստացած արդեն, վեր մունք պիտի ուրանց պատասխանը տանք: Ծյախեն յիրա քալիս, նկատումունք, վեր լյուսերը կամ ա: Մունք գնդումնք, թա իրանց պատրուլն ա կամ»: Մյուս մարտիկը շարունակում է՝ «Ես ու ջոկի հրամանատարը թույլ ենք տալիս մեզի անցնեն իրանք, մեզի անցնելուց հասնում են երկրորդ խմբին իրանք, մենք հետևից դուրս ենք գալիս և սկսում կրակել: Դոմինոյի նման թափում են»: Լրագրողի՝ «Ինչի որոշեցիք պատժել» հարցին մարտիկներից մեկը պատասխանում է. «Իրանք մնաս են տալիս անմեղ էրեխեքին՝ [դիրքում] կայնած տղեքին»: Ակնհայտ է, որ խոսքը հուլիսի 31-ին «Եղնիկներում» տեղի ունեցած դեպքի և անզեն ժամկետային զինծառայողներ Արարատ Խանոյանի, Ազատ Ասոյանի և Նորայր Քամալյանի հարձակման ենթարկվելու մասին է (ռեպորտա-

Նախորդ դիվերսիայից հետո դիրքում ինժեներատեխնիկական աշխատանքները դեռևս չէին ավարտվել: Նկարում երևացող անվադողերի մուրից թշնամու երկու զինվոր փորձել են կտրել փշալարերը և ներխուժել դիրք: Հենց այդ պահին Զորիկը ոչնչացրել է վերջիններիս: Մարտից հետո անվադողերի մուր հայտնաբերվել են թշնամու զինվորների ուղեղի և սրտի մնացորդները:

2014 թ. օգոստոսի 2 - Գիշերը, նպատակ ունենալով վրեժ լուծել նախօրեին կրած խայտառակության համար, ինչպես նաև, ըստ ամենայնի, առաջադրանք ունենալով գրավել հայկական դիրքը, թշնամու ուժեղացված խումբը հարձակվեց այն նույն դիրքի վրա, որի ուղղությամբ հարձակվել էր հուլիսի 26-ին: Դիրքապահներ Զորիկ Գևորգյանի և Սարգիս Մովսիսյանի անօրինակ քաջության շնորհիվ՝ հանկարծակիի եկած թշնամին, կորուստներ տալով, նահաջեց:

Նույն օրը թշնամու դիվերսիոն հարձակում տեղի ունեցավ նաև Մարտունու ուղղությամբ: Նշված երկու մարտերի ընթացքում թշնամին ունեցավ 8 զոհ և շուրջ տասնյակ վիրավոր:

2014 թ. օգոստոսի 2-5 - Սահմանային լարումը հասավ գագաթնակետին, թշնամին սահմանի երկայնքով սկսեց տանկային զորաշարժեր, երկուստեք նկատվեցին մոբիլիզացիոն գործողություններ:

2014 թ. օգոստոսի 5-9 - Մինչև Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումը թշնամուն չհաջողվեց ռազմաճակատի որևէ հատվածում հասնել հաջողության, ինչը թույլ կտար բանակցությունների ժամանակ ուժի լեզվով խոսել հայկական կողմի հետ:

2014 թ. օգոստոսի 10 - Սոչիում կայացավ ՀՀ, ԱՀ և ՌԴ նախա-

ժը տես Հայ հետախույզների մասին շշուկով խոսում են ադրբեջանական աստքերը, armeniatv.am, “YouTube”, “news news” ալիք, 12 օգոստոսի 2014 թ., http://www.youtube.com/watch?v=IGeGs1bx2OQ (հղվել և ներբեռնվել է 20.10.2015)):

գահների եռակողմ հանդիպումը[120]: Միջնորդ կողմը՝ հանձին Վլադիմիր Պուտինի, հատուկ շեշտեց խաղաղության պահպանման անհրաժեշտությունը՝ որպես հակամարտության կարգավորման սկզբունքային հիմնատարր: Հանդիպումից հետո պատերազմական լարումն աստիճանաբար մարման փուլ մտավ. թշնամուն այդպես էլ չհաջողվեց այս փուլում արձանագրել ռազմական կամ դիվանագիտական առաջխաղացում:

Նախագահների եռակողմ հանդիպումից հետո թեպետ ռազմաճակատում գրանցվեց միառժամանակյա դադար, այնուամենայնիվ, այդ շրջանից սկսած արդեն սահմանային ընդհարումները դարձան երկկողմ պատերազմական իրականության անքակտելի մասը: Ինչպես վերը նշվեց, այս պատերազմում թշնամու նպատակներից մեկը հակամարտային իրավիճակը «տաք» պահելն է: Սրանով պարտված երկիրը փորձում է անկումային տրամադրություններ ստեղծել հայաստանյան բնակչության շրջանում՝ հաշտեցնելով վերջինիս զիջումների գաղափարին: Միով բանիվ՝ Ադրբեջանի համար դիպուկահարների, ապա նաև դիվերսիոն պատերազմների հիմնական նպատակը հոգեբանական և հնարավորության դեպքում նաև ռազմական դաշտում պարտված կողմից հաղթող դառնալն է:

Ընդհանրապես Ադրբեջանի գործողությունների դրդապատճառները համակողմանի հասկանալու համար որպես ելակետային ուղենիշ պետք է վկայակոչենք այն փաստը, որ հետխորհրդային շրջանում Ադրբեջանի ներքին և արտաքին քաղաքականությունը պայմանավորել են երեք հիմնական գործոններ՝ նավթարդյունաբերության երկրորդ «բումը», (միջ)կլանային պայքարը և ղարաբաղյան հարցը: Ի տարբերություն առաջին երկուսի՝ վերջինս նաև զգալապես նպաստել է ազգ-պետություն մակարդակում տակավին չձևավորված ադրբեջանական ինքնության կայացմանը: Պատահական չէ, որ 1988 թ. Բաքվում՝ Լենինի

---

[120] Սոչիում տեղի է ունեցել Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը, *ՀՀ նախագահի պաշտոնական կայք*, 10 օգոստոսի 2014 թ., http://www.president.am/hy/press-release/item/2014/08/10/President-Serzh-Sargsyan-meeting-in-Sochi-with-Presidents-of-Russia-and-Azerbaijan/#!officialPhotos (հղվել է 17.10.2015):

հրապարակում, առաջին ցույցերը սկսվեցին հենց ղարաբաղյան հարցի առնչությամբ և «մահ հայերին» վանկարկումներով: Արդեն այդ տարիներին ղարաբաղյան հարցը ամենահարմար միջոցն էր «Գոյություն» կազմակերպության և «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» համար՝ ճնշում բանեցնելու երկրի կոմունիստական իշխանությունների վրա և իրավահեղինակացման հասնելու ժողովրդի աչքերում: Քաղաքական առաջնորդներն օգտվում էին այն լայն արձագանքից, որ հակահայկական տրամադրությունները ստեղծում էին ղարաբաղյան հարցի շուրջ, և իրենք էլ իրենց հերթին ահագնացնում էին այդ տրամադրությունները: Հակամարտության սրման և պատերազմի փուլ թևակոխելուց հետո ղարաբաղյան թնջուկն ավելի վճռորոշ դեր խաղաց Ադրբեջանի ներքաղաքական կյանքում: Բավական է վկայակոչել այն, որ թե՛ Աբուլֆազ Էլչիբեյը և թե՛ Հեյդար Ալիևն իշխանության են եկել ղարաբաղյան հարցի ներքաղաքական շահարկման արդյունքում[121]: Այսպես, Էլչիբեյն ու ժողճակատայինները, հրահրելով և օգտագործելով այսպես կոչված «Խոջալուի ջարդերը», կարողացան իշխանությունից հեռացնել Այազ Մութալիբովին, բայց արդեն մեկ տարի անց նախկին Քյալբաջարի անկումը, Հուսեյնովի խռովությունն ու Թալիշ-Մուղանյան Հանրապետության հռչակումը նախորդ անգամվա տրամաբանությամբ իշխանությունից սրբեցին ժողճակատայիններին, և «գահին բազմեց» Հեյդար Ալիևը[122]:

Չնական տրամաբանությունը հուշում է, որ հանգունորեն իշխանությունից պետք է հեռացվեր նաև հենց ինքը՝ Ալիևը, հատկապես եթե հաշվի առնենք, որ հենց նրա օրոք Ադրբեջանը կրեց ամենախորտակիչ հարվածները՝ մեկը մյուսի հետևից կորցնելով Աղդամը, Ֆիզուլին, Ջեբրայիլը, Ղուբաթլուն և Զենգիլանը: Ալիևը, սակայն, չնայած այս պարտություններին, ամրապնդեց իր իշխանությունը և ներկայումս էլ հետմահու, Աթաթուրքի կրկնօրինակմամբ, մեծարվում է որպես «համազգային առաջնորդ», «ազգի ղեկավար» և «անկախ պետականության հիմնադիր»:

---

[121] **Էլբակյան Էդգար**, Ուղղաթիռի խոցման ցավոտ և ուսանելի դասերը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 27 նոյեմբեր 2014, թիվ 215(6024), էջ 4:

[122] Էլչիբեյի անկման և Ալիևի իշխանագալության մասին առավել մանրամասն տես գրքի նախորդ գլխում:

Մերձարաքսյան այս հատվածում հատվում են հայկական, իրանական և ադրբեջանական սահմանները: Դաշտավայրային տեղանքը բարդացնում է պաշտպանության գործը: 2014 թ. մայիսի 28-ին թշնամին հարձակվեց այս ուղղությամբ (նկարում երևացող ավերակի մոտից) և տպավ զոհեր ու վիրավորներ՝ նահանջեց: Հարձակման ժամանակ զոհվեց եֆրեյտոր Էրիկ Վիլենի Գասպարյանը:
Լուսանկարները՝ Արթուր Գրիգորյանի ռեպորտաժից:
© «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Նման շրջադարձը 1990-ականների կեսերին պայմանավորված էր վերոբերյալ մյուս երկու գործոններով՝ կլանային վերնախավերի պայքար, որ բնորոշ է խանական անցյալ ունեցող երկրին, և նավթարդյունաբերության հանգամանքը: Նախ՝ հայր Ալիևին հաջողվեց շոշափելի հնազանդության մեջ պահել երկրում գործող անհաշտ կլանային խմբերը, իսկ արդեն արտաքին քաղաքականության մեջ կարողացավ հավասարակշռված արտաքին էներգետիկ քաղաքականություն վարել և՛ Արևմուտքի, և՛ Ռուսաստանի հետ: Հենց այս հարցում էր, որ Էլչիբեյը կատարյալ ֆիասկո էր կրել՝ փորձելով միակողմանիորեն Ռուսաստանին դուրս թողնել երկրի նավթարդյունաբերական համակարգից[123]:

2013-2014 թթ., սակայն, հեյդարյան այս համակարգը սկսեց ճեղքեր տալ: Բանն այն է, որ վերջին տարիներին երկրի ներքին կյանքում ավանդական միջկլանային պայքարին գումարվեց նաև Ադրբեջանը բնակեցնող բնիկ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների արդար պահանջը՝ իրացնելու միջազգային և ներպետական իրավունքով իրենց վերապահված քաղաքացիական և քաղաքական ազատությունները, ինչը սպառնալից մղձավանջ է Բաքվի համար: Կարելի է ասել, որ Ադրբեջանում վերջերս շատ սուր զգացվող մարդու իրավունքների, այդ թվում՝ բնիկ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների իրավունքների ճգնաժամը[124], նավթի միջազգային գների անկումը, այդ երկրի միջազգային վարկի խարխլումը և բռնապետության «լուսապսակով» պատվելը խախտում են շուրջ երկու տասնամյակ առաջ Հեյդար Ալիևի կողմից հաստատած հավասարակշռությունը՝ մղելով Իլհամին այդ բացը լրացնելու հակահայկականության սրացմամբ և ղարաբաղյան հարցի հետագա բորբոքմամբ[125]:

2014 թ. ընթացքը հաստատեց նման ռազմավարության գոյու-

---

[123] **Эвоян Л.**, Воздействие внешних факторов..., էջք 39-41:

[124] 2014 թ. սեպտեմբեր ամսին միջազգային հանրության կողմից Ադրբեջանում մարդու իրավունքների անմխիթար վիճակի մասին արձագանքների առնչությամբ տես **Էլբակյան Էդգար**, Ադրբեջանի ապաֆաշիստականացումը՝ որպես խաղաղության բանալի, *«Հայաստանի Հանրապետություն»*, 7 հոկտեմբեր 2014, թիվ 178(5987), էջ 3:

[125] **Էլբակյան Է.**, Ուղղաթիռի խոցման ցավոտ և ուսանելի դասերը..., նույն տեղում:

թյունը: Ավելին, հաշվի առնելով, որ տարիներ շարունակ Ադրբեջանի գրավչությունն Արևմուտքում պահպանվել է ածխաջրածնային պաշարների և էներգակիրների մատակարարման շնորհիվ, տարեվերջին Ադրբեջանի դրությունն ավելի բարդացավ՝ պայմանավորված դեկտեմբերին համաշխարհային արժութային ճգնաժամով[126]:

2014 թ. դեկտեմբերի 31-ին հրապարակվեց Ամանորի և աշխարհի ադրբեջանցիների համերաշխության օրվա[127] առթիվ Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովի շնորհավորական ուղերձը, որտեղ վերջինս պնդում էր, թե. «...Մեր պատմական հողերի վրա թշնամուն հանգիստ չենք տալու և վերականգնելու ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը»[128]: Առհասարակ տեղին է նշել, որ 2013-2014 թթ. բանակցային շրջափուլից հետո Ադրբեջանի դիրքորոշումը դիվանագիտական ասպարեզում վերջնականապես կարծրացավ և հանգեց հետևյալ վերջնագրային ձևակերպմանը. «Ստատուս-քվոյի պահպանումն

---

[126] Թեպետ այդ օրերին անհամաչափ արժութային ինտերվենցիաների միջոցով Բաքվին հաջողվեց կանխել մանաթի կտրուկ արժեզրկումը, այնուամենայնիվ, 2015 թ. տարեսկզբին տակավին առկախ էր այն հարցը, թե ինչ գնով պետք է հաշվարկել մեկ բարելի արժեքը: Այս ամենի հետևապատկերին Էլ ավելի է բարդանում բնակչության սոցիալական բեռը՝ ուղեկցվելով հարկերի և ապրանքների գների բարձրացմամբ և ակցիզային դրույքների ավելացմամբ: Ըստ պաշտոնական հայտարարությունների՝ Ադրբեջանում փորձում են զարկ տալ տնտեսության ոչ նավթային ճյուղերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով սպասարկման ոլորտին և զբոսաշրջությանը (**Էլբակյան Է.**, 2015 թվականը և Ադրբեջանը..., նույն տեղում): Այդուամենայնիվ, հաշվի առնելով, որ այդ ոլորտները նույնպես կախված են էներգակիրների վաճառքից ստացված «թարմ» փողերի շրջանառությունից, արդյունքները չեն կարող արագահաս լինել:

[127] 1989 թ. այդ օրն ադրբեջանցի բանդիտները քանդեցին ԽՍՀՄ-Իրան պետական սահմանի նախիջևանյան հատվածի մի զգալի մասը՝ ի նշան «իրանյան ադրբեջանցի եղբայրների հետ վերամիավորման»: Հետագայում այդ օրը սկսեց նշվել՝ որպես աշխարհի ադրբեջանցիների համերաշխության տոն:

[128] Azərbaycan Respublikası Müdafiə nazirinin Dünya Azərbaycanlılarının Həmrəyliyi Günü və Yeni il bayramı münasibətilə Silahlı Qüvvələrin şəxsi heyətinə təbriki (Ադրբեջանական Հանրապետության պաշտպանության նախարարի շնորհավորական ուղերձը Զինված ուժերի անձնակազմին՝ աշխարհի ադրբեջանցիների համերաշխության օրվա և Ամանորի տոնի առթիվ - *ադրբեջաներեն*), *Müdafiə Nazirliyinin rəsmi saytı*, 29 դեկտեմբերի 2014 թ., http://www.mod.gov.az/index2.php?content=news/2014/29_12_tebrik (հղվել է 17.10.2015):

անընդունելի է, հարցի լուծման նախապայմանն ադրբեջանական տարածքներից հայկական օկուպացիոն ուժերի հետքաշումն է, առանց որի սահմանային լարումը չի թուլանա, և խաղաղության մեծ պայմանագիրը չի կարող մշակվել»[129]: Ուստի՝ պատահական չէ, որ 2015 թվականի սկիզբն ուղեկցվեց նոր դիվերսիաների փորձերով և սահմանային լարումով[130]:

Իհարկե, այս և նմանատիպ մյուս գործողությունների նպատակն «Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնումը» չէ, ինչպես պնդում է Հասանովը. ակնհայտ է, որ դիվերսիոն հարձակումներով տարածքներ չեն գրավում: Պատերազմական գործողությունների իրական նպատակներից մեկը պարզ է դառնում, երբ հետևում ենք պատերազմի օրերին Ադրբեջանի ինչպես ռազմական, այնպես էլ տեղեկատվաքարոզչական գործունեությանը: Սկսած 2014 թ.օգոստոսյան հնգօրյա միկրոպատերազմից՝ Ադրբեջանը գրեթե դադարեցրեց կամ խիստ նվազեցրեց իր կորուստների՝ վիրավորների, առավել ևս զոհերի մասին պաշտոնական հրապարակումները: Հատուկ այս առնչությամբ 2014 թ. սեպտեմբերի 24-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ստորագրեց հրամանագիր «Ադրբեջանական Հանրապետության զինված ուժերի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շփման գծում որոշ անվտանգային միջոցառումների մասին»[131]: Ըստ հրամանագրի՝ ուժեղացվում էին պետական գաղտնիքի պահպանման, ռազմաճակատի գծում լրագրողների հավատարմագրման և աշխատանքի ռեժիմները, պաշտպանու-

---

[129] **Էլբակյան Է.**, 2015 թվականը և Ադրբեջանը..., նույն տեղում:

[130] 2015 թ. հունվարի 3-ին՝ ժամը 03:15, թշնամու դիվերսիոն խմբի կողմից հայկական դիրքերը միացնող խրամուղու ականապատման փորձը կանխելիս քաջի մահով ընկավ շարքային Վարդան Մարտիկի Մկրտչյանը: Տես սույնի էջք 146-152:

[131] Azərbaycan Respublikası Silahlı Qüvvələrinin Ermənistan Respublikası Silahlı Qüvvələri ilə təmas xəttində bəzi təhlükəsizlik tədbirləri haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı (Ադրբեջանական Հանրապետության նախագահի հրամանագիրը Ադրբեջանական Հանրապետության զինված ուժերի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շփման գծում որոշ անվտանգային միջոցառումների մասին - *ադրբեջաներեն*),*Azərbaycan Prezidentinin Rəsmi internet səhifəsi*, 24 սեպտեմբերի 2014 թ., http://www.president.az/articles/12963 (հղվել է 18.10.2015):

Տեղանքը՝ խիտ անտառները, օբյեկտիվորեն բարդացնում է «Եղնիկներում» հայ դիրքապահների ծառայությունը: 2015 թ. մարտի 19-ին այս տարածքից (նկարում՝ աջ) թշնամու դիվերսանտները, ծառերի հետևում դարան մտած, հարձակվել են հայ դիրքապահների վրա: Թշնամու հարձակումը հետ մղելիս հերոսաբար զոհվեցին Արշակ Հարությունյանը, Էդուարդ Հայրապետյանը, Հակոբ Խաչատրյանը և Սամվել Հակոբյանը:

թյան նախարարությունը պարտավորվում էր բարձրացնել ռազմաճակատային իրավիճակի մասին տեղեկությունների հաղորդման արդյունավետությունը, ինչպես նաև խնդիր էր դրվում մշտադիտարկման ենթարկել զանգվածային լրատվամիջոցներում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում ռազմաճակատային նորությունները՝ արգելելով «անվտանգությանը սպառնացող հայտարարությունների տարածումը»[132]: Փաստացիորեն, այս հրամանագրով պաշտպանության նախարարությանը մենաշնորհ էր ընձեռնվում ռազմաճակատում ընթացող զարգացումները լուսաբանելու հարցում:

Կորուստներն առավել մեծ հետևողականությամբ թաքցնելու մարտավարությունը և հայկական կողմի կորուստների ակտիվ լուսաբանումը տրամաբանական զուգահեռն են ռազմական քաղաքականության նպատակների: Այսպես, նման քայլով

[132] Նույն տեղում:

Ադրբեջանը փորձում է լուծել միանգամից երկու հարց՝ անիրազեկ թողնել սեփական հանրության լայն շրջանակներին ադրբեջանական կողմի կորուստների մասին[133], և երկրորդ՝ հետևողական ապատեղեկատվության միջոցով ի վերջո հայկական կողմի մոտ հասունացնել հետևյալ հարցը՝ «իսկ ադրբեջանցիները կորուստ չե՞ն ունենում»: Սա էլ կարող է **առաջացնել խուճապ**, եթե հայաստանյան ժողովուրդը սկսի ենթադրել, թե իբր մեր կորուստները միակողմանի են, և սահմանին դրության տերը Ադրբեջանն է: Այսպիսով, Ադրբեջանի գործողությունների հաջորդ կարևոր նպատակը հայաստանյան բնակչության շրջանում խուճապ ու չհիմնավորված վախեր առաջացնելն է՝ կապված պատերազմի ընթացքի հետ: Ինչպես դիպուկ է նկատում ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Դավիթ Ջամալյանը՝ «… պետական սահմանին լարվածության անընդհատությունը պահպանելը, … ինչպես նաև սահմանամերձ գյուղերի ուղղությամբ բացված կրակը ու զուգահեռաբար Արցախը որպես այդ կորուստների պատճառ հռչակելը նպատակ ունեն *հոգեբանական ճնշում բանեցնել հայաստանյան հանրության վրա, տպավորություն ստեղծել, թե իբր իրենք են դրության տերը սահմանին, թե իբր ամեն վայրկյան պատրաստ են վերսկսել լայնամասշտաբ ռազմական գործողությունները* (ընդգծումը մեջբերվող հեղինակինն է – *Է.Է.*): Այդ կերպ թշնամին ձգտում է մեզանում ձևավորել զոհերի անընդհատ լինելու զգացողություն, անելանելի իրավիճակի տպավորություն, որն իր հերթին կծնի անկումային տրամադրություններ, … զորակոչի հանդեպ ժխտողականություն… Այդ ֆոնին հնարավոր կլինի հասունացնել Արցախը զիջելու գաղափարը մեզանում, ավելին՝ հրահրել ներքին ճնշումներ մեր երկրի ռազմաքաղաքական

[133] Ըստ որում, սեփական ժողովրդին պատերազմական կորուստների մասին անտեղյակ պահելով՝ Ադրբեջանը հետապնդում է ավելի հեռուն գնացող նպատակ, քան կարող է թվալ առաջին հայացքից: Անշուշտ, բնակչության զայրույթն ու հուսահատությունը չգրգռելն առաջնային են, սակայն վերջին շրջանում նկատելի է ևս մեկ միտում: Նախկինում մարտական կորուստների մասին լրահոսը զուգահեռաբար ծառայում էր որպես միջոց՝ հակահայկականությանը նոր թափ հաղորդելու: Ներկայումս Ադրբեջանը որոշել է հրաժարվել այս միջոցից, փոխարենը՝ Հայաստանի հետ վարվող պատերազմը ներկայացնել միմիայն հաղթական երանգներով, որպեսզի պատերազմական գործողությունների լայնամասշտաբ վերսկսումը շատերի համար լինի բաղձալի երևույթ:

ղեկավարության վրա»[134]:

Խոսելով Ադրբեջանի պատերազմական գործողությունների մղումների մասին՝ հնարավոր չէ հատուկ չհիշատակել բուն ռազմական նպատակադրումները: Այդ պատճառները հասկանալու համար հարկ է այսօրվա դիրքային պատերազմը դիտարկել նախորդ պատերազմի հետ միևնույն տրամաբանական հարացույցում: Ադրբեջանը ձգտում է ճակատի բոլոր կետերում շոշափել հայկական դիրքերի ամրությունն ու մարտունակությունը, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորության դեպքում՝ նոր դիրքեր գրավել, ամրացնել հները և այլն: Նպատակը պատերազմի վերսկսման դեպքում շահեկան ելման դիրքերում լինելն է: Հիշենք, որ 1994 թ. պատերազմն ավարտվեց այն պահին, երբ հայկական ուժերը գրավեցին բոլոր գերիշխող և ռազմավարական առումով կարևոր դիրքերը, իսկ Ադրբեջանի ներուժը չբավականացրեց դրանք մեզնից գրավելու համար[135]: Ասել է թե՝ նոր պատերազմում պարտություն չկրելու համար Ադրբեջանը խնդիր ունի ապահովել առավել բարենպաստ դիրքեր: Ի դեպ, այս համաշարում բնավ պատահական չէ, որ համանման դիրքային «սառը» պատերազմ ընթանում է նաև հայ-ադրբեջանական պատերազմի մյուս հավանական ճակատում՝ Նախիջևանում, որտեղ դեռևս 2014 թ. հունիսին հայկական կողմը զբաղեցրել էր ռազմավարական առումով խիստ կարևոր դիրքեր[136], ինչն օրեր անց ընդունել էր նաև Ադրբեջանի պաշտպանության նախարար Զաքիր Հասանովը[137]:

2015 թ. սեպտեմբերին հայ-ադրբեջանական սահմանին և հրադադարի գծում նկատվեց ռազմական գործողությունների աննախադեպ սրացում ու ծավալային մեծացում: Դեռ ամսվա

---

134 **Ջամալյան Դավիթ**, Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական նկարագիրը, Երևան, 2015, էջք 54-55:

135 Պատերազմի եզրափակիչ շրջանի մասին առավել մանրամասն տես գրքի նախորդ գլխում:

136 **Վրթանեսյան Կարեն** (Razm.info), Նախիջևանի սահմանին, հունիս, 2014 (ֆոտոռեպորտաժ), https://www.facebook.com/media/set/?set=a.549692975141039.1073741861.106246626152345&type=1 (հղվել և ներբեռնվել է 17.10.2015):

137 Ադրբեջանի պաշտպանության նախարարը հաստատել է Նախիջևանի սահմանին հայկական նոր դիրքերի հայտնվելը, *«ՌազմինՖո»*, 28 հունիսի 2014 թ., http://razm.info/47426 (հղվել է 17.10.2015):

սկզբից Ադրբեջանը խոշոր տրամաչափի զենքերից նշանի տակ առավ Տավուշի սահմանամերձ գյուղերը: Իրավիճակն է՛լ ավելի լարվեց սեպտեմբերի 24-ին, երբ թշնամու գնդակոծության և հրետակոծության հետևանքով Բերդավան գյուղում մահացավ 2, իսկ Պառավաքարում՝ 1 խաղաղ բնակիչ: Սեպտեմբերի 25-ին Արցախի պաշտպանության բանակի՝ թիկունքում տեղակայված զորավարժարաններից մեկում ուսումնական պարապմունքի ժամանակ հակառակորդի հրետակոծության հետևանքով հայկական կողմն ունեցավ 4 զոհ և 16 վիրավոր: Արցախի պաշտպանության նախարարության մամուլի ծառայության հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 25-ին և լույս 26-ի գիշերը Ադրբեջանն առաջին անգամ 1994 թ. ի վեր կրակել է փողավոր հրետանիով՝ 122 մմ Դ-30 հաուբիցով: Սա ազդարարեց ռազմական գործողությունների սրացման բարձրակետը, և անգամ ռազմագիտական ոլորտին նվազ ծանոթ մարդկանց պարզ դարձավ, որ թշնամին որդեգրել է նոր մարտավարություն կամ էական հավելումներ է մտցրել հին մարտավարության մեջ[138]:

Հայկական կողմի պատասխանը չուշացավ: Հետևեց ՀՀ պաշտպանության նախարարության վճռական և հատու հայտարարությունը[139], որ «…հակառակորդին լռեցնելու, նրա գործողությունները կանխարգելելու և դրանով իսկ բանակցային գործընթացին աջակցելու նպատակով ՀՀ զինված ուժերի կողմից այսուհետ օգտագործվելու են հրետանային և հրթիռային խոցման համարժեք միջոցներ՝ մշտական խոցման տակ պահելով ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման վայրերը, բոլոր զորաշարժերը, զինտեխնիկան և կենդանի ուժը»[140]:

---

138 **Էլբակյան Էդգար**, Հայ-ադրբեջանական սեպտեմբերյան միկրոպատերազմը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1 հոկտեմբեր 2015, թիվ 174(6220), էջ 4:

139 Բանակցային գործընթացին աջակցելու նպատակով ՀՀ զինված ուժերն օգտագործելու են խոցման համարժեք միջոցներ, *ՀՀ Պաշտպանության նախարարության պաշտոնական կայք*, 26 սեպտեմբերի 2015 թ., http://www.mil.am/hy/news/3698 (հղվել է 17.10.2015):

140 Թյուրըմբռնումից խուսափելու համար հարկ է պարզաբանել ՀՀ ՊՆ հաղորդագրությունը: Բանն այն է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից այն լիովին իրավաչափ է: Ըստ միջազգային պայմանագրերի իրավունքի մասին

ՀՀ ՊՆ այս հաղորդագրությունից[141] դժվար չէ եզրակացնել, որ սեպտեմբերի 26-29-ը ընկած օրերը ծանր էին Ադրբեջանի համար: Ըստ իրենց իսկ պաշտպանության նախարարության տարածած տեղեկության՝ Ադրբեջանն ունեցավ երեք զոհ[142]: Իր հերթին սեպ-

---

Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 60-րդ հոդվածի՝ «Կողմերից մեկի կողմից երկկողմ պայմանագրի ... խախտումը իրավունք է տալիս մյուս կողմին վկայակոչելու այդ խախտումը՝ որպես պայմանագրի գործողության մասնակի կամ ամբողջական կասեցման կամ դադարեցման հիմք» (Vienna Convention on the law of treaties (with annex). Concluded at Vienna on 23 May 1969, https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%201155/volume-1155-I-18232-English.pdf (հղվել և ներբեռնվել է 17.10.2015)): Հայաստանը սույն կոնվենցիային միացել է 2005 թ. մայիսի 17-ին (տես https://treaties.un.org/pages/ViewDetailsIII.aspx?src=TREATY&mtdsg_no=XXIII-1&chapter=23&Temp=mtdsg3&lang=en (հղվել է 17.10.2015): Ուստի հիմք ընդունելով վերոբերյալ հոդվածը, ինքնապաշտպանության բնական իրավունքը և Ադրբեջանի կողմից միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքի խախտումը՝ Հայաստանի պաշտպանական գերատեսչության հայտարարությունը, որով փաստացիորեն ՀՀ-ն հայտարարեց Ադրբեջանի գործողությունների պատճառով իրեն հրադադարի մասին համաձայնագրով կաշկանդված չզգալու մասին, կարող ենք համարել լիովին օրինական, ավելին՝ արդարացված նաև քաղաքական տեսանկյունից:

[141] Տեղին է նշել, որ ՀՀ ՊՆ հաղորդագրության տարածման օրը քաղաքական հարթակում Ադրբեջանը ևս մեկ անսպասելի հարված ստացավ: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 6-րդ նիստի մեկնարկից առաջ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ոչ միայն վերահաստատեց ուժի միջոցով Ադրբեջանին պատժելու և ըստ այնմ՝ նոր առճակատումներից խուսափելու հայկական մարտավարությունը, այլև հայտարարեց, որ **«...Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է»** (Նախագահն անդրադարձել է Ադրբեջանի կողմից հրադադարի խախտման՝ վերջին օրերի դեպքերին, *ՀՀ նախագահի պաշտոնական կայք*, 26 սեպտեմբերի 2015 թ., http://www.president.am/hy/press-release/item/2015/09/26/President-Serzh-Sargsyan-meeting-Genocide-100/ (հղվել է 17.10.2015)): 1994 թ. հետո հայաստանյան բարձրաստիճան ղեկավարության մակարդակով սա առաջին նմանօրինակ հայտարարությունն էր: Պետք է նկատել սակայն, որ այս տարիների ընթացքում ՀՀ և Արցախի հարաբերություններն այսպես թե այնպես կառուցվել են միակամորեն ինտեգրված կառուցակարգի տրամաբանությամբ, և նախագահի այս հայտարարությունը հստակ հաղորդագրություն էր առաջին հերթին Բաքվին, որ խաղաղության շարունակական արհամարհումը վերջինիս համար ռազմականից զատ՝ կարող է հանգեցնել նաև ծանր քաղաքական հետևանքների, որպիսին կարող է լինել ՀՀ կողմից Արցախի ճանաչումը և/կամ վերջնական վերամիավորումը:

[142] Cəbhədə ağır döyüşlər davam edir (Ռազմաճակատում շարունակվում են ծանր մարտերը - *ադրբեջաներեն*), *Müdafiə Nazirliyinin rəsmi saytı*, 28 սեպտեմբերի 2015 թ., http://mod.gov.az/index2.php?content=news/2015/28_09_melumat_shehid

տեմբերի 28-ին Արցախի պաշտպանական գերատեսչությունը տարածեց հաղորդագրություն՝ նշելով թշնամու կողմում ևս 6 զոհի մասին և հիշատակելով վերջիններիս անձնական տվյալները[143]: Ավելին, ևս երկու օր անց՝ սեպտեմբերի 30-ին, Պաշտպանության բանակի հրամանատար Լյովա Մնացականյանը հայտարարեց, որ ՊԲ-ն վերահսկում է իրավիճակը սահմանին և պատժիչ գործողություններ իրականացնում, ինչի հետևանքով թշնամին «...այսօրվա դրությամբ ունի ևս 11-12 կորուստ, … Ադրբեջանի զինհոսպիտալներում կա 60-80 վիրավոր զինծառայող, որոնց մասին տեղեկություններն ադրբեջանական կողմը թաքցնում է»[144]:

Արդյոք Ադրբեջանում հաշվի չե՞ն առնում ռիսկերն ու առկա կորուստները, և ո՞րն է նրանց քաղաքականության տրամաբանությունը: Ի սկզբանե որպես հիմնավոր ենթադրություն կարելի է ասել, որ Ադրբեջանը ներկայումս տրամադիր չէ իր կողմից լայնամասշտաբ պատերազմ սկսելու: Նախ՝ չկա արագահաս հաղթանակի հավանականություն[145], և երկրորդ՝ պատերազմի վերսկսման դեպքում այդ երկիրը կարող է զրկվել միջազգային ասպարեզում ունեցած գրավչությունից, հատկապես եթե ռազմական գործողությունների տարածքը մոտենա Ադրբեջանի տարածքում առկա միջազգային ենթակառուցվածքային հանգույցներին: Այս ամենի հետևանքով արտաքին և ներքին սպառնալիքի տակ կհայտնվի ներկայումս Ադրբեջանում իշխող վերնախա-

(հղվել է 17.10.2015):

143 ԼՂՀ ՊՆ Մամուլի ծառայության հաղորդագրություն, 29 սեպտեմբերի 2015 թ., http://nkrmil.am/main/am/newsMore1029.html (հղված է 17.10.2015):

144 ՊԲ հրամանատար. պետք լինի կկիրառենք նաև ավելի ծանր հրետանային միջոցներ, *«Ռազմինֆո»*, 30 սեպտեմբերի 2015 թ., http://razm.info/73303, (հղվել է 18.10.2015):

145 Այս հարցում նույն կարծիքն է արտահայտում Դավիթ Զամայանը. ««Սպոնտան պատերազմի» սցենարը ... սխալ է: Ժամանակակից պատերազմները վարվում են միանգամայն այլ տրամաբանությամբ: Նախահարձակ կողմը մոբիլիզացնելով իր բոլոր ռեսուրսները ձգտում է *հնարավորինս շուտ ոչնչացնել թշնամու ռազմական ենթակառուցվածքները*... Կողմերը ձգտում են արագ հաղթանակի, որի համար անհրաժեշտ է ուժերի շեշտակի գերազանցություն: [Բաքվում պատերազմի քաղաքական որոշում] կարող է կայացվել միայն այն դեպքում, երբ թշնամին ձեռք բերի մեր հանդեպ ուժերի շեշտակի գերազանցություն, ... ինչն այսօր չկա» (**Զամայան Դ.**, Հայ-ադրբեջանական հակամարտության..., էջք 66-67):

վը[146]: Սրան զուգահեռ՝ Ադրբեջանում լավ են հասկանում, որ պատերազմ չի ցանկանում նաև Հայաստանը: Նման պայմաններում Ադրբեջանը, օրեցօր մի նոր աստիճանի բարձրացնելով գործողությունների սրացումը, ջանում է հավասարակշռությունից հանել հայկական կողմին՝ ստիպելով վերջինիս գնալ է՛լ ավելի մեծ սրացման[147], այդ թվում՝ պատերազմի վերսկսման վերջինիս կողմից[148]: **Այս պայմաններում համարժեք պատասխան հասցնելու հայկական կողմի մարտավարությունն առկա ռեսուրսային բազայի և ռեսուրսապահովվածության պարագայում միակ ադեկվատ որոշումն է**: Ըստ որում՝ համարժեք պատասխանը պետք է միտված լինի **կանխարգելիչ և պատժիչ գործողությունների միջոցով թշնամուն հնարավորինս մեծաթիվ կորուստներ պատճառելուն**, ինչն ըստ սահմանման՝ ժողովրդական բարոյալքում և ապակայունություն կհարուցի անգամ Ադրբեջանի պես ավտորիտար երկրում:

Հայ-ադրբեջանական ներկա պատերազմի վերլուծության տիրույթում են նաև խնդրին առնչվող ենթաթեմաներն ու նարատիվները: Պատերազմի համաշարում արծարծվող այդպիսի ենթաթեմաներից է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ներգրավման հարցը: Հաճախադեպ են այն տարակուսանքները, թե ինչու ՀԱՊԿ-ը չի միջամտում, երբ կրակի տակ են ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածք համարվող Տավուշի սահմանային գյուղերը[149]: Այս տեսակ արծարծումները

---

146 **Էլբակյան Էդգար**, Հայ-ադրբեջանական սեպտեմբերյան միկրոպատերազմը, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1 հոկտեմբեր 2015, թիվ 174(6220), էջ 4:

147 Ինչ վերաբերում է իր նախաձեռնած սրացումների հետևանքով կրած կորուստներին, ապա Ադրբեջանում այդ գործոնը քիչ է հաշվի առնվում: Նախ՝ ինչպես արդեն նշվել է, Բաքվի լրատվաքարոզչական քաղաքականության հետևանքով երկրի բնակչության շատ չնչին մասը կարող է իմանալ զոհերի իրական քանակի մասին, և երկրորդ՝ մարդկային կորուստները համարժեք չեն ընկալվում Ադրբեջանում և Հայաստանում: Հայաստանի բնակչությունը քրիստոնեական էթիկայի կրող է, ուստի անգամ 1 մարտական կորուստը մեզ համար ցավալի է, իսկ Ադրբեջանում այդ «շեմը», կարելի է ասել, 7-10 զոհն է: Հետևաբար՝ զոհեր տալու հարցում Ադրբեջանի ձեռքերն ազատ են:

148 **Էլբակյան Է.**, Հայ-ադրբեջանական սեպտեմբերյան միկրոպատերազմը..., նույն տեղում:

149 **Էլբակյան Էդգար**, Ադեկվատ պատասխան Ադրբեջանին, *«Հայաստանի Հան-*

մասամբ հետևանք են բնակչության սակավ իրազեկվածության, մասամբ էլ՝ առանձին շրջանակների հատուկ քաղաքականության: Բանն այն է, որ ըստ կանոնադրության՝ ՀԱՊԿ նպատակն է անդամ պետությունների անկախության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության կոլեկտիվ պաշտպանումը, որի հարցում կազմակերպությունը նախապատվությունը տալիս է քաղաքական միջոցներին[150]: Ճիշտ է՝ այդպիսի միջամտությունը հնարավոր է, եթե ստացվի անդամ պետության դիմումը, սակայն Հայաստանի պարագայում նման դիմումի կարիք չկա մի պարզ պատճառով, որ երկրի զինված ուժերը կարողանում են կատարել իրենց առջև դրված խնդիրը: ՀԱՊԿ միջամտության կարիքը չկա ոչ միայն բուն ռազմական, այլ նաև քաղաքական տեսանկյունից: Եթե վերհիշենք վերոբերյալ այն դրույթը, որ Ադրբեջանի գործողությունները հետապնդում են նաև երկարաժամկետ հոգեբանական նպատակ՝ խարխլելու Հայաստանի զորքի և բնակչության բարոյահոգեբանական ամրությունը, ապա կհանգենք նրան, որ ՀԱՊԿ միջամտությունը կարող է միայն սեփական կարողությունների նկատմամբ անհարկի անվստահություն առաջ բերել մեզանում[151]:

Հայաստանյան բնակչության շրջանում որոշ չափով տարածված մտայնություններից է նաև այն, որ սահմանին կանգնած երիտասարդ զինվորները պետք է փոխարինվեն առավել փորձառու և ոչ երիտասարդ անձանցով՝ պայմանագրային զինծառայողներով, «կռված տղեքով»: Գոյություն ունի նաև այս կարծիքի էլ

ռապետություն», 9 սեպտեմբեր 2015, թիվ 158(6204), էջ 3:

150 Устав Организации Договора о коллективной безопасности, հոդված 3, 7 հոկտեմբերի 2002 թ., http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=124 (հղվել է 18.10.2015):

151 Ասվածից չի հետևում, որ որպես անդամ պետություն՝ Հայաստանն առհասարակ չի կարող օգտվել ՀԱՊԿ ներուժից և գործիքակազմից՝ ըստ կարելվույն պատասխանելու Ադրբեջանին: ՀԱՊԿ շրջանակներում արդյունավետ քաղաքականություն կարող են լինել ինչպես ադրբեջանական ագրեսիան դատապարտող համատեղ հայտարարությունների ընդունումը, այնպես էլ կազմակերպության ներսում միմյանց առջև ստանձնած անվտանգային պարտավորությունների կատարումը և անդամ պետության համար միմյանց կողմից անուղղակի անվտանգային սպառնալիք չստեղծելը, որպիսին է նաև հարձակողական տիպի զինատեսակների վաճառքը Ադրբեջանին:

ավելի ծայրահեղ դրսևորումը, որ «ժամանակն է լիովին անցում կատարելու պրոֆեսիոնալ բանակի»: Այս առնչությամբ տեղին ենք համարում մեջբերել դեռևս 2014 թ. օգոստոսի 12-ին Արծրուն Հովհաննիսյանի այն պարզաբանումը, որ ամբողջովին փոխարինել 18-20 տարեկան ժամկետային զինծառայողներին տեխնիկական հավաստանշման սարքերով կամ պայմանագրային զինծառայողներով ու Արցախում կռված հին սերնդի տղաներով սխալ է, քանի որ որպես պատերազմող երկիր՝ մենք կարիքն ունենք պատերազմող ռեսուրսի մշտական սերնդափոխման, և անթույլատրելի կլինի, եթե 10 տարի հետո, երբ հին սերունդն արդեն ծերացած լինի, մենք պատերազմի վտանգի առաջ չունենանք մարտական դիրքերում ծառայություն անցնելու փորձառությամբ զինծառայողներ[152]: Որքան էլ բարդ հնչի սա անձնային տեսանկյունից, փաստ է, որ ներկա տարածաշրջանային, բայց և հատկապես հայաստանյան ժողովրդագրական իրողությունները թելադրում են այսպիսի քաղաքականություն մեր ռազմական պատասխանատուների կողմից:

Նախորդ մտայնության հետ որոշակի ընդհանրություն ունի բնակչության շրջանում լայնորեն տարածված մյուս կոչ-պահանջը, որ երկրի զինված ուժերը անհամաչափ ու խորտակիչ հարված հասցնեն Ադրբեջանին, որպեսզի վերջինս անկարող դառնա հետագա արկածախնդրություններ անել: Անշուշտ, հասկանալի է բնակչության մտահոգությունը պատերազմի շարունակման և դրա հետ կապված՝ անխուսափելի զոհերի առնչությամբ, մյուս կողմից, սակայն, պետք է հիշել, որ երկրի ճակատագրին առնչվող որոշումներն ընդունվում են բոլոր գործոնների սթափ և համակողմանի գնահատմամբ: Ճիշտ է, տեսականորեն այդպիսի «խորտակիչ հարված» կարող է լինել Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանական Հանրապետության տարածքի օրինական օկուպացիան մինչև Կուր և Արաքս գետերի միախառնման հատվածը, որից հետո Ադրբեջանը՝ ներկայիս տեսքով, կդադարի գոյություն ունենալ՝ բաժանվելով ավելի մանր էթնոլեզվական կազմավորումների: Անխոս, սա խաղաղություն կբերի թե՛ Հա-

[152] 5-օրյա միկրոպատերազմ..., նույն տեղում:

յաստանին, թե՛ Ադրբեջանում հալածվող բնիկ ու ոչ թյուրքական ժողովուրդներին և թե՛ առհասարակ տարածաշրջանին: Այդուամենայնիվ, Հայաստանի ներկա ռեսուրսները, ցավոք, առայժմ չեն համապատասխանում նման օպերացիայի իրականացմանը, ուստի՝ պետք է պահպանել իրավիճակի ադեկվատ ընկալումը և գործել ըստ այդմ:

Հայ-ադրբեջանական ներկա պատերազմը բավականին բարդ հոգեբանական խնդիրներ է հարուցում թիկունքում: Պետական, բայց և ավելի շատ հասարակական գիտակ շրջանակների կողմից բնակչության հետ տարվող աշխատանքերի սակավությունը վերջինիս շրջանում ծնում է տեղեկատվական և գնահատողական վակուում, անորոշության զգացում: Չափազանց շատ են հնչում ընդհանրական առումով հետևյալ մտքին հանգող տեքստերը՝ «եթե պատերազմ է, թող ասե՛ն՝ իմանանք, գնանք մեր հողը պաշտպանենք, եթե պատերազմ չի, բա ինչո՞ւ են զինվորներ զոհվում»: Այս հարցի հետ սերտորեն կապված է նաև «վերջն ի՞նչ է լինելու» հարց-մտահոգությունը: Կարծում ենք, որ այս թեմաներով բնակչության տեղեկատվական սպասարկումը պետական և հասարակական շրջանակների կողմից պետք է իրականացվի քիչ թե շատ փոխհամաձայնեցված մեխանիզմով: Առաջին հերթին պետք է հստակորեն ախտորոշվի խնդիրը, այն է՝ Հայաստանի՝ պատերազմի մեջ գտնվելն Ադրբեջան պետության հետ և այդ պետության գոյությունն առհասարակ՝ որպես մշտական սպառնալիք Հայաստանին և հայությանը: Ասել է թե, քանի դեռ Ադրբեջանը ներկա տեսքով գոյություն ունի, և քանի դեռ Ադրբեջանի ռազմավարական իդեան հանգում է Հայաստանի ամբողջ տարածքի գրավմանն ու հայության չտարբերակված խոցմանը, պատերազմը շարունակվում է:

Նման պայմաններում բնակչության, հատկապես թիկունքի հիմնական անելիքը կարող է կապվել ժողովրդագրական գործոնի հետ: 2002 թ. հուլիսին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, պատասխանելով մի մտահոգ քաղաքացու հարցին առ այն, թե նախարարն ինչպես է պատկերացնում հայոց բանակի համալրման խնդիրը մի քանի տարի անց, երբ Հայաստանում արդեն ուժգնորեն զգալի կլինի ծնելիության ավելի քան կրկնա-

պատիկ նվազումը[153], մասնավորապես ասում է. «Հայոց բանակի ապագան ես պատկերացնում եմ շատ հստակ. այն կլինի բնականոն զարգացող, մարտունակ և ոչ մեծ թվաքանակ ունեցող: Այդ խնդիրներին մենք կսկսենք առնչվել 2012-2015 թթ. ընթացքում, բայց ես հույս ունեմ, որ այն ժամանակ արդեն մեր խնդիրները լուծված կլինեն, և մեր պետությունն ու ժողովուրդը պարտադրված չեն լինի ունենալ մեծ բանակ ու ծախսել այդքան մեծ միջոցներ»[154]: Խնդիրը, սակայն, ինչպես կարելի է տեսնել, լուծված չէ, և բանակի կանոնավոր համալրման հարցը շարունակում է գերխնդիր մնալ մեզ համար: Առհասարակ գաղտնիք չէ, որ մեր երկրի առջև ծառացած խնդիրների մի զգալի մասը, այդ թվում՝ պաշտպանունակության հարցը, մեծապես կապված է ժողովրդագրական գործընթացների հետ: Վերջիններիս կապը բանակային եղելությունների հետ ակնհայտ է, քանզի բնակչության աճին զուգահեռ՝ ավելի հեշտ կլուծվեն բանակի սպասարկմանն առնչվող հարցերը, այդ թվում՝ ԶՈՒ կազմում պայմանագրային զինծառայողների թվաքանակի ավելացումը, մարտական հեռակետերի պաշտպանվածության բարձրացումը և, ի վերջո, ժողովրդագրական ռեսուրսի հարցում Ադրբեջանի դեմ մրցունակության ամրապնդումը:

Ինչ վերաբերում է ռազմաքաղաքական ղեկավարության անելիքներին, ապա երկրի պաշտպանության ամրապնդումը, հայ-ադրբեջանական հակամարտության մեջ Թուրքիայի ներգրավվածության առավելագույն բացառումը և որպես առավել ռիսկային շրջաններ՝ Արցախի և Սյունիքի[155] ժողովրդագրական կա-

---

[153] 1990 թ. ծնվել է 79885 երեխա, 1999 թ.-ին՝ 36502, 2000 թ.-ին՝ 34276, 2001 թ.-ին՝ 32065, 2002 թ.-ին՝ 32380 (տես **Այվազյան Արմեն**, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրները և Հայաստանի աշխարհառազմավարական դրությունը, *Հայաստանի ապատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը (վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի)*, Երևան, 2006, էջ 153):

[154] Նույն տեղում, էջք 153-154:

[155] Ռիսկային շրջանների որոշարկման մեթոդաբանական հիմքը այն ենթաերկրաքաղաքական կացությունն է, որում գտնվում են Հայաստանի մարզերը: Արցախի և Սյունիքի պարագայում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշխարհագրական գործոնով պայմանավորված՝ վերջիններս ամենաթույլն են բաղխյուսված մնացյալ Հայաստանին, ցայսօր ընդամենը մեկ մայրուղով (Մ-12) են կապված մյուս մարզերի հետ և նաև թե արևմուտքից (Նախիջևանի Ինքնավար

ցության բարելավումն առաջնակարգ պարտականություններ են: Ռազմաճակատում պետք է շարունակել հավատարիմ մնալ համարժեք պատասխանի քաղաքականությանը՝ նպատակ հետապնդելով Ադրբեջանի կողմից հայկական ռազմական թիրախներին հարվածելը վերջինիս համար դարձնել բավականին թանկ և դժվար հաղթահարվող զբաղմունք:

Համփոփումն վերոգրյալի հարկ է նշել, որ մեր խնդիրն է առաջիկա տարիներին Ադրբեջանի նկատմամբ ապահովել ռազմավարական գերազանցություն: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է Հայաստանի ներսում հասնել բնակչության քանակական և որակական համաչափ աճի, ասել է թե՝ երկրի բնակչության թվաքանակի աճի խթանումն ու վերջինիս պրոֆեսիոնալ մրցունակության ամրապնդումը պետք է լինեն առաջնահերթությունների առաջնահերթությունը՝ թե՛ պետական, թե՛ հասարակական մակարդակով և թե՛ հատկապես զինված ուժերում: Թշնամու հանդեպ բոլոր ոլորտներում ռազմավարական գերազանցություն ապահովելու հարցում օրախնդիր պետք է լինի նաև հայաստանյան ադրբեջանագիտական ենթակառուցվածքի ստեղծումն ու զարգացումը՝ որպես պատերազմական պայմաններում ռազմաքաղաքական ղեկավարության, բանակի և հասարակության համապատասխան երկրագիտական, վերլուծական և լեզվիմացական կարիքները սպասարկող կայուն հանրակարգ:

2014-2015 թթ. պատերազմի հիմնական դասերից մեկն այն է, որ թշնամուն հակահարված տալու և խաղաղությունը վերահաստատելու միակ արդյունավետ մեխանիզմը մարտունակ բանակ ունենալն է: Միակ գործոնը, որ Ադրբեջանին հետ է պահում լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսումից, հայկական զինված ուժերն են, որ վստահորեն պաշտպանում են հայ-ադրբեջանական սահմանն ամբողջ երկայնքով: Բացի այդ՝ ներկայիս իրավիճակը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Արցա-

---

Հանրապետություն), թե՛ արևելքից (Ադրբեջանական Հանրապետություն) գտնվում են թշնամու կողմից հարձակման ամենաուղղակի վտանգի տակ: Ասվածը չենք կարող արտածել Տավուշի մարզի վրա, որտեղ նույնպես պատերազմական գործողություններ են ընթանում, որը, սակայն, սույն մեթոդաբանական տարորոշման պարագայում չի համարվում ռիսկային գոտի, քանզի ավելի սերտ է ինտեգրված մնացած մարզերին, այդ թվում՝ հաղորդակցային առումով:

խի տարածքի ամբողջականությունը, պատերազմի ընթացքում ազատագրված բոլոր շրջանների հայաստանապատկանությունը մեր պետության լինելիության հուսալի գրավականն են: Ազատագրված Արցախի հողը, որին իրենց արյունն են շաղախում արդեն մերօրյա հերոսները, պիտի դառնա Հայաստան պետության մշտակայուն զարգացման մեկնակետը…

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(1994 - 2014)

Կյանքը՝ կարճ,
Գործը՝ մեծ

Ծնվել է 1994 թ. հունիսի 30-ին Երևան քաղաքում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2014 թ. հունվարի 20-ին Մարտակերտի շրջանում:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է Եռաբլուր զինվորական պանթեոնում:

Արմեն Հովհաննիսյանը ծնվել է 1994 թվականի հունիսի 30-ին: Ընտանիքում ամենափոքրն էր և միակ արու զավակը: Մշտապես շրջապատված էր երեք քույրերի, ծնողների, տատի սիրով և հոգատարությամբ: Ծիծաղկոտ, աշխույժ և ուրախ երեխա էր, մյուսների համեմատ՝ ավելի փարթամ ու բարձրահասակ:

Ճերմակամաշկ, խոշոր աչքերով փոքրիկ Արմենը դեռ մանկուց հեշտությամբ կարողանում էր համախմբել բոլորին. անսահման ընկերասեր էր ու բարի: Արդեն պատանի հասակում Արմենի մեջ նկատվում էր խիզախությունը, որը հետո պիտի վերածվեր նաև անձնազոհության և վճռական դեր խաղար Արմենի կյանքում:

Արմենն ավարտել է Երևանի՝ Գրիգոր Բաղյանի անվան թիվ 141 դպրոցը: Որոշ ժամանակ ըմբ-

շամարտով զբաղվելուց հետո Արմենը սկսել է հետաքրքրվել արվեստով, հատկապես նկարչությամբ և քանդակագործությամբ: Այդ հարցում հավանաբար դեր է խաղացել նկարիչ-խեցեգործ քույրը: Մինչ զինվորական ծառայությունն Արմենը շուրջ 3 տարի սովորել է Մշակույթի պետական քոլեջի կինոսարքավորումների և տեսատեխնիկայի բաժնում. մեծ ցանկություն ուներ դառնալ օպերատոր:

Հանձնելով վերջին քննությունները՝ հենց ծննդյան օրն Արմենը զորակոչվել է բանակ: Նա առանց վարանելու ցանկություն է հայտնել ծառայել Արցախում, քանզի համոզված էր՝ «Ինչքան պոստ պահող տղա կա՝ սաղ թագավոր տղերք են»[156]: Զինվորական կյանքն անցկացնում էր առանց տրտնջալու, տղամարդուն վայել տոկունությամբ: Ծնողները երբեք չեն զգացել, որ տղան դժգոհի որևէ բանից: Վերջին անգամ, երբ խոսել է ընտանիքի անդամների հետ, վստահեցրել է, որ ամեն ինչ կարգին է, որ դիրքերն ամուր են: Ծնողներին ուղարկել էր կտորի վրա մի գրություն՝ խաչով և մակագրությամբ՝ «Աստված պահպանի ծնողներիս»: Մայրը՝ տիկին Մարինեն, տղայից մնացած այս փոքրիկ կտորն անընդհատ կարդում է և հպարտանում իր դաստիարակած ծնողասեր և հայրենասեր զավակով:

Ծառայության ընթացքում Արմենը ծնողներին հայտնել է սերժանտական դասերին մասնակցելու իր ցանկության մասին: Մոր անհանգստությանն ի պատասխան՝ ասել է՝ «դա ինձ պետք է, մա՛մ»: Մայրը հարցրել է.

- Հնարավո՞ր է՝ վերջում էլ զինվորական դառնաս:

Արմենը պատասխանել է.

- Շատ հնարավոր է...

---

[156] Այս խոսքը մահից երեք օր առաջ Արմեն Հովհաննիսյանի վերջին հրապարակային գրառումն էր, որ հետագայում վերածվեց թևավոր խոսքի:

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

Հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը՝ ժամը 23:50-ից մինչև 00:15-ի սահմաններում, հայ-ադրբեջանական հրադադարի գծի հյուսիսարևելյան (Ջրաբերդ) և հարավարևելյան (Կորգան) ուղղություններում արձանագրվեցին թշնամու դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր: Բռնկված փոխհրաձգության ժամանակ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում իր առջև դրված խնդիրն արիաբար կատարելու ժամանակ զոհվեց կրտսեր սերժանտ, ջոկի հրամանատար Արմեն Հովհաննիսյանը:

Որքան ժամանակ անցնի, այդքան ավելի դժվար է լինելու կեսգիշերին տեղի ունեցած դեպքերի հաջորդականությունը համադրելով հավատալ, որ այն ինչ եղավ, իսկապես իրականություն է: Բայց մենք փորձենք հավատալ և գալիք սերունդներին ավանդել այդ իրականություն-առասպելի հերոսական էջը...

2014 թվական: Հունվարի 19-ը: Գիշեր: Թշնամու՝ մինչև ատամները զինված հատուկ ստորաբաժանման խմբերը մեր խրամատով շարժվում են առաջ: Հանդիպելով արգելապատնեշին՝ դարանակալում են: Թշնամու ներկայությունն առաջինը զգում է շունը: Սակայն որպեսզի կենդանին իր զգացածի մասին ազդանշան չտա, խլացուցիչ զենքով նրան սպանում են: Այդ պահին իր խրամատաբջջում մարտական հերթապահություն իրականացնող Արմենը բացառիկ զգոնության շնորհիվ նկատում է գլխավերևով անցնող փամփուշտը և անմի-

ջապես հաղորդում դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Սարգիս Թանանյանին: Հասկանալով իրավիճակի լրջությունը և թշնամու մեծաքանակ լինելը՝ լեյտենանտ Թանանյանը շրջանաձև պաշտպանության որոշում է կայացնում: Անցնելով թշնամու թիկունք՝ վերջինս նռնակներ է նետում նրանց ուղղությամբ, ինչից հետո սկսվում է փոխհրաձգությունը. մարտը ձգվում է շուրջ 30 րոպե: Դիվերսանտները, զոհերին ու վիրավորներին իրենց հետ տանելով, անկանոն փախուստի են դիմում:

«Հունվարի 19-ին առավոտվանից ամեն բան նորմալ էր, դիրքային հեթափոխները նորմալ կատարվում էին, - պատմում է մարտի ընթացքում հարևան դիրքից օգնության հասած գնդացրորդ, «Գարեգին Նժդեհ» մեդալով պարգևատրված Հրայր Համբարյանը:- Արմենենք մեր հարևան պոստում էին ծառայության, իրենց մոտ ևս նորմալ էր ամեն ինչ: Պոստերի մեջ կապ կա, իրար հետ կապվում էինք, իրազեկվում դրության մասին, հոգատարությամբ հետաքրքրվում իրավիճակից, տղաների որպիսությունից: Արդեն երեկոյան ժամը 7-ն էր, մութն ընկել էր, լուսինը լավ երևում էր, չնայած մի քիչ խավարոտ էր, առավոտյան մթնշաղի նման եղանակ էր: Շներն ակտիվ էին: Զգում էինք, որ ինչ-որ բան կատարվում է, շարժ կա, բայց ոչ ոք չէր պատկերացնում, որ դիվերսանտներ պետք է անցնեն: Փաստացի ստացվում է, որ այդ ժամանակ դիվերսանտներն արդեն անցել էին մեր տարածք ու դանդաղ դարանակալում էին: Ժամը 9-ի կողմերն էր, ես հերթափոխս հանձնել էի ու պառկել էի հանգստանալու, մեր տղաները, ովքեր որ դրսում կանգնած էին, ասացին, որ կրակոցներ են լսվում: Երբ դուրս եկանք, ահավոր ուժեղ կրակոցներ էր ամբողջ գծի 1-2 կմ-անոց երկայնքով: Հասկանալով եղելությունը՝ կազմակերպվեցինք, նետվեցինք առաջին գիծ,

որ մեր տղերքին կարողանայինք օգնել: Ես վերցրի զենք, մի ուրիշ զենք էլ վերցրի, նաև նռնականետ՝ չնայած, որ չէր թույլատրվում, բայց դրությունը լարված էր, մենք անում էինք՝ ինչ կարող էինք, մեզ վրա կրակում էին խոշոր տրամաչափի զենքերից: Արդեն գնացինք այնտեղ: Խրամատով վազում էինք 30-40 սմ կրակոցների տակ: Երբ հասանք տեղ, հակապայքար էր ընթացել արդեն: Ուղղակի ոչ ոք չգիտի, թե ինչ կռիվ է տվել Արմենը: Պատմեն էլ՝ ոչ ոք չի պատկերացնի: Լինելով ջոկի հրամանատար՝ առաջինն էր նետվել առաջ, չէր թողել զինվորներն իրենից առաջ ընկնեն: Արմենը մարտը շարունակել էր մի քանի անգամ ծանր վիրավորվելուց հետո: Արմենի հոգատարությունը դրսևորվեց նաև այդ ժամանակ: Նա միշտ պատասխանատու էր զգում բոլորի համար, հոգատար էր: Արմենն այնքան ժամանակ է կռվել, կրակել, մինչև նռնականետի պայթյունից արդեն մահացու վիրավորվել էր ու այլևս չէր կարողացել մարտը շարունակել: Հակառակորդը մեզ վրա կրակել էր անձայն փամփուշտով: Դա անցնում է օդի շերտերը ծակելով, ու կարող են զգալ միայն շատ մոտ տարածությունից: Այդ ձայնն Արմենը որսացել էր ու հասկացել, որ ինչ-որ մի բան այն չէ: Մերոնք անցել էին շրջանաձև պաշտպանության, այնուհետև՝ հետ մղելուց հետո՝ հակահարձակման: Այդ ժամանակ Արմենը բարձրացել է հենց ուսումնասիրելու առաջին խրամատը, որ հասկանա՝ ուր է հասել

«Թագավոր տղերքը»

թշնամին, որ կողմից է, կողմնորոշվի՝ ոնց է պայքարելու: Հենց այդ ժամանակ էլ՝ մի քանի կրակոց արձակելուց հետո, վիրավորել են նրան: Ընդհանուր փոխհրաձգությունը 1 ժամ է տևել: Ամենաուժեղ՝ դիվերսիան հետ մղելու պայքարը տևել է 25 րոպե, ամբողջ ընթացքում Արմենը վիրավոր կռվել է: Հաջորդ կես ժամը նրանց դիրքերը ճնշելու գործողություններն էին»:

Արմենի մայրը՝ տիկին Մարինեն, հերոս որդու մասին պատմում է. «Մինչև հարևան դիրքերն ուշքի են եկել, դիվերսանտներն արդեն հասցրել են շրջափակել դիրքը: Եթե ճակատային մարտ լիներ, Արմենը հաստատ կենդանի կմնար: Նա գիտակցել է, որ թշնամին շատ մոտ է: Անընդհատ աչքիս առաջ ու մտքերումս այդ 25 մետրն է, ընդամենը 25 մետր հեռավորության վրա թշնամին դարանակալած է եղել: Նույնիսկ չեմ ուզում պատկերացնել, թե ինչ կկատարվեր դիվերսիան չկանխելու դեպքում... Հիմա երբ գիտակցաբար եմ փորձում վերլուծել, թե ինչ է կատարվել այդ օրը, հասկանում եմ, որ Արմենն ուներ երկու ճանապարհ՝ մահերից մեկնումեկը, և Արմենն ընտրել է պայքարը: Ես պետք է հարգեմ իմ տղայի որոշումը»:

Այսպիսով, մարտը հնարավոր է եղել շահել Արմենի զգոնության ու անձնազոհության շնորհիվ:

Դեպքից օրեր անց զորամասի հրամանատար, գնդապետ Էդվարդ Ասրյանը Մարտակերտի շրջա-

նի վարչակազմի «Ջրաբերդ» պաշտոնաթերթին տված հարցազրույցում այսպես է մեկնաբանել տեղի ունեցած իրադարձությունները. «Հակառակորդը, վարելով կրակային ազդեցություն մեր մարտական դիրքերի աջ և ձախ թևերի վրա, ծավալել է դիվերսիոն գործողություն, որի սկզբունքը եղել է հետևյալը՝ թևանցելով մարտական դիրքը ձախ թևից՝ դուրս գալ դիրքի թիկունք և ունեցած կրակային ազդեցության առավելության պայմաններում կիրառելով «Մուխա» տիպի զենք, ինչպես նաև անձայն խլացուցիչ կրակային միջոցներ, նռնակներ և տարբեր զինատեսակներ՝ ակտիվ կրակով խոցել մեր դիրքապահներին, ինչու չէ, նաև գրավել մարտական դիրքը: Սակայն մեր մարտական դիրքի զինծառայողները՝ կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը …, նրա հետ դիտորդ կարգված Նորայր Մկրտչյանը և մյուս վեց զինծառայողները դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Սարգիս Թանանյանի հմուտ, արհեստավարժ ղեկավարությամբ և նշված գործողության ընթացքում դիրքապահ գումարտակի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ Մնացական Ավագյանի հետ մեկտեղ, օգտագործելով մարտական դիրքում եղած նռնակները, վարելով հրաձգային զենքեր, կարողացել են հետ շպրտել հակառակորդի դիվերսանտներին՝ պատճառելով մարդկային և նյութական զգալի կորուստներ: Ջրաբերդի միայն մեկ մարտական դիրքում հաջողության հասնելու դեպքում հակառակորդը, օգտագործելով այդ հաջողությունը, կփորձեր մարտական գործողություններ ծավալել աջ և ձախ թևերում ու դա հիմք կընդուներ՝ հարձակվող ստորաբաժանումները մարտի մեջ մտցնելու համար: Բայց կարծում եմ՝ նրանք չունեին նման նպատակ. ըստ իս՝ նրանց նպատակն էր հունվարի 20-ի «սև օրվա»

առիթով՝ որպես վրեժխնդրություն, մտնել դիրք և սպանել դիրքապահներին»:

Առաջին իսկ օրվանից հայկական կողմը հայտարարեց, որ ադրբեջանցիներն ունեն մարդկային կորուստներ՝ 7 զոհ և 25 վիրավոր[157]: Միանգամայն տրամաբանության սահաններում էին հետագա օրերին Ադրբեջանի խղճուկ ջղաձգումները, ինչպես նաև խուճապահար գործողությունները՝ անվերջ կրակահերթերը հայկական գյուղերի ու դիրքերի ուղղությամբ: Ադրբեջանն այդպես էլ չխոստովանեց իր ամոթալի պարտությունը: Հետագա օրերին ադրբեջանական բանակում, իհարկե, եղան սպանվածներ ու վիրավորներ, բայց, ինչպես և սպասելի էր, դրանք «պայմանավորված էին» ամենատարբեր «դժբախտ պատահարներով», որոնք չգիտես ինչու, տեղի էին ունենում հենց առաջնագծում: Հետագա օրերին Ադրբեջանը մարտական կորուստների մասին ևս հայտարարեց, սակայն՝ պնդելով, որ դրանք գրանցվել են «Հայկական ԶՈՒ կողմից հրադադարի խախտման» հետևանքով:

ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական, ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանը, անդրադառնալով ադրբեջանցիների ճախողված դիվերսիային, գրում էր. «Այստեղ հարկ է հատուկ շեշտել. կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը զոհվել է մարտ վարելիս, ընկել, հիրավի, հերոսի մահով: ... Հենց այդ զգոնությունն է եղել մեր դիրքապահների հաջողության «գործի կեսը»»[158]:

---

[157] Մարտը տևել է ամբողջ գիշեր, և դիրքերից եկող կրակոցների ձայները լսելի են եղել Մարտակերտ քաղաքում: Հետագայում ականատեսները պիտի պատմեն, որ մարտակերտցի տղամարդկանց մի ստվար խումբ կամավոր և կազմ ու պատրաստ շարժվել է զորամասի ուղղությամբ, այնտեղից՝ ճակատ մեկնելու արտոնություն ստանալու համար:

[158] **Ջամալյան Դավիթ**, Խրամատային ճշմարտություն, *«Հայաստանի Հանրապետություն»*, 8 փետրվար 2014, թիվ 19(5828), էջ 3:

Հ.Գ. *Անհրաժեշտ է հատուկ հիշատակել, որ հայկական հետախուզությունը ժամանակին զեկուցել էր բարձր հրամանատարությանը, որ այդ գիշեր սպասվում է թշնամու դիվերսիոն ներթափանցում, և այդ մասին տեղյակ էին պահվել դիրքերի բոլոր պատասխանատուները: Արմեն Հովհաննիսյանի բանակային նոթատետրում պահպանվել է հերոսի գրառումն այն մասին, որ* ***հրամայված է ոչ մի պարագայում չհանձնել դիրքը…***

Մարտակերտի զորամասում Արմենի հիշատակին կանգնեցված հուշաքարը

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ խիզախության և անձնական արիության, մասնագիտական բարձր պատրաստվածության, ինչպես նաև կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս ցուցաբերած անձնվիրության համար Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2014 թ. հունվարի 22-ի ՆՀ- 7 –Ա հրամանագրով N զորամասի ջոկի հրամանատար, կրտսեր սերժանտ Արմեն Լևոնի Հովհաննիսյանը հետմահու պարգևատնվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտ-



Զորանոցի սենյակում զինվորների նախաձեռնությամբ կահավորված հիշատակի անկյունը

պանության բանակի N զորամասի կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Արմեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է ՊԲ հուշամեդալով (տրված հրամանատար Մովսես Հակոբյանի կողմից), «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով (տրված միության նախագահ Մանվել Գրիգորյանի կողմից), «Զինվորի պաշտպանության կոմիտե» հասարակական կազմակերպության «Զինվորի պաշտպան» մեդալով (տրված կազմակերպության ղեկավար Գոհար Արմենակյանի կողմից), «Մայրություն» հասարակական կազմակերպության «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով (տրված կազմակերպության ղեկավար Հասմիկ Միքայելյանի կողմից), հայրենիքին մատուցած ծառայության համար ««Շուշի 92» ազատամարտիկների և վետերանների միավորում» հասարակական կազմակերպության մեդալով[159] (տրված կազմակերպության նախագահ Իշխան Սարգսյանի կողմից), «Աբովյանի ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության մեդալով (տրված նախագահ Վեներա Գյուլինյանի կողմից), «Ոսկե եղնիկ» բարձրագույն շքանշանով (տրված Կիպրոսի սկաուտական շարժման հայտնի գործիչ, ավագ արիապետ Հարություն Անմահունու կողմից և փոխանցված Սեյրան Օհանյանի միջոցով):

[159] Ուշագրավ է, որ Արմենն այդ մեդալի երկրորդ շքանշանակիրն է. առաջինը շնորհվել է Արկադի Տեր-Թադևոսյանին:

Մարտակերտի զորամասում ի հիշատակ Արմեն Հովհաննիսյանի՝ տեղադրվել է հուշաքար (հեղինակ՝ Արմեն Սամվելյան)՝ «Բոլոր դիրքապահները թագավոր տղերք են. Աստված պահապան բոլոր զինվորներին» գրությամբ[160]:

Այն մարտական դիրքում, որտեղ կռվել և զոհվել է Արմեն Հովհաննիսյանը, տեղադրվել է հերոսի հիշատակին նվիրված փոքրիկ խաչքար:

Նարեկ Սամվելյանի հեղինակությամբ պատրաստվել է Արմեն Հովհաննիսյանի դիմաքանդակը, որի բնօրինակը պահվում է «Մայր Հայաստան» զինվորական թանգարանում, որտեղ նաև ցուցադրված են հերոսի որոշ անձնական իրեր:

Արմենի անունով հայրենասիրական դաստիարակության և հայոց պատմության դասարան է բացվել հերոսի ուսանած թիվ 141 դպրոցում: Ստեղծվել է նաև փառքի անկյուն, որտեղ տեղադրված է Արմենի դիմաքանդակի կրկնօրինակը:

Երևանի մշակույթի պետական քոլեջի (կինոտեխնիկում) լսարաններից մեկը նույնպես կրում է Արմեն Հովհաննիսյանի անունը:

2014 թ. դեկտեմբերի 23-ին հայրական տան՝ Ավան վարչական շրջանի 14-րդ փողոցի 8-րդ տան պատին տեղադրվեց Արմեն Հովհաննիսյանի անունը հավերժացնող հուշատախտակը՝ «Այս տանը գտնվում է Արմեն Հովհաննիսյանի փառքի անկյունը» գրությամբ:

Արմենի զորանոցի սենյակում զինվորների նախաձեռնությամբ կահավորվել է վերջինիս հիշատակի անկյունը՝ սև ժապավենով երիզված դիման-

---

[160] Հետագայում ուշադիր դիտելով հուշաքարի բացման վավերագրական կադրերը՝ Արմեն Հովհաննիսյանի ծնողները պիտի նկատեն զինվորական շարքում կանգնած Զորիկ Գևորգյանին, ով բացառիկ արիություն ցուցաբերելով՝ անհավասար մարտում հերոսաբար զոհվեց նույն թվականի օգոստոսի 2-ին...

Հուշաքարին հինկիլիկիական մեջբերումները զուգահեռ՝ տեղ է գտել Արմենի՝ թևավոր դարձած խոսքը

կարով, մատուռի մանրապատկերով և «Իմացյալ մահն անմահություն է» գրառմամբ:

Արմեն Հովհաննիսյանի անվան դասարան է բացվել Երևանի՝ Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցում, որտեղ տեղադրված է հերոսի դիմաքանդակի կրկնօրինակը: Դիմաքանդակի մյուս կրկնօրինակը գտնվում է Արմեն Հովհաննիսյանի հայրական տանը՝ հերոսի փառքի անկյունում:

Արմեն Հովհաննիսյանին են նվիրված շուրջ երկու տասնյակ բանաստեղծություններ և երեք երգ[161]:

«Դե ֆակտո» հասարակական-քաղաքական ամսագիրը 2014 թվականի «Տարվա մարդ» է ճանաչել Արմեն Հովհաննիսյանին: Համանուն կոչման Արմենին արժանացրել է նաև Հանրային հեռուստատեսության առաջին լրատվական ծառայությունը:

«AAD.am» կայքի 5-րդ հոբելյանական տարեդարձին նվիրված մրցանակաբաշխությանն Արմեն Հովհաննիսյանն արժանացել է «Տարվա սխրանք»

---

[161] Այդ երգերն են՝ «Քաջ զինվոր» (խոսք՝ Աշոտ Գալստյան, երաժշտությունը և կատարումը՝ Վարդան Գալստյան, https://www.youtube.com/watch?v=kSNQOG3gyJ0), «Զինվոր» (խոսք՝ Սիլվի Հովհաննիսյան, կատարող՝ Արման Խաչատրյան, https://www.youtube.com/watch?v=5Ip3qlN9Sh4), «Փառք մեր հերոս Արմենին» (հեղինակ և կատարող՝ Օնիկ Գալստյան, https://www.youtube.com/watch?v=o04utFllW68): Բացի այս՝ Արմենի զոհվելուց հետո երգչուհի Սիլվա Հակոբյանը հայտարարեց, որ զինվորի հիշատակին է նվիրում իր երգած երգերից «Ով հայ»-ը (հեղ.՝ Մանե Հակոբյան, https://www.youtube.com/watch?v=fGS7Zbj0bpU):

կոչում-անվանակարգին:

2014 թ. օգոստոսի 8-ին «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպության պատանիները «Պատիվ ունեմ» ռազմահայրենասիրական ծրագրի շրջանակներում հիշատակի և մեծարման այց են կատարել Արմեն Հովհաննիսյանի տուն:

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Արմենը գնում է դեպի հավերժություն: Շատ կարճ իր երկրային կյանքում նա ապահովեց իր հավերժական կյանքը երկնքում: Արմենն ընկերների հետ միասին կարողացավ ետ մղել թշնամուն և մեծ կորուստներ պատճառել նրան: Ադրբեջանական՝ մինչև ատամները զինված ստորաբաժանումները մեր զինվորների կողմից կատարած գործողությունների արդյունքում փախան, ետ շպրտվեցին: Մնաս բարով, Արմեն»:

Սեյրան Օհանյան, *ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ*

«Ես երևի միայն ինձ համար չէի լույս աշխարհ բերել Արմենին, հիմա նոր եմ դա հասկանում: Ցավը միայն ուզում եմ իմը լինի, բայց երբ անընդհատ մարդիկ են այցելում, զանգում, գրում, արդեն գիտակցում եմ, որ իրոք, միայն ինձ համար չէի բերել… Թող Արմենի նման տղաներ շա՛տ ծնվեն»:

Մարիեն Հովհաննիսյան, *հերոսի մայրը*

«Տարիքը կապ չունի, երբ հայրենիքի համար զէնք են բռնել, քանզի Հայաստանը հազարամեակներով այդպէս է պահուել: Նահատակութեամբ

կեանքեր կրճատուելով է հայրենիքների կեանքի գոյատեւումը... Հողը, դրօշը սուրբ են, երբ արիւնոտ են... Արմէնի սխրանքը եւ բոլոր արմէնները ողջերին դա են յիշեցնում եւ պարտաւորեցնում»:

Շահէ Ամեմեան, *«Խաչակիրներ» ջոկատի շտաբի պետ, ազատամարտիկ*

«Փառք ու պատիվ, որ Արմենի տեսակը կա: Մեծ օրինակ էր մեր զինվորների համար, քանզի նա ապրեց կարճ, բայց իմաստով լի կյանք: Թող օրինվեն Արմենի ծնողները, որ նրան սնել են մարդ: Հաստատ համոզված եմ, եթե ինքը կենդանի լիներ, մի օր մեր ընկերը կդառնար: Մեր պետության ուժը Արմենի տեսակի մեջ է»:

Մկրտիչ Մկրտչյան, *ազատամարտիկ, հայրենասիրական երգերի կատարող*

«Արմենի նման բարեխիղճ, հասնող, բարի, նրբանկատ, ուշադիր ջոկի հրամանատար մեր զորամասն էլ դժվար թե կյանքում ունենա: Երբ իր ջոկում մեկը մի բան չէր հասցնում, ինքն էր անում իրենց տեղը: Սիրում էր կազմակերպվածություն, ժամանակը տնօրինում էր հրաշալի: Մաքրության ժամանակ սովորաբար ջոկի հրամանատարները կանգնում են, հրամաններ են տալիս, իսկ Արմենը մեզ հետ հավասար մաքրություն էր անում, մեզ սիրում էր, հարգանքով էր վերաբերվում»:

Հրայր Համբարյան, *ծառայակից ընկեր*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՄԵՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ոտքի ելար արիաբար,
Երբ գիշերվա տարաժամին
Սրտաղողող ու նենգաբար
Էն թշնամի նենգ բորենին—
Մտքին դրեց սահման անցնել,
Ու մեր խաղաղ քունը առնել:
Եվ Դու ելար դեմը նրա՝
Քո մարտակից ընկերներով,
Ու էդ կռվում՝ հանկարծահաս
Ընկար՝ քաջին արժան մահով....
Ընկար, բայց լոկ ֆիզիկապես,
Հավերժացար դու հոգեպես...
Ու ջերմ սրտում՝ ամեն հայի,
Գրեցիր քո անունն արի:
Ընկար, Հերո՛ս, քաջի նման,
Ու միացար մեր լավերին,
Որ երկնքիցը արծվի նման
Հսկում են մեր սահմաններին:
Հանգչի՛ր հերոս, քնիր խաղաղ,
Գործդ կիսատ չի էլ մնա,
Կանգուն են ձիգ ու մշտարթուն
Ընկերներդ՝ «պոստի» վրա:
Կանգուն են, ու այսուհետև
Էլ ո՛չ մի թուրք չի հանդգնի
Հաջորդ անգամ փորձի թեթև
Հավքի թևով սահմանն անցնի:
Հանգչիր խաղաղ... հոգուդ համար
Քույրերդ են աղոթք անում,
Հայրենիքիդ սահմաններն էլ՝
Եղբայրներդ են պաշտպանում...

Հեղ.՝ *Հրայր Ղուլինյան*, 23.01.2014 թ.

* * *

Մայրը փոքրիկին օրոր էր ասում՝
Երգելով անուշ, դուրեկան ձայնով,
Փոքրիկը քիչ-քիչ քնով էր անցնում,
Մոր ձայնը լսում, մերթընդմերթ ժպտում:

Իսկ մոտ սահմանին այդ մութ գիշերում
Կանգնած՝ զինվորը Հայոց բանակի,
Զգոն քայլելով ցուրտ խրամատում՝
Հսկում էր խաղաղ քունը փոքրիկի:

Պատռեցին հանկարծ անդորրն այդ խավար,
Անթիվ, անհամար, շատ կրակոցներ,
Մարտնչել սկսեց հայ ազգի համար
Հայորդին մեր քաջ, արի, անձնվեր...

...Բացվեց նոր խաղաղ, պայծառ առավոտ,
Փոքրիկը կրկին ժպտաց մայրիկին,
Իսկ զինվորները՝ տխուր, բայց հպարտ,
Քաջի դիակին լուռ խոնարհվեցին....

Հեղ.՝ *Սաթենիկ,* 29.01.2014 թ.

ԱՐՄԵՆ

(հայրենեաց սիրոյն զոհուած
Արմէնի յիշատակին)

Այդ ե՞րբ էր արդյոք՝ մի հին ժամանակ,
Երբ քսան քաջեր՝ պատրաստ, զինավառ,
Ջարդ էին տալիս՝ ահեղ, խոլական,
Մի ողջ բանակի՝ վայրագ ու օտար...

Երե՞կ էր արդյոք, երբ այդ նույն զարմից,
Մի խումբ՝ փոքրաթիվ, բայց հոգով՝ արի,
Փակված հին վանքում՝ հեռու աշխարհից,
Կռվեց ու հաղթեց հազար հազարի...

Չկա մի վկա, որ ըստույգն ասի,
Բայց հավատում ենք մենք ասքին ալեհեր,
Չկա գեթ մի շունչ՝ ցայսօր կենդանի,
Մատյաններն են լոկ այս մասին պատմում:

Բայց արդեն այսօր՝ դարում մեր այս հին,
Դարում՝ կլանող, ագահ, մարդատյաց,
Հյուսվեց մի նոր ասք՝ մեր աչքի առաջ,
Որ դարձավ պատիվ, առասպել ու հիմն:

Ինը ռազմիկներ՝ Հայոց աշխարհի,
Խոշտանգված սրտում Խաչեն աշխարհի,
Երազ ու մուրազ սրտում անթեղած,
Կռվեցին ընդդեմ մռայլ ոսոխի:

Եվ մի պատանի՝ հաստատ, աննահանջ,
Իր պես վիրավոր իր հողին կառչած
Միայնակ կռվեց, թիկունք չդարձրեց,
Նա հայրենիքին չդավաճանեց...

Ու նա պառկած է մահվան անկողնում,
Մռայլ հայացքն է վրեժով լեցուն,
Վերջին հյուրերին՝ հրաժեշտի եկած,
Ասում է կարծես՝ պատգամ մոռացված –

«Իմ արևը՝ ձեզ, անծանո՛թ հայեր,
Հողին դուք տվեք մարմինս խոցված,
Բայց հոգիս հավետ կենդանի պահեք
Դուք ձեր սրտերում սերնդե սերունդ»...

Արաքսը ոռնաց՝ վշտից խելագար,
Մասիսը գերված՝ հային կարոտեց,
Եվ միայն հողը՝ քաջեր ամբարած,
Ջինվոր զավակին իր գրկում պահեց...

Հավաքված մեկտեղ՝ լեռներն Արցախի
Միմյանց պատմեցին արարքը քաջի,
Մարդիկ լսեցին նորեն ու նորեն,
Ուխտեցին ապրել ու մնալ ԱՐՄԵՆ:

Հեղ.՝ *Աղդամ*, 21-22.01.2014 թ.

ԱԶԱՏ ԱՐԹՈՒՐԻ ԱՍՈՅԱՆ
(1994 – 2014)

Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի զարկն եմ քո բազկի...

Ծնվել է 1994 թ. հուլիսի 26-ին Ռուսաստանի Դաշնության Սամարա քաղաքում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2014 թ. հուլիսի 31-ին Մարտակերտի շրջանում:

«Մարտական ծառայության համար» մեդալի (ՀՀ) և «Երախտագիտություն» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է Եռաբլուր զինվորական պանթեոնում:

Ազատ Ասոյանը ծնվել է 1994 թվականին Ռուսաստանի Դաշնության Սամարա քաղաքում: Ասոյանների ընտանիքի երկու արու զավակները ծնվել էին նույն օրը՝ մի քանի տարվա տարբերությամբ: Ազատն ընտանիքի անդրանիկ զավակն էր: Նա դեռ մանկությունից սիրում էր այն ամենը, ինչ շրջապատում էր իրեն՝ տունը, խաղալիքները, դասագրքերը, հայրենիքը: Նա միշտ առանձնանում էր շրջապատում իր էներգիայով ու մյուսների նկատմամբ դրական վերաբերմունքով:

Ավարտելով դպրոցը՝ Ազատ Ասոյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետ: Ուսումնառության ընթացքում զորակոչվում է բանակ: Կրթությանը զուգահեռ՝ Ազատը սիրում էր զբաղվել սպորտով: Ձյուդոյի

«Ես գտնվում եմ ամպերից վերև, որտեղ ամպերը ծածկում են սարերը, բայց ոչ ինձ»...

81 կգ քաշային կարգում ՀՀ պատանեկան (2009 թ.) և երիտասարդական առաջնությունների (2010 թ.) հաղթող և մրցանակակիր էր, արժանացել էր բազմաթիվ մեդալների ու պատվոգրերի: Զբաղվել է նաև սամբոյով:

Ազատն առանձնակի ակնածանք էր տածում մեր բանակի նկատմամբ: «Բանակ... էս բառի մեջ էնքան իմաստ կա, որ սկսեմ բացատրել, չեմ ավարտի»,- կարդում ենք հերոսի երկտողերից մեկում: Նա իր պարտքն էր համարում հայոց սահմանները պաշտպանելը և սիրում էր կրկնել՝ «Այնպես պետք է ծառայեմ, որ զորամասում ինձնից հետո շատ խոսեն»: Հիշելով որդու այս խոսքերը՝ հերոսի մայրը՝ Մանուշակ Բալյանը, խորհուրդ է տալիս այսօրվա երիտասարդներին չվախենալ սահմանը պաշտպանելուց: «Երբ զինծառայության ընթացքում Ազատն արձակուրդ էր գալիս, օրերն էր հաշվում, թե երբ պետք է զորամաս վերադառնա»,- հիշում է հայրը՝ Արթուր Ասոյանը: Նույնն է հաստատում և մայրը. «Ազատը հաճույքով է ծառայել, Երևան գալով՝ կարոտում էր Արցախը, անտառները, «Եղնիկները»»[162]: Ընկերները նույնպես հիշում են, որ Ազատը բնության մարդ էր, բնության մեջ իրեն ներդաշնակ էր զգում:

«Բարձրանում եմ սահմանը պաշտպանելու...

[162] Մարտակերտի շրջանի հյուսիսում տեղակայված ՊԲ N զորամասի և վերջինիս մարտական դիրքերի ոչ պաշտոնական անվանումը:

Լա՛վ մնացեք»: Սա Ազատի վերջին հրապարակային գրառումն էր…

Ազատ Ասոյանը զոհվեց 2014 թվականի հուլիսի 31-ին թշնամու հատուկ նշանակության դիվերսիոն խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս: Նրա սխրանքն ապրողներիս թողեց հիշատակ և պատգամ՝ արժևորելու զինվորի գործն ու նվիրումը: Պատգամ, որ իրեն հատուկ թեթևությամբ և պարզությամբ ազգին էր հղել 2014 թվականի Ամանորի գիշերը[163].

- Սիրելի հայեր … ցանկանում եմ ձեզ ամենալավն ու բարին, հա՛, մեկ էլ՝ սեր, որովհետև սերը ուժեղ բան ա, պոստերում ընկերոջ հանդեպ սերը փրկում ա իր կյանքը: Սիրեք իրար և ուրախացեք: Ինչ մնում ա անվտանգությանը, թողեք մեզ վրա: Հարազատներ ջան, ուզում եմ հիշեցնեմ, որ զինվորի շնորհիվ ա, որ դուք հանգիստ քնում եք կամ Ֆեյսբուք եք մտնում: Խնդրում և պահանջում եմ՝ մի՛ արհամարհեք նրանց:

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

2014 թ. հուլիս-օգոստոս ամիսներին թշնամու կողմից հրադադարի ռեժիմի խախտումները դարձան ավելի հաճախադեպ և արդեն հետագայում հայկական կողմից սահմանվեցին որպես հնգօրյա միկրոպատերազմ:

Մի կողմից՝ ռազմավարական նպատակ հետապնդելով հրադադարի գծի երկայնքով ռազմական գործողություններն ակտիվացնելու միջոցով

[163] Գրառումը ներկայացնում ենք առանց էական կրճատումների և խմբագրումների՝ կամենալով հարազատ մնալ բնագրի ոգուն:

հակամարտության «չմոռացված» լինելու պատրանք ստեղծել, իսկ մյուս կողմից՝ մարտավարական խնդիր ունենալով գերեվարել հայ դիրքապահներին և փոխանակել նրանց Արցախում հուլիսի կեսերին ձերբակալված ադրբեջանցի դիվերսանտների[164] հետ՝ թշնամին հուլիսի 31-ին դիմեց հերթական դիվերսիայի, որը խափանելիս զոհվեցին Ազատ Ասոյանը, Արարատ Խանոյանը, ծանր մարմնական վնասվածքներ ստացավ շարքային Նորայր Քամալյանը: Հենց Նորայրի պատմածների շնորհիվ ենք կարողանում վերականգնել մարտի տեսարանը…

Առավոտյան 09:00-09:30-ի սահմաններում չորս հայ դիրքապահները միմյանցից որոշակի հեռավորության վրա արահետով գնում էին՝ ստանալու իրենց դիրքի համար բերված սնունդը. արդեն հասել էին մարտական դիրքերի միջանկյալ տարածքում գտնվող ջրի աղբյուրին: Սովորաբար, երբ դիրքապահները դիրքից արահետով գնում են սնունդը ստանալու, միայն մեկն է լինում զենքով, մյուսները՝ ազատ ձեռքերով, որ կարողանան տեղափոխել սնունդը:

Թփերի հետևում՝ տղաներից ընդամենը 2-3 մետր հեռավորության վրա, դարանակալած էին թշնամու չորս դիվերսանտներ: Առաջինը հենց Ազատն է ճյուղերի հետևում նկատում զենքի դուրս ցցված մասը և գոռում՝ «դիվերսիա ա»: Թշնամին կրակ է բացում հայ դիրքապահների ուղղությամբ: Ամենածանրը խոցվում է Արարատ Խանոյանը, իսկ Նորայրն ու Ազատը կարողանում են վիրավորումներով ձեռնամարտի բռնվել թշնամու հետ: Չոր-

---

[164] Խոսքը պետական սահմանն ապօրինի հատած Ադրբեջանական Հանրապետության քաղաքացիներ Շահբազ Չալալ օղլի Գուլիևի և Դիլհամ Գարդաշխան օղլի Ասկերովի մասին է, որոնք ձերբակալվեցին 2014 թ. հուլիսի կեսին:

ռորդ դիրքապահը կրակ արձակելուց հետո շտապում է հարևան դիրք՝ տեղեկացնելու դիվերսիայի մասին և օգնություն կանչելու:

Մինչ այդ Նորայրը խոցվել էր սրտի, կոկորդի ու բերանի հատվածում: Չնայած դրան՝ կարողանում է գետնին տապալել թշնամու մեկ դիվերսատի և սեղմել կոկորդը: Ազատի վիճակն ավելի բարդ էր. նա ծանր հրազենային վիրավորում էր ստացել: Դրանով հանդերձ՝ վիրավոր զինվորը ձեռնամարտի է բռնվում թշնամու դիվերսանտի հետ և մարտը տեղափոխում մի քանի մետր այն կողմ: Ազատին սպանում են, Նորայրը շարունակում է անհավասար մարտը՝ ի վերջո ստիպելով թշնամուն նահանջել:

Ազատ Ասոյանի աչալրջության և անօրինակ քաջության շնորհիվ տապալվում է անզեն հայ դիրքապահներին գերեվարելու թշնամու փորձը:

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար ՀՀ նախագահ Սերժ

Սարգսյանի՝ 2014 թ. օգոստոսի 2-ի ՆՀ-196-Ա հրամանագրով N զորամասի շարքային Ազատ Արթուրի Ասոյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով Ազատ Ասոյանը 2015 թ. մայիսի 9-ին հետմահու պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Արցախի ազատագրական պայքարում ցուցաբերած հատուկ ծառայությունների համար Ազատ Արթուրի Ասոյանը հետմահու պարգևատրվել է «Մայրություն» հասարակական կազմակերպության սահմանած «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով:

2015 թ. փետրվարի 24-ին ԵՊՀ ռեկտորատի, Իրավագիտության ֆակուլտետի ու «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի նախաձեռնությամբ համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում ռեկտոր Արամ Սիմոնյանի, պրոռեկտորների, դեկանների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների, ուսանողների, ՀՀ ՊՆ պաշտոնյաների և հերոսի ծնողների, դպրոցական ուսուցիչների, ընկերների, հարազատների ներկայությամբ բացվեց Ազատ Ասոյանի անվան լսարան:

2015 թ. փետրվարի 24-ին Համացանցում հրապարակվեց Ազատ Ասոյանին նվիրված «Օրորոցից

մինչև խրամատ» կարճամետրաժ տեսաշարը[165]՝ պատրաստված Ասոյանների ընտանեկան վավերագրերով:

2015 թ. մարտի 16-ին Երևանի՝ Սոս Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցում ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ներկայությամբ կազմակերպվեց հուշ-ցերեկույթ՝ նվիրված Ազատ Ասոյանին: Դիմելով աշակերտներին՝ նախարարը հպարտությամբ նշեց, որ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր շատ են այն տղաները, ովքեր իրենց սխրագործությամբ ու նույնիսկ անձնազոհությամբ անառիկ են պահում մեր երկրի սահմանները՝ ապահովելով հայ ժողովրդի խաղաղ արարումը:

Հերոսի ուսանած դասասենյակում կահավորվել է վերջինիս նվիրված անկյուն՝ Ազատի լուսանկարներով և զինվորական իրերով:

2015 թ. մայիսի 1-ին «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպության պատանիները «Ես էլ եմ զինվոր» ծրագրի շրջանակներում հիշատակի և մեծարման այց են կատարել Ազատ Ասոյանի տուն:

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Խելացի, աշխատասեր ու նպատակասլաց». այսպես է ներկայացնում Ազատին *պապը՝ Սոնյա Բալյանը*՝ հիշելով բանակից արձակուրդ եկած թոռան խոսքերը.

---

165 Օրորոցից մինչև խրամատ. Ֆիլմ նվիրված սահմանին զոհված Ազատ Ասոյանի հիշատակին, “YouTube”, “NEWSam Channel2” ալիք, 24 փետրվարի 2015 թ., https://www.youtube.com/watch?v=MHsz3jS2yJs (հղվել է 30.09.2015):

- Տատի՛, ես ոչ մեկից լավը չեմ, պետք ա բոլորին հավասար ծառայեմ: Եթե մեկը նեղության մեջ ա, ես պարտավոր եմ հասնել նրան:

Սոնա Բալյան, *հերոսի դստիկ*

«Այսօր մենք հպարտ ենք, որ երիտասարդների մեջ Ազատի նման մարդիկ կան, ովքեր պատրաստ են իրենց արյան գնով սահման պահել: Սա ճիշտ դաստիարակություն է, որի համար գլուխ ենք խոնարհում ծնողների առջև»:

Արամ Սիմոնյան, *ԵՊՀ ռեկտոր*

«Ես համոզված եմ, որ հիմա բոլորի … մոտ երկակի զգացում է … Մի կողմից՝ խորը ցավ, որ երիտասարդի մահ են սգում, մյուս կողմից՝ մեծ հպարտություն, որ Ազատի նման զինվորներ են մեր սահմանը հսկում»:

Գագիկ Ղազինյան, *ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դեկան*

«Ցավով եմ հիշում հուլիսի 31-ը: Այն ցավոտ լուսաբացը, երբ լսեցինք Ազատ Ասոյանի գույժը: Հերոս, ում սխրագործությունը ցնցեց բոլորին: Հերոս, ով կարողացավ … պայքարել տասնյակների … դեմ՝ տապալելով բոլորին: Ազատը … գիտակցորեն գնաց ընկերներին ու հայրենիքը փրկելու քայլին. փա՜ռք քեզ Հերոս»:

Դանիել Պետրոսյան, *հասարակական գործիչ*

… ԲԱՌԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Ազատ Ասոյանը ցանկանում էր ամուսնանալ, որդի ունենալ և կոչել Նարեկ: Ազատի զոհվելուց մեկ տարի անց՝ 2015 թվականի հուլիսի 7-ին, հերոսի մայրը՝ տիկին Մանուշակը, լույս աշխարհ բերեց երրորդ զավակին՝ Նարեկ Ասոյանին…

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶԱՏ ԱՍՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայոց լեռների պահապան զինվոր,
Ծնողներիդ թողիր տխուր, գլխիկոր,
Անունիդ տերն էիր. ճախրեցիր ազատ,
ԱԶԱ՛Տ, քա՛ջ զինվոր, դարձար նահատակ:

Պայքարեցիր դու հանց ազգի հերոս,
Ազգը պիտ հպարտ լինի քեզանով,
Անուններ եք սուրբ՝ ԱԶԱՏ, ԱՐԱՐԱՏ,
Սահմանն հսկելով՝ հանգչեցիք խաղաղ:

Սուրբ հողը ներկվեց ձեր սուրբ արյունով,
Հավերժ կճախրես, ԱԶԱ՛Տ, երկնքով,
Պայքարդ կյանքի ու մահու միջև
Դարձրեց քեզ հերոս ԱԶԱՏ՝ հայ ասպետ:

Քո սիրո բույնը օջախ չդարձավ,
Սիրուդ աղոթքը երկինք չհասավ,
Որ դուք զավակներ պարգևեք ազգին,
Արի սերուցքը ձուլվեց մայր հողին:

Քո տեսած քսան գարունները ջինջ,
Պատմություն դարձան հավերժի ճամփին,
Ամենուր դու ես, բայց չկաս, ԱԶԱ՛Տ,
Ծնողներդ կան, սակայն և չկան…

Առաջնեկն էիր դու ծնողներիդ,
Քո շնչով էին ապրում հիրավի,
Թևաթափ եղան, դարձան անհոգի,
Լոկ հուշերով են ապրում կրկին:

Պահպանի՛ր նրանց Սարոյի և Նարեկի համար,
Հսկի՛ր երկնքից, հերո՛ս փառապանծ:
Կհիշենք մենք քեզ՝ ժպիտը դեմքիդ,
ԱԶԱ՛Տ ԱՍՈՅԱՆ, քեզ փա՜ռք ու պա՜տիվ:

Հեղ.՝ *Անանա Կուսրանյան*, 2014-2015 թթ.

ԱՐԱՐԱՏ ՎԱՉԻԿԻ ԽԱՆՈՅԱՆ
(1994 – 2014)

Փառքիդ համար,
Տո՛ւն հայրենի...

Ծնվել է 1994 թ. հոկտեմբերի 9-ին Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2014 թ. հուլիսի 31-ին Մարտակերտի շրջանում:

«Մարտական ծառայության համար» մեդալի (ՀՀ) և «Երախտագիտություն» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է ծննդավայր Սարդարապատ գյուղում:

Արարատ Խանոյանը ծնվել է 1994 թվականին Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում: Նրան Արարատ կոչեցին՝ ի պատիվ պապի, ով Խորհրդային Հայաստանում բարձրաստիճան պետական գործիչ էր և մեծ համարում ուներ գյուղում: Արարատն ութ տարեկան էր, երբ ընտանիքով բնակության տեղափոխվեցին Ռուսաստանի Դաշնություն: Մայրը՝ Անահիտ Վարդանյանը, պատմում է, որ որդին շատ կենսուրախ երեխա էր, բայց ապրելով արտերկրում՝ միշտ ուզում էր Հայաստան գալ՝ իր պապիկի տուն… «Փոքրուց էլ երևում էր, որ հայրենասեր է»,- թախծոտ հպարտությամբ հիշում է մայրը:

Վեց տարի Ռուսաստանում ապրելուց հետո փոքրիկ Արարատի ցանկությունն իրականացավ.

ընտանիքը վերադարձավ հայրենիք: Գյուղում Արարատը միակ քրոջ՝ Ժաննայի հետ սովորում էր գյուղի միջնակարգ դպրոցում, որն ավարտեց 2012 թվականին: Մայրը հողագործությամբ էր զբաղվում, հայրը՝ Վաչիկ Խանոյանը, արհեստավոր էր: Մինչ բանակ զորակոչվելը՝ դպրոցական տարիներին, Արարատն օգնում էր հորը. ուշիմ երիտասարդ էր: Գյուղի դպրոցի տնօրեն Անահիտ Մանուկյանը հիշում է, թե ինչպիսի պատրաստակամությամբ էր Արարատը կամովին զոռում ու նորոգում դպրոցական գույքը: Արարատի մասին խոսելիս գրեթե բոլորն են հիշում տղայի հատուկ հարգանքը հոր և հոր գործի նկատմամբ: Հայրը շրջանում հայտնի արհեստավոր էր, և Արարատը միշտ ասում էր, որ ուզում է շարունակել և զբաղվել հոր գործով:

Գյուլիստանի անտառներում

Դպրոցն ավարտելուց հետո՝ նույն տարում, Արարատը զորակոչվեց բանակ: Սկզբնական շրջանում ծառայել է Վանաձորի ուսումնական զորամասում Սարգիս Մովսիսյանի հետ միասին, ով զոհվեց Արարատի մահից երեք օր հետո Մարտակերտի շրջանում: Այնուհետև ծառայությունն անցկացրել է Արցախի հյուսիսային զորամասերից «Եղնիկներում»: Շատ ուրախ էր, որ ծառայելու է բանակում: Կարգապահ և օրինակելի զինվոր էր, դարձել էր ջոկի հրամանատար և հասել ավագ սերժանտի զինվորական աստիճանի: Արարատի համար դա անսահման հպարտանքի և պատասխանատվության աղբյուր էր: «Ես սեր-

ժանտ եմ, պարտավորություն ունեմ, որ իմ զինվորներին լավ նայեմ»,- ասում էր Արարատը…

Արարատ Խանոյանը զոհվեց 2014 թվականի հուլիսի 31-ին թշնամու հատուկ նշանակության դիվերսիոն խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս[166]: «Թող վերջին զոհն իմ տղան լինի, թող այս ցավը ուրիշները չտեսնեն, այս վիշտը՝ ուրիշ մայրեր չունենան»,- կսկիծը հոգում՝ ցանկանում է հերոսի մայրը: «Պատերազմ է»՝ անձնական վիշտը համազգային խնդրին զուգադրած մարդու խոհունությամբ ամփոփում է հայրը…

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2014 թ. օգոստոսի 2-ի ՆՀ-196-Ա հրամանագրով N զորամասի սերժանտ Արարատ Վաչիկի Խանոյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով լեյտենանտ Արարատ Խանոյանը 2015 թ. մայիսի 9-ին հետմահու պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Արցախի ազատագրական պայքարում ցուցաբերած հատուկ ծառայությունների համար Արարատ Վաչիկի Խանոյանը հետմահու պարգևատրվել

[166] 2014 թ. հուլիսի 31-ին տեղի ունեցած մարտի նկարագրությունը տես Ազատ Ասոյանին նվիրված հատվածում:

է «Մայրություն» հասարակական կազմակերպության սահմանած «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով:

Արարատ Խանոյանին հետմահու շնորհվել է լեյտենանտի զինվորական աստիճան:

«Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության «Կյանք՝ հանուն կյանքի» ծրագրի[167] շրջանակներում 2014 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Արարատ Խանոյանի ծննդյան օրը, հերոսի հայրենի Սարդարապատ գյուղում՝ Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի հերոսների հուշարձանների կողքին, բացվեց նրա հիշատակին նվիրված հուշաքար: Բացման արարողության ժամանակ ծրագրի համակարգող Հովհաննես Հովհակյանը նշեց, որ իրենց նպատակն է զոհված տղաների հիշատակը միշտ վառ պահել, որպեսզի յուրաքանչյուր ապագա զինվոր նույն նվիրումով և պատասխանատվությամբ վերաբերվի հայրենիքի պաշտպանությանը:

«Կյանք՝ հանուն կյանքի» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նկարահանվել է հուշագրական կարճամետրաժ ֆիլմ (ռեժիսոր՝ Վան Սեդրակյան)՝ նվիրված Արարատ Խանոյանի կյանքին:

Սարդարապատի դպրոցի՝ հայոց լեզվի և գրականության դասարանը անվանակոչվել է Արարատ Խանոյանի անվամբ: Դասարանում կա մի անկյուն՝ Արարատի կարճ, բայց հասուն և իմաստալից զինվորական կյանքի մասին պատմող վավերագրերով:

Դպրոցի բակում համագյուղացիների ջանքե-

---

[167] Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից ընտրված գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվող դրամաշնորհային մրցույթի շրջանակներում:

ռով կանգնեցվել է փոքրիկ խաչքար, որտեղ պարբերաբար հավաքվում և ծաղիկներ են խոնարհում՝ ի հիշատակ իրենց Արոյի:

Արարատի և Ազատի մահը մեծ ցավ պատճառեց Հայաստանի ժողովրդին, որը որդեկորույս ծնողին բնորոշ կսկիծը հոգում ամբարած՝ միևնույն ժամանակ մի ներքին խորհուրդ ու պատգամ նշմարեց դիրքապահ ընկերների անունների զուգադրության մեջ՝ «Ազատ Արարատ»…

Արարատին նվիրված անկյունը Սարդարապատի դպրոցում

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Հոյակապ անձնավորություն է, շատ լավ զինծառայող: … Ներկայով եմ խոսում, ես չեմ կարողանում մոռանալ նրան, նա միշտ մեզ հետ է: Կոչումով՝ սերժանտ, պարտաճանաչ, խելոք, բանիմաց, կազմակերպված զինծառայող, ջոկի հրամանատար»:

Արամ Բալայան, *Մարտակերտի N զորամասի հրամանատարի տեղակալ փոխգնդապետ*

«Մենք պետք է գիտակցորեն մոտենանք, որ մենք կռվող ժողովուրդ ենք, շրջապատված ենք թշնամիներով, և այսօր և՛ ծնողները, և՛ համագյուղացիները հպարտություն են ապրում, որ ունեցել ենք նման լավ երիտասարդ, զինվոր, ով … հայրենիքին մատուցած ծառայության ժամանակ զոհվեց»:

Բաբկեն Վարդանյան,
Սարդարապատ գյուղի գյուղապետ

«Մեր պարտքն է հարգանքի տուրք մատուցել հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված բոլոր զինվորներին: Ես հպարտ եմ, որ ունենք նման նվիրյալ երիտասարդներ: Արարատ Խանոյանը հայ զինվորի առաքելությունը պատվով է կատարել: Սա նվազագույնն է, որ մենք կարող ենք անել այս պահին»:

Ալեքսանդր Տեր-Հովակիմյան,
«Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»
ՀՄԴ-ի գործադիր տնօրեն

«Միշտ ասում էր՝ ես պետք է ծառայեմ մեր հայրենիքին: Ճիշտ է՝ վիշտը ծանր է, բայց Արարատն ու Ազատ Ասոյանը (նա էլ իմ տղան է, զոհվեց իմ որդու հետ) մեր հպարտությունն են, որ թույլ չեն տվել թշնամուն ոտք դնել մեր հողին»:

Վաչիկ Խանոյան, *հերոսի հայրը*

«Ինձնից մեկ տարի առաջ էր զորակոչվել բանակ, մեզ՝ նորեկներիս, միշտ բացատրում էր, ինչ պետք է անել, ոնց պահել մարտական հերթապահություններում: Մինչ օրս էլ դժվարությամբ ենք հավատում, որ մեր ընկերները՝ Արարատ Խանոյանն ու Ազատ Ասոյանը, չկան»:

Սամվել Հակոբյան,
Արարատ Խանոյանի կրտսեր ծառայակից

«Այս մեր թվացյալ խաղաղ պայմաններում զոհվում են տղաներ… Նրանք այն տղաներն են, որոնք կյանքում գուցե և աննշան են, … բայց կյանքը ցույց է տալիս, որ … շատ ու շատ պատանիներ, որոնք առօրյա կյանքում ոչ մի բանով չեն ուզեցել առանձնանալ, աչքի ընկնել, ահա այսպիսի ճակատագրական պահերին հայտնվում են առաջինների

շարքում, հայտնվում են նվիրյալների շարքում և հերոսանալով՝ հավերժացնում են իրենց անունները: Արարատն այդպիսի տղա էր»:

Անահիտ Մանուկյան,
Սարդարապատի դպրոցի տնօրեն

«Էսօր մեր երիտասարդության մեջ շատ մարդիկ կան, որ ասում են՝ «ա դե բանակն ինչ ա է՞, ի՞նչ էթամ, ծառայեմ», բայց … կյանքում, էդքան իրա հետ շփվել եմ, ես չեմ լսել՝ ինքը մի հատ տենց բան ասի… Մեր Արարատը կա, մեր Արարատը գոյություն ունի, և փա՛ռք նման տղեքին, որ էսօր պատրաստ են հայրենիքի համար իրենց կյանքը տալ»:

Սարիբեկ Մկրտչյան,
Արարատ Խանոյանի ընկեր

«Հիշում եմ՝ Եղիշեի ասույթը կարդացի…՝ «չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն», և Արարատը երևի ամենից լավ հենց այդ դասը յուրացրեց: Թվում էր, թե ամենից լավ սովորող աշակերտներն են ամենալավը յուրացնում դասերը, բայց ոչ, երևի թե՝ այդպես չէ: … Մարդու էությունը, ընդհանրապես մարդն ինքը, անկանխատեսելի են, ոչ ոք չի կարող ասել, թե մարդն այդ օրհասական պահին ինչերի է ընդունակ: Արարատը դա արել է գիտակցաբար, ես համոզված եմ՝ նա չգիտակցված մահվան չի գնացել»:

Միրանուշ Պարոնյան,
դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԶՈՐԻԿ ԺԻՐԱՅՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(1989 - 2014)

Պատիվ ունեմ

Ծնվել է 1989 թ. հունվարի 29-ին Տավուշի մարզի Իջևան քաղաքում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2014 թ. օգոստոսի 2-ին Մարտակերտի շրջանում:

«Երկրորդ աստիճանի մարտական խաչ» (ՀՀ) շքանշանի ասպետ և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է Վանաձոր քաղաքում:

Զորիկ Գևորգյանը ծնվել է 1989 թվականի հունվարի 29-ին Տավուշի մարզի Իջևան քաղաքում: Շուտով ընտանիքը մշտական բնակության է տեղափոխվել Լոռու մարզի Վանաձոր քաղաք: Զորիկի հայրը եղել է զինվորական: Փոքրիկ Զորիկը դեռ մանկուց մեծ սեր ու հակում է ունեցել ռազմական գործի հանդեպ: «Երբ փոքր էինք, Զորիս հետ խաղ էինք խաղում: Հյուրասենյակում՝ գորգի վրա, Զորս սահման էր գծում, մեքենաներ շարում, պարիսպներ կառուցում, զինվորներին կանգնեցնում, հատուկ մարտավարություն մշակում, որ պիտի պատերազմենք, ու հետո իմ կառուցվածքի թերություններն էր ասում: Ասում էր՝ «այ էստեղից ես կարող եմ գրավել քո տարածքները, թույլ են զենքերդ»: Դա ընդամենն առաջին դասարանի երեխաների խաղ էր,

բայց հիմա ես դրան ուրիշ աչքով եմ նայում»,- հիշում է հերոսի քույրը՝ Անի Գևորգյանը:

1996 թվականին Զորիկը քրոջ՝ Անիի հետ հաճախել է Վանաձորի՝ Մարշալ Բաղրամյանի անվան թիվ 26 դպրոցը, երկուսով սովորել են նույն դասարանում: 2004 թվականին ավարտելով ութերորդ դասարանը՝ քույր ու եղբայր տեղափոխվում են Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային վարժարան: Մայրը՝ տիկին Հերմինե Քոչարյանը, ցանկանում էր, որ որդին պատմաբան դառնար, քանի որ շատ էր հետաքրքրվում մեր ժողովրդի անցյալով ու պատմությամբ, բայց. «Հանկարծ ութերորդ դասարանում Զորիկը որոշեց, որ զինվորական է դառնալու, պատմում է մայրը: - Մեր տանը զինվորականներ էին ամուսինս, եղբայրս, եղբորս որդին: Ասում էի՝ «թող գոնե քեզ չսպասեմ...»: Թղթերը տարավ ռազմական ինստիտուտ, քննությունները հանձնեց ու զանգեց, թե՝ «Մա՛մ ջան, շնորհավորի՛ր, ընդունվել եմ… Մի՛ նեղացիր, սա իմ կյանքի ուղղությունն է»»: Այսօր արդեն, խոսելով Զորիկի մասնագիտության ընտրության մասին, քույրը հիշում է. «Քեռիս ու հայրս զինվորական են եղել, մենք ապրել ենք զինվորական ավանում, ու Զորս հաճախ է հայրիկի հետ բարձրացել զորամաս, վազել զինվորների հետ, մարզվել, գնացել կրակայինի... Երկու մասնագիտության մեջ էր տատանվում սկզբից. երազում էր հնէաբան դառնալ, ասում էր՝ «Մեր Հայաստանը շատ հին է, այնքան բան կա, որ բացահայտված չէ, ես կգտնեմ, աշխարհը կիմանա, թե ով է հայը»: Իսկ երկրորդը զինվորականի մասնագիտությունն էր, որին ընտանիքս դեմ էր: Բայց ի վերջո Զորիկը կանգ առավ հենց դրա վրա»:

2006 թվականին, ավարտելով տասներորդ դասարանը, Զորիկն ընդունվում է Վազգեն Սարգսյա-

Զորիկը շատ էր սիրում կենդանիներին: Այս նկարում նա գրկել է փոքրիկ արջուկի

նի անվան Ռազմական ինստիտուտ՝ սկզբում ընտրելով հետևակի, այնուհետև՝ 4-րդ կուրսում՝ հետախույզի մասնագիտացում: Չնայած որդու կազմակերպվածությանը՝ մայրը միշտ անհանգստացել է Զորիկի համար՝ «Ես շատ ուշադիր էի նրա նկատմամբ, դողում էի նրա վրա՝ հանկարծ երեխայիս ոտքը քարին չառնի… Երբեք վրան չեմ բարկացել, բարձր ձայնով հետը չեմ խոսել, երբեք առավոտյան չեմ արթնացրել, ավելին՝ այնքան վաղ էր արթնանում, որ հասցնում էր դասի գնալուց առաջ մինչև Կամակատարի մատուռը[168] վազել»: Վազքից հետո տուն էր մտնում և սառը ջրով լոգանք ընդունում: Մայրը հանդիմանում էր. «Ա՛յ բալա, կհիվանդանաս, էդ սառը ջրերիցը դուրս արի», ինչին կենսախինդ որդին պատասխանում էր. «Մա՛մ ջան, տղեղ կոփվում ա»:

2010 թվականին լեյտենանտի կոչումով անցնելով ՀՀ ԶՈՒ շարքերը՝ Զորիկը ծառայության է անցնում ՊԲ զորամասերից մեկում՝ որպես հետախուզական դասակի հրամանատար: 2013 թվականին բարեխիղճ ծառայության համար արժանանում է ավագ լեյտենանտի զինվորական կոչման և տեղափոխվում ՊԲ Մարտակերտի զորամաս՝ որպես հետախուզական վաշտի հրամանատար: Կարճ ժամանակամիջոցում Զորիկը սիր-

[168] Միջնադարյան մատուռ Վանաձոր քաղաքի արվարձանում՝ Ստեփանավան տանող ճանապարհի աջակողմում գտնվող համանուն բլրի վրա:

վեց տեղացիների կողմից, իսկ վաշտը դարձավ զորամասի լավագույններից մեկը: Զորիկին ճանաչում էին նաև զորամասին հարակից գյուղերի բնակիչները, երեխաները, ազատ ժամանակ սիրում էր զրուցել բոլորի հետ, իմանալ որպիսությունը:

Թշնամին Զորիկին տվել էր «Անորսալի միայնակ գայլ» ռազմանունը: Պատճառն այն է, որ Զորիկը հաճախ է մարտական առաջադրանքները կատարելիս միայնակ «որսի դուրս եկել», փնտրվել թշնամու կողմից և անգամ քանիցս դարանի մեջ ընկնելով՝ անվնաս հեռացել՝ կատարելով մարտական առաջադրանքը:

Զորիկ Գևորգյանի ծառայության հետ կապված մեկ այլ հիշատակելի դրվագ է 2014 թ. հունվարի 20-ի գիշերը: Այդ օրը թշնամու ուժեղացված խումբը հարձակվեց արցախյան ռազմաճակատի հյուսիսարևելյան դիրքի վրա: Տևական անհավասար կռվում ջոկի հրամանատար Արմեն Հովհաննիսյանին հաջողվեց կասեցնել թշնամու հարձակման հիմնական թափը: Մարտն ավարտին հասցրին հարևան դիրքերից օգնության հասած մարտական խմբերը: Դրանց կազմում էր նաև Զորիկն իր զինվորների հետ միասին: Գիտակցելով պահի բարդությունը՝ Զորիկն արագ կողմնորոշվում է և զինվորների հայացքից ծածկում հերոս դիրքապահի դին: Երբ երիտասարդ զինվորները փորձում են հաս-

կանալ Արմենի որպիսությունը, Զորիկը կտրական սաստում է՝ «Հե՛տ դարձ. ձեզ ո՞վ թույլ տվեց առաջ գալ», այնուհետև հոգատարությամբ վրա բերում՝ «Պետք չի, որ տեսնեք, էրեխեք եք, կվախենաք»: Նույնպիսի հոգատարությամբ էլ Զորիկը խոսել էր մոր հետ, երբ վերջինս հարցրել էր՝ «Բալե՛ս, էդ դեպքը ձեզ մո՞տ ա էղել»: «Չէ՛, մա՛մ ջան, էդ ի՞նչ ես ասում: Գիտե՞ս՝ դա ինչքան ա հեռու մեզնից»: Զորիկի ընտանիքը միայն որդու մահից հետո իմացավ եղելությունը:

Ահա այսպիսի անսահման սիրով ու հոգատարությամբ էր լցված Զորիկը բոլորի նկատմամբ, հատկապես՝ իր զինվորների: Մայրը նույնպես հիշում է, թե ինչպիսի գորովագութ հոգատարությամբ էր Զորիկը խոսում զինվորների մասին՝ «Մա՛մ ջան, ես՝ ոչինչ, մենակ թե խոխեքիս բան չպատահի»: «Զորիկս շատ լավ էր ճանաչում իր զինվորներին»,- հպարտությամբ հիշում է հերոսի մայրը:

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

2014 թ. օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը Զորիկ Գևորգյանի հետախուզական վաշտին վստահվեց պաշտպանելու այն դիրքը, որի ուղղությամբ օրեր առաջ տեղի էր ունեցել թշնամու դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձ[169]:

Երեկոյան 22:00-ի սահմաններում զորամասի հրամանատար Էդվարդ Ասրյանը գնացել է հետախուզական վաշտի պաշտպանած դիրք ու նոր գիշերային նշանոց տրամադրել Զորիկին՝ հարցնելով,

[169] Թշնամու այդ հարձակման ժամանակ զոհվել էր ժամկետային զինծառայող Խաչատուր Բաղդասյանը:

Ներկայիս և ապագա զինվորների հետ

թե որն է ավելի լավը՝ հինը, թե նորը: Փորձարկելով նշանոցը՝ հմուտ հետախույզը պատասխանել է՝ «70 մետրի վրա թշնամու շարժը տեսնում եմ, շատ լավն է»: Հրամանատարը հարցրել է՝ «Իսկ եթե թշնամին առջևդ դուրս գա՞»: «Կսատկացնեմ»,- իրեն բնորոշ կենսախնդությամբ պատասխանել է Զորիկը: Խոսքից զատ Զորիկը նաև գործնական միջոցների էր դիմել՝ կանխավ իր ԱԿ-74 գիշերային նշանոցով զենքի պահունակը փոխարինելով ձեռքի գնդացրի 45 փամփշտանոց պահունակով…

Գիշերը՝ ժամը 02:10-ի սահմաններում, թշնամու դիվերսիոն խմբին հաջողվում է տեղորոշել հետախուզական վաշտի պահպանած դիրքը և առաջանալ այդ ուղղությամբ: Թշնամու ուժեղացված խումբն առաջացել է երկու խմբով՝ գրոհող և ապահովող: Այդքան բազմաքանակ խումբն իր հետ բերել էր նաև գծային կապի մալուխ և ձեռնաշղթա-

ներ. միով բանիվ՝ թշնամու նպատակը մաքսիմալ էր՝ ոչնչացնել կամ գերեվարել հայկական դիրքի անձնակազմին և գրավել դիրքը: Սրանով Ադրբեջանը փորձում էր սրբել նախորդ գիշերը կրած խայտառակությունը, երբ հայկական հատուկ նշանակության խմբի կողմից ոչնչացվել էին միանգամից ութ ադրբեջանցի կոմբատանտ:

Գիշերային նշանոցով նկատելով թշնամու մոտ լինելը՝ Զորիկը հրամայում է արթնացնել հանգստացողներին, դիրքավորվել և պատրաստ լինել հակառակորդի հարձակմանը: Գիտակցելով, որ երիտասարդ զինվորների համար բարդ է իսկույն մարտի մեջ մտնելը՝ Զորիկը գլխի շրջանում մահացու խոցում է փշալարը քանդել փորձող թշնամու մեկ գրոհայինի: Թշնամին սկսում է կրակ տեղալ Զորիկի կրակած ուղղությամբ: Զորիկը շարունակում է կռիվը՝ հմտորեն փոխելով դիրքը և մեկական թիրախային կրակոցներ ուղղելով թշնամու ուղղությամբ: Քաջարի սպան թշնամու կենդանի ուժի երկրորդ թիրախը խոցում է սրտի շրջանում: Կռիվը բարդ էր նրանով, որ նախորդ դիվերսիայից հետո տվյալ դիրքում տակավին չէին իրականացվել ինժեներատեխ-

նիկական անհրաժեշտ աշխատանքներ, և թշնամին կարողացել էր կիսաշրջանաձև թևանցել Զորիկի և իր հրամանատարության տակ եղած զինծառայողների պահպանած դիրքը հարևան երկու դիրքերից: Այնուամենայնիվ, անգամ նման պայմաններում Զորիկը կարողանում է շարունակել մարտը՝ անընդհատ փոխելով դիրքը և դիմահար կրակ տեղալով հակառակորդի ուղղությամբ: Հավաստանշելով Զորիկի տեղը՝ թշնամին խոցում է հայ սպային ոտքից, քիչ անց՝ նաև կողքից: Ծնկած դիրքում վերստին փոխելով տեղը և նկատելով թշնամու առաջացող խմբին՝ Զորիկը, թունդ հայհոյանք տեղալով, նռնակ է նետում վերջիններիս ուղղությամբ: Թշնամին, խուճապի մատնվելով, աստիճանաբար սկսում է նահանջել՝ մարտադաշտից հանելով նաև վիրավորներին[170]: Ընդհանուր առմամբ Զորիկի զենքից այդ գիշեր թշնամու ուղղությամբ արձակվեց 29 կրակոց: Զորիկի զենքը չէր լռի, եթե թշնամու դիպուկահարը, զննադիտարկելով հայկական դիրքից տեղացող կրակների ուղղությունն ու օրինաչափությունը, հարևան դիրքից չխոցեր հերոսին գլխի շրջանում…

Նահանջող թշնամին ՌՊԳ-26 միանգամյա օգտագործման հակատանկային նռնականետով խոցում է հայկական դիրքերը. բռնկված կրակը հրո ճարակ է դարձնում հայկական վրանները, այդ թվում՝ զինանոցը: Ընդհանուր առմամբ ամբողջ մարտը տևեց 15 րոպե: Զորիկի հետ հավասար հարևան խրամաբջջից թշնամու դեմ կրակ էր տեղում ժամկետային սերժանտ Սարգիս Մովսիսյանը, ով նույնպես վիրավորվել էր մարտում: Նկատե-

[170] Հայկական դիրքերից տեղացող սակավ, բայց հմուտ կրակի պատճառով՝ թշնամուն գիշերը չհաջողվեց մարտադաշտից հանել սեփական դիակները: Միայն առավոտյան թշնամին կարողացավ օդային ճանապարհով հեռացնել դրանք:

լով, որ Զորիկի կողմից տեղացող կրակը դադարել է, իսկ այնուհետև, որ բռնկվել է զինանոցը՝ Սարգիսը վիրավոր վիճակում շտապում է հրամանատարի մոտ՝ ցանկանալով ապահովել վերջինիս դին թշնամու վրեժխնդրությունից: Սարգիսն այդ ժամանակ ստանում է երկրորդ վիրավորումը: Սարգիս Մովսիսյանը մահանում է օգոստոսի 3-ին հոսպիտալում:

Միայնակ Գայլի և Վաշտի Հսկայի՝ Սարգսի անօրինակ սխրանքի շնորհիվ՝ ձախողվում է թշնամու նախօրոք մշակված ռազմական պլանը: Զորիկն ու Սարգիսը բարձր պահեցին հայ զենքի պատիվը՝ ապահովելով Հայաստանի հաղթանակն օգոստոսյան հնգօրյա միկրոպատերազմում:

Մարտակերտի վիրավոր հողն արցունքով հրաժեշտ տվեց հարազատ զավակներին…

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքն անձնազոհաբար կատարելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2014 թ. օգոստոսի 2-ի ՆՀ-196-Ա հրամանագրով N զորամասի ավագ լեյտենանտ Զորիկ Ժիրայրի Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի թիվ 71-Ա հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Զորիկ Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Զորիկ Գևորգյանին հետմահու շնորհվել է կապիտանի զինվորական աստիճան:

2014 թ. նոյեմբերի 25-ին Արցախի ազատագրական պայքարում ցուցաբերած հատուկ ծառայությունների համար Զորիկ Ժիրայրի Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «Մայրություն» հասարակական կազմակերպության սահմանած «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալով:

2014 թ. դեկտեմբերի 24-ին լեյտենանտ Զորիկ Ժիրայրի Գևորգյանը հետմահու պարգևատրվել է ՀՀ ՊՆ «ՀՀ Զինված ուժեր 20 տարի» հոբելյանական մեդալով:

2015 թ. մայիսի 6-ին Զորիկ Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «Փոքր Մհեր» կրթահամալիրի սահմանած «Հայկազունական փառք» շքանշանով: Նույն մեդալով է պարգևատրվել նաև հերոսի մայրը՝ Հրանուշ Ռադիկի Քոչարյանը[171]:

Զորիկի հիշատակին նվիրված խաչքար Մարտակերտի զորամասում

2015 թ. մայիսի 9-ին Զորիկ Գևորգյանը հետմահու պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 70-ամյակ»՝ ԱՊՀ երկրներում գործող միասնական հոբելյանական մեդալով:

2015 թ. մայիսի 27-ին Զորիկ Գևորգյանը ՀՀ

[171] Զորիկի մայրիկի քաղաքացիական անունը «Հրանուշ» է: Այս ակնարկում, սակայն, հիշատակվում է այն անունը, որով բոլորը ճանաչում ու կոչում են նրան՝ «Հերմինե»:

ՁՈՒ Գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետի հրամանով հետմահու պարգևատրվել է ՀՀ ՊՆ Ռազմական հետախուզության «Ծառայության համար» կրծքանշանով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի N45-Ա հրամանագրով «Երախտագիտություն» մեդալով է պարգևատրվել Զորիկ Գևորգյանի մայրը:

«Մայր Հայաստան» զինվորական թանգարանում ներկայացված է Զորիկ Գևորգյանի անկյունը:

Մարտակերտի զորամասում ի հիշատակ Զորիկ Գևորգյանի ընտանիքի կողմից տեղադրվել է հուշաքար՝ «Այդ զարկն իմն էր» գրությամբ:

Այն մարտական դիրքում, որտեղ կռվել և զոհվել է Զորիկ Գևորգյանը, ծառայակից ընկերների կողմից տեղադրվել է հերոսի հիշատակին նվիրված փոքրիկ խաչքար:

Վանաձորի զինվորական ավանին կից տարածքում, որտեղ ապրել է Զորիկը, կառուցվել է հանգստյան տարածք, որտեղ մանկության ընկերները տեղադրել են հուշաքար, իսկ ծառայակից ընկերները՝ հուշաղբյուր: Նույն վայրում Զորիկի քեռու կողմից կառուցվել է սբ. Ամենափրկիչ Զորավոր մատուռը, որն օրհնվել է 2014 թ. սեպտեմբերի 28-ին:

Նույն տարածքում 2015 թ. սեպտեմբերի 20-ին կանգնեցվել է խաչքար Վանաձորի զորամասում ծառայող զինվոր Ալեքսանդր Պողոսյանի հոր՝ Վլադիմիր Պողոսյանի կողմից:

2015 թ. օգոստոսի 16-ին Զորիկի քեռու կողմից Իջևանի Ճաղկավան գյուղի լեռան վրա կանգնեցվել է վեց մետր երկարություն ունեցող քառաթև խաչ: 2015 թ. հոկտեմբերի 8-ին խաչի կողքին կանգնեցվել է խաչքար, որն օծել է Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

2014 թ. նոյեմբերի 25-ից Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային

վարժարանը կոչվում է Զորիկ Գևորգյանի անվամբ: Նույն վարժարանում ստեղծվել է հերոսին նվիրված հուշանկյուն:

2015 թ. մարտի 2-ից Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 դպրոցի 6-րդ դասարանը կրում է Զորիկ Գևորգյանի անունը:

2015 թ. ապրիլի 30-ից Վանաձորի Մարշալ Բաղրամյանի անվան թիվ 26 հիմնական դպրոցի ռազմագիտության դասարանը կոչվում է Զորիկ Գևորգյանի անունով: Նույն դպրոցում կա նաև հերոսին նվիրված հուշանկյուն, իսկ դպրոցի ճակատային մասում ամրացվել է հուշատախտակ՝ գրությամբ, որ այդտեղ է սովորել Զորիկ Գևորգյանը:

2015 թ. մայիսի 6-ին Զորիկ Գևորգյանին նվիրված միջոցառում է կազմակերպվել «Փոքր Մեր» կրթահամալիրում: Կրթահամալիրի ջոկերից մեկը կոչվել է Զորիկ Գևորգյանի անվամբ:

Շուշիի սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու բակում

2015 թ. հուլիսի 7-ից Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հետախուզության լսարանը կրում է Զորիկ Գևորգյանի անունը:

2015 թ. սեպտեմբերի 20-ին Վանաձորի զորամասի զինծառայող Ռաֆայել Տեր-Բարսեղյանի հայրը՝ Յուրիկ Տոնոյանը, սբ. Ամենափրկիչ Զորավոր մատուռ տանող ճանապարհին որդու անունից Զորիկի հիշատակին կանգնեցրել է վահանակ՝ «Հիշիր անցյալը, ապրիր ներկայով, ապագան կարող է և չլինել» պատգամ-գրությամբ:

«Երկրորդ աստիճանի մարտական խաչ» շքանշանի հետմահու ասպետ կապիտան Զորիկ Գևորգյան

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Զորիկի հմուտ գործողություններով, նրա առաջին իսկ երկու կրակոցով միանգամից սպանվել են հակառակորդի առաջապահ զինծառայողները, որոնց ձեռքին կային զինատեսակներ, որ եթե նրանց հաջողվեր կիրառել այդ զինատեսակները, նրանք կհասնեին հաջողության: Սակայն անձամբ Զորիկի հմուտ գործողություններով ձախողվել է հակառակորդի մտադրությունը»:

Էդվարդ Ասրյան, *զորամասի հրամանատար*

«Շատ փոքր տարիքից է Զորս ստեղծագործել: Միշտ թերթի վրա նկարում էր և բանաստեղծություններ էր նվիրում մայրիկիս ծննդյան օրն ու մայրության և գեղեցկության տոներին: Իհարկե, տարիքի հետ ավելի զարգացավ նրա շնորհքը: Մենք նույն դասարանում ենք սովորել ու նստել ենք մի նստարանին: Պատմողական դասերի ժամանակ Զորս նկարչություն էր անում և ուսուցչուհիներին թվում էր, թե Զորս չի լսում: Բարկանում էին, իսկ Զորս շատ հանգիստ, ժպիտը դեմքին, բարձրացնում էր գլուխն ու սկսում պատասխանել ուսուցիչների հարցերին: Եղել են դեպքեր, որ Զորս այդ նկարները դասի ավարտին նվիրել է նրանց: Արդեն բոլորը գիտեին, որ եթե Զորս իրենց դեմքին չի նայում, դա չի նշանակում, որ չի լսում իրենց: Հրաշալի հիշողություն ուներ, անբացատրելի: Տանը կարող էր դասը չկարդալ, բայց երբ երեկո-

յան մեր ծնողները հարցնում էին դասերը, էնպես էր պատմում այդ թեման, որ ես տասն անգամ կարդալուց հետո էդպես չէի կարողանում պատմել:

Չեք պատկերացնի, թե ինչքան բարի ու ներող էր: Ես ամեն անգամ ասում էի՝ «Զո՛ր, բայց ո՞նց ես իրեն օգնում, ինքը էսպես-էսպես է վարվել քեզ հետ»: Ասում էր՝ «ոչի՛նչ, Ա՛ն ջան, ինքն էլ էդ տեսակ մարդ ա, իրեն էդպես ընդունի»: Միշտ թույլերի, խեղճերի կողքին էր, իրենց հետ էր շփվում, պաշտպանում էր: Ճիշտն ասած՝ ես դա չէի հասկանում ու նեղվում էի, թե ինչ է գտնում նրանց մեջ: Բայց ավելի հասուն տարիքում հասկացա, որ ճիշտ էր. ուժեղ մարդիկ կարողանում են իրենց պաշտպանել, իսկ Զորս պաշտպանում էր թույլերին»:

Անի Գևորգյան, *հերոսի քույրը*

«Անհամբերությամբ էինք սպասում Զորիկիս ծնունդին. մեր առաջին երեխային կորցրել էինք, երբ ընդամենը երկու տարեկան էր: Զորիկի ծննդյան օրը մեր ընտանիքի ամենաերջանիկ օրն էր. ուրախ էինք, հրճվում էինք: … Ես արդեն որոշել էի անունը: Շարժման տարիներն էին, և ես էլ հիացած էի Արցախի ազատագրման ջատագով, առաջամարտիկ, մտավորական Զորի Բալայանով: … Հայկական անվանագրքում Զորի անունը չգտա, ուստի ընտրեցի Զորիկը:

Ես շատ էի նրա վրա դողում, շատ էի սիրում, շատ էի կապված ու հիմա շատ եմ կարոտում: Ինձ մի բան է մխիթարում՝ նա հիմա մենակ իմը չէ, իր ժողովրդինն է, այն ժողովրդինը, որին շատ էր սիրում… Ես հպարտ եմ իմ հերոս զավակով»:

Հերմինե Քոչարյան, *հերոսի մայրը*

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Իմ կյանքը կանցնի
Իմ երկրի ծայրին՝
Սահմանի վրա,
Ընկած սարերում:
Ու չմտածեք,
Թե ֆիդայի եմ,
Երդում եմ տվել:
Ուղղակի կյանքս
Այդպես է ստիպել,
Ուղղակի երկրիս
Պատմությունը դաժան
Ինձ դեպի հավերժ
Պայքարն է մղել,
Ուղղակի իմ մեջ
Պաշտպան է կռվել:

Ուղղակի հայը
Պետք է պայքարի,
Պայքարի գրչով,
Զենքով պայքարի,
Պայքարի սիրով,
Պայքարի հրով…
Դա ես չեմ ասել,
Դա դուք եք ստիպել
Ձեր տասնհինգ թվով,
Ձեր անմարդկային
Չար կոտորածով,
Ձեր հեղած արյամբ:
Դա ինձնից առաջ
Դրոն է ասել,
Չաուշն է երդվել,
Ու Անդրանիկն է

Ձեր դեմ պայքարել:
Վազգենն է ասել
Ու շեշտը դրել
Բանակի վրա.
Այժմ ես կասեմ՝
Չփորձե՛ք շեղվել…
Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 10.03.2009 թ.

* * *

Սիրտս ցավում է, երբ ես նայում եմ
Իմ Արարատի ճերմակ գագաթին,
Սիրտս ցավում է, երբ հասկանում եմ,
Որ Արարատս՝ դարերով հայի
Սուրբ լեռը եղած,
Այդ չար թուրքի ձեռքին է հիմա:
Ու որպես սրտիս
Մի փափագ անգին
Ես խոստանում եմ,
Որ դեռ հայկական
Մեր եռագույնը
Պիտի ծածանվի
Այդ սուրբ կատարին:
Ու թե երազս մնա երազանք
Դեռ իմ հոգին է ելնելու Մասիս
Ու որպես բոլոր հայերի պատվեր՝
Մի լույս վառելու այդ լեռան գլխին…
Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 17.04.2009 թ.

* * *

Կարոտը սրտիս՝
Սահմանի վրա,
Երկրիս հողերն եմ
Պահում անսասան…
Ու չեմ մտածում
Նոր բանի մասին,

Միայն ուզում եմ
Ջարդել չար թուրքին:
Չգիտեմ ինչու,
Բայց դեռ շատ մանկուց
Ես ցանկացել եմ
Մեծ վրեժ լուծել
Իմ ազգի համար,
Թեկուզ իմ գործը
Հիմա չհարգեն
Ու իմ ետևից
Չար-չար բամբասեն,
Ես չեմ մտածի
Ոչնչի մասին,
Ինձ պետք չէ փառքը,
Ոչ էլ համբավը,
Առավել ևս `
Իմ մահից հետո:
Միայն ես գիտեմ,
Որ հողիս համար
Իմ արյունից էլ
Թափվել է մի օր:
Թե ինձ կհիշեք,
Օրհնում եմ ես ձեզ,
Թե չեք հիշելու,
Աստված ձեզ օրհնի,
Կարևորն այն է՝
Ազգը իմ ապրի…

Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 29.05.2009 թ.

ՄԻ ԻՂՁ ՈՒՆԵՄ ԵՍ, ՈՉ ՄԻ ԲԱՆ ԱՎԵԼ

Մի իղձ ունեմ ես,
Ոչ մի բան ավել,
Ո՛չ հարստություն,
Ո՛չ կանայք ջահել:

Մի իղձ ունեմ ես,
Ոչ մի բան ավել.
Թող իմ օջախում
Միշտ լինի խնջույք:

Թող օջախիս մեջ
Միշտ առողջ լինեն,
Թող խնդան անվերջ
Ու զնգան ձայներ:

Թեկուզ որ դրան
Հասնեմ իմ արյամբ,
Աչքերիս լույսով,
Հույսերով բոլոր:

Մի իղձ ունեմ ես,
Ոչ մի բան ավել:
Կտամ հոգիս իմ
Իղձս կատարեք…

Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 2009 թ.

* * *

Ծանր է բեռը
Մարդկության ուսին,
Չեմ կարող տեսնել
Ես սեր ու լուսին:
Սիրահարները աստղեր են հաշվում,
Իսկ ես կռվի մեջ
Կյանքս եմ մաշում:
Ո՞վ գոհ կլինի
Իմ արած գործից…
Ոչ ոք չի հիշում
Կորուստ մարդկային.
Մեկ հոգի ավել
Կամ մեկով պակաս՝

Ո՞վ է մտածում՝
Ինչու հեռացավ:
Մենք մահի գրկում
Մահը՝ մեր կողքին,
Մենք չենք փախչելու
Բախտից մեր անգին:
Փախչողները տե՛ս՝
Արդեն էլ չկան,
Պայքարողներն են
Ապրում հավիտյան,
Ու թե չգիտեք,
Կասեմ, իմացեք՝
Դեռ բախտի ձեռքին
Պետք է տառապեք,
Ով ինքն է գրում
Իր անելիքը,
Դառնում է հզոր,
Ով որ թողնում է
Բախտի ձեռքերում,
Կորչում է, գնում,
Դառնում է անզոր…

Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 22.01.2010 թ.

ԱՄՈԹ

Ամոթ է ազգիս, որ մեր տառապած
Մաքառումներով հասածը այսօր
Նման է ցավի, ոչ թե փրկության:
Որ պետությունը փրկողներն այսօր
Տանում են ազգը դեպի կործանման:
Ես աղոթում եմ ու շատ կաղոթեմ
Բոլոր մեղքերի համար այս ազգի,
Բայց աղոթքները փուչ են ու անմիտ
Եթե փափագ կա լոկ իշխանության,
(Շքեղ մեքենա ու հզոր զենքեր

Դռները բոլոր ձեր առջև բաց են:
Ու աղջիկները ձերն են լինելու
Ու հաճելի է օրը անցնելու,
Ու այս ամոթից ազգն է լացելու):
Ազգը որ գիտեր ինչ է լինելու,
Ազգը, որ վաղուց դա էր կամենում
Ազգը, որ ամոթ էլ չունի վաղուց...
Ամո՛թ է կասեմ. ամոթ է հային,
Ապրել երկկենցաղ գորտերի նման
Գազանաբարո հիմքերից կառչած
Գնալ դեպ առաջ չնկատելով
Այդ խոր անդունդը որ …
Չհասկանալով կործանումը այդ.
Ամոթ է կասեմ, ո՛վ հավատացյալ,
Խաչակնքելով անեծք մի՛ արա,
Ամոթ է կասեմ ով հայ ժողովուրդ,
Մի՛ խաբեք իրար ու թշնամու պես
Փորձեք պահանջել սուտ արդարություն
Մի բռնաբարեք անբիծ մաքրություն,
Ամոթ է կասեմ, անառակություն:

Հեղ.՝ *Զորիկ Գևորգյան*, 07.07.2011 թ.

ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(1994 – 2014)

Թող իմ թափած արյան շիթեր,
Օրինակ դառնան հայ զինվորին...

Ծնվել է 1994 թ. հուլիսի 1-ին Արմավիրի մարզի Մայիսյան գյուղում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս վիրավորվել է 2014 թ. օգոստոսի 1-ին Մարտակերտի շրջանում: Մահացել է 2014 թ. օգոստոսի 3-ին:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է ծննդավայր Մայիսյան գյուղում:

Սարգիս Մովսիսյանը ծնվել է 1994 թ. հուլիսի 1-ին Արմավիրի մարզի Մայիսյան գյուղում: Մայրը՝ տիկին Սոնյա Մանուկյանը, որդուն անվանում է Սարգիս՝ ի պատիվ Սուրբ Սարգսի՝ ցանկանալով, որ երեխան լինի սրբի հովանու ներքո: 2000 թ. Սարգիսը եղբոր՝ Վահագնի հետ, հաճախել է գյուղի միջնակարգ դպրոցը: Դպրոցում աչքի է ընկել աշխատասիրությամբ և համեստությամբ: Ովքեր առիթ են ունեցել ճանաչելու Սարգսին դպրոցական տարիներին, միաբերան նշում են նրա առաքինի տեսակի մասին, որ միշտ պատրաստ էր օգնելու թույլերին և գիտեր բարեկրթության հարգը:

Դասընկերուհին՝ Քնքուշ Տոնոյանը, հիշում է, որ երբ ինքը նոր էր տեղափոխվել Սարգսի դասարան և չգիտեր անգամ, թե որտեղ կարող է նստել, առաջինը Սարգիսն էր, որ ձայնեց՝ «Չե՞ք տեսնում՝

աղջիկ է եկել, եկեք տեղավորենք»: «Ամեն անգամ, երբ ուշացած էր գալիս դասին ու ժպիտով բացում էր դուռը, ոչ մի ուսուցիչ չէր կարողանում նկատողություն անել. բոլորը փոխադարձ ժպտում էին»,- պատմում է Քնքուշը: Չնայած դեռահաս տղային բնորոշ պատանեկան ավյունին և տաքարյունությանը՝ Սարգիսը միշտ հարգալից էր մեծերի նկատմամբ: Դպրոցում չեն հիշում մի դեպք, երբ տղան ձայն բարձրացներ կամ իրեն անվայել պահեր ուսուցիչների ներկայությամբ:

Մեկ այլ ուշագրավ դեպք է հիշում Սարգսի դասղեկ տիկին Մարիա Բաղդիշյանը. «Նրա դասընկերուհիներից մեկը մի անգամ դասագիրքը չէր բերել, Սարգիսը տվեց իրենը, և [ուսուցչի] ամբողջ նախատինքն ու դիտողությունը վերցրեց իր վրա: Դասընկերուհին չգիտեր՝ ծիծաղեր թե ամաչեր դրանից, բայց Սարգիսը մինչև վերջ կարողացավ կանգնել իր ընկերուհու թիկունքին»: Ուղղամիտ և մարդամոտ բնավորության շնորհիվ Սարգիսը կարողացել էր դասարանում լավ հարաբերություններ կառուցել թե՛ տղաների, թե՛ աղջիկների հետ:

2010 թ. ավարտելով դպրոցը՝ Սարգիսը նույն տարում ընդունվում է Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա: Ակադեմիայում ուսումնառության երկու տարիների ընթացքում ցուցաբերում է դրական արդյունքներ:

2012 թ. Սարգիսը զորակոչվում է բանակ: Նախքան երիտասարդի բանակ զորակոչվելն ընտանիքը որոշել էր մեկնել Ռուսաստանի Դաշնություն: Սարգիսը հրաժարվում է մեկնելուց՝ ասելով. «Ես

կծառայեմ, պարտքս կտամ, նոր կորոշեմ՝ գնամ, թե մնամ»: Իսկ Սարգսի կնքահոր՝ Լյովա Հարությունյանի խոսքերով՝ ապագա հերոսը երբեք չի հիասթափվել երկրում տիրող իրավիճակից և որոշած է եղել ապրել ու արարել իր հայրական օջախում…

Զորակոչվելով բանակ՝ սկզբնական շրջանում Սարգիսը ծառայել է Վանաձորի ուսումնական զորամասում՝ Արարատ Խանոյանի հետ միասին: Այստեղ վեց ամիս ծառայելուց հետո տեղափոխվել է Մարտակերտի շրջանի N զորամաս: Ծառայության ընթացքում Սարգիսը հասել է սերժանտի աստիճանի[172] և դարձել ջոկի հրամանատար: Հորեղբայրը՝ Եսայի Մովսիսյանը, պատմում է, որ 1 տարի և 6 ամիս ծառայության ընթացքում Սարգիսը և ոչ մի անգամ չի տրտնջացել, միշտ ասել է՝ «լավ եմ, հոպա՛ր»:

Ֆիզիկական ահռելի ուժի համար համաբանակային ընկերները Սարգսին կոչում էին «Վաշտի Հսկա»: Հորեղբայրը հիշում է, որ նախքան բանակ զորակոչվելը Սարգիսը զբաղվել էր կարատեով և ձյուդոյով: Իսկ 2008-2010 թթ. Սարգիսը մասնակցել է ծանրամարտի մարզային մրցույթների և արժանացել բազմաթիվ մրցանակների:

Արդեն բանակում 2014 թ. ապրիլին մասնակցելով բազկամարտի մինչև 90 կգ քաշային կարգում 16-րդ համաբանակային սպարտակիադայի 2-րդ փուլին՝ Սարգիսը զբաղեցրեց երկրորդ տեղը: Մայի-

[172] Ցավոք, զոհվելու պահին Սարգսի ունեցած զինվորական աստիճանի հարցում տեղի է ունեցել շփոթ: Անգամ ՀՀ և ԼՂՀ ղեկավարների հրամանագրերում տարբեր աստիճաններ են նշվել՝ համապատասխանաբար «կրտսեր սերժանտ» և «սերժանտ» (տես «Հիշատակը» հատվածը): Սարգսի ծառայակից ընկերների միջոցով մեզ հաջողվեց պարզել, որ Վանաձորից Սարգիսը եկել է կրտսեր սերժանտի աստիճանով և Մարտակերտում դարձել սերժանտ: Սարգսի ծառայակից ընկերներից Տիգրան Ավետիսյանի պատմելով՝ «… հիշում եմ՝ անգամ Զորիկը շնորհավորեց Սաքին սերժանտի կոչման համար»:

սյանի դպրոցի տնօրեն Իշխան Պետրոսյանը հիշում է, որ երբ Սարգիսը բանակից արձակուրդ եկավ, իրեն անչափ զարմացրեց տղայի առնական ու հաղթանդամ կեցվածքը, որ հետևանք էր բանակային կյանքի ու վարժանքների. «Իսկական զինվոր էր դարձել Սարգիսը»…

Զորանոցի սենյակում կախավորված հիշատակի անկյուն

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

2014 թ. հնգօրյա միկրոպատերազմի օրերին՝ օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը թշնամին ձեռնարկեց հերթական դիվերսիոն հարձակումը[173]: Թշնամին այդ դիրքի ուղղությամբ հարձակվել էր նաև հուլիսի 26-ին, այդ պատճառով՝ կամենալով հակառակորդի հետագա արկածախնդրությունների առաջն առնել՝ բարձր հրամանատարությունն այդ դիրքի պահպանությունը վստահել էր հետախուզական վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Զորիկ Գևորգյանին: Այդ գիշեր Զորիկի հետ հերթապահում էր նաև ժամկետային սերժանտ՝ ջոկի հրամանատար Սարգիս Մովսիսյանը:

Հենց նրանք են իրենց վրա վերցնում թվային զգալի գերակշռություն ունեցող հակառակորդի դեմ

[173] Այս մարտի մասին առավել հանգամանալից տես սույն գրքի երկրորդ գլխում, ինչպես նաև Զորիկ Գևորգյանին նվիրված հատվածում:

Վաշտի Հսկան

մարտի ամբողջ ծանրությունը: Ռազմական արվեստի բոլոր կանոնների արհեստավարժ կիրառմամբ հրամանատար Զորիկ Գևորգյանը պայքարում է շուրջ 15 րոպե, ինչից հետո ստանում է երրորդ՝ մահացու վիրավորումը: Թոքի և ողնաշարի հատվածում ծանր վիրավորումներով հանդերձ՝ Սարգիսը շարունակում է մարտը և սողալով մոտենում անշնչացած հրամանատարին, որպեսզի ապահով վայր տեղափոխի վերջինիս դին:

Մարտի արդյունքում թշնամու դիվերսիոն խումբը, անհաջողության մատնվելով, նահանջում է՝ թողնելով սպանվածներ, տեխնիկական միջոցներ, զենք-զինամթերք:

Վիրավոր Սարգսին տեղափոխում են հոսպիտալ, կանգնեցնում ներքին արյունահոսությունը և օգոստոսի 2-ին անմիջապես տեղափոխում Երևանի կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ: Օգոստոսի 2-ի լույս 3-ի գիշերը՝ 2-րդ վիրահատության ժամանակ, սերժանտ Սարգիս Մովսիսյանի սիրտը դադարում է բաբախել:

Գաղտնիք չէ, որ Սարգիսը չէր հանդուրժում անարդարությունը: Օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը Սարգիսը չհանդուրժեց թշնամու ոտնձգությունը հայոց սահմաններին և կյանքի գնով կասեցրեց այն՝ փառքով պսակելով իր երիտասարդ անունը:

«Հրամանատարը մեր սաղի կյանքը փրկեց, մենք իրանը չկարեցանք»,- սրանք հերոս Սարգիս Մովսիսյանի արտասանած վերջին խոսքերից էին...

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և նվիրումի, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2014 թ. օգոստոսի 4-ի ՆՀ-199/1-Ա հրամանագրով N զորամասի կրտսեր սերժանտ Սարգիս Արմենի Մովսիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով[174]:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի սերժանտ Սարգիս Մովսիսյանը 2014 թ. օգոստոսի 3-ին հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

«Մայրություն» հասարակական կազմակերպության կողմից Արցախի ազատագրական պայքարում ցուցաբերած հատուկ ծառայությունների համար հետմահու պարգևատրվել է «Մայրա-

Սարգսի հիշատակին նվիրված խաչքար Մարտակերտի զորամասում

[174] Մեդալը Սարգսի ծնողներին է հանձնել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արա Նազարյանը:

կան երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեղալով:

Սարգսի հիշատակին եղբայրների կողմից խաչքար է տեղադրվել զորամասում՝ «կյանքս Արցախին» գրությամբ:

Սարգսի զորանոցի սենյակում զինվորների նախաձեռնությամբ կահավորվել է վերջինիս հիշատակի անկյունը՝ հերոսի դիմանկարով և «Լավագույն հետախույզ դիպուկահար» պատվո մակագրությամբ:

2014 թ. նոյեմբերի 15-ին Ֆունակոշի շոտոկան կարատեի ասոցիացիան կազմակերպել է շոտոկան կարատեի 9-րդ բաց առաջնությունը՝ նվիրված Սարգիս Մովսիսյանի հիշատակին:

«Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության «Կյանք՝ հանուն կյանքի» ծրագրի[175] շրջանակներում 2014 թ. դեկտեմբերի 15 -ին Մայիսյանի դպրոցի բակում բացվել է Սարգիս Մովսիսյանի հիշատակը հավերժացնող հուշաքար:

«Կյանք՝ հանուն կյանքի» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նկարահանվել է հուշագրական կարճամետրաժ ֆիլմ (ռեժիսոր՝ Վան Սեդրակյան)՝ նվիրված Սարգիս Մովսիսյանի հիշատակին:

Սարգիս Մովսիսյանի ծննդյան 21-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթի շրջանակներում նախկին համադասարանցիների ջանքերով բարեկարգվել, կահավորվել և Սարգիս Մովսիսյանի անունով է անվանակոչվել այն դասասենյակը, որտեղ ուսա-

[175] Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից ընտրված գործընկեր կազմակերպության՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից իրականացվող դրամաշնորհային մրցույթի շրջանակներում:

նել է հերոսը: Դասասենյակում նաև առանձնացվել է Սարգիսի կարճ, բայց հերոսական ուղին ներկայացնող անկյուն:

Մայիսյան գյուղի Ազատամարտի պուրակում՝ Արցախյան պատերազմի մայիսյանցի վեց ազատամարտիկներին նվիրված հուշարձանին, որպես մերօրյա հերոս, փորագրվել է Սարգիս Մովսիսյանի անունը: Միջոցառման ժամանակ մանուկ մայիսյանցիները երդվեցին Սարգիսի հիշատակին՝ «Խոստանում ենք լավ սովորել, կյանքում իրականացնել Սարգսի բոլոր երազանքները, դառնալ Հայաստանի Հանրապետության հայրենասեր, արժանի քաղաքացիներ»:

2014 թ. օգոստոսի 5-ին Սարգիս Մովսիսյանին զինվորական կարգով՝ պատվո պահակներով և զինվորական երգչախմբով, հուղարկավորեցին հայրենի Մայիսյան գյուղում: Արարողությանը ներկա էին ծառայակից ընկերները, ՊՆ ղեկավար անձնակազմը և այլ բարձրաստիճան անձինք:

Մայիսյանի դպրոցի տնօրեն Իշխան Պետրոսյանը հավատացնում է. «Սարգիսը իր կյանքը տվեց՝ հանուն կյանքի: Սարգիսի հիշատակը միշտ վառ է մնալու մայիսյանցիների հիշողության մեջ, և տասնյակ տարիներ հետո Սարգսին միշտ հիշելու են: Դպրոցում անում ենք ամեն ինչ, որ իր օրինակով դաստիարակվեն նաև նոր սերնդի աշակերտները, ովքեր գալիս են հերթափոխ լինելու Սարգսին»: Տնօրենի խոսքերով՝ այսուհետ ամեն տարի՝ սեպտեմբերի 1-ին, յոթերորդ դասարանցիները երդվելու են Սարգսի նկարի առաջ՝ վառ պահելու նրա հիշատակը և դառնալու նրա գործի շարունակողը:

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ
(1995 - 2015)

Անմահության ճամփով

Ծնվել է 1995 թ. հունիսի 12-ին Արարատի մարզի Հովտաշեն գյուղում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2015 թ. հունվարի 3-ին Ասկերանի շրջանում:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է ծննդավայր Հովտաշեն գյուղում:

Վարդան Մարտիկի Մկրտչյանը ծնվել է 1995 թվականի հունիսի 12-ին Արարատի մարզի Հովտաշեն գյուղում: Մկրտչյանների ընտանիքի անդրանիկ զավակն էր: Գյուղի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա: Մեկ տարի սովորելուց հետո զորակոչվել է բանակ:

Ուսուցիչները Վարդանի մասին հիացմունքով ու կարոտով են խոսում և հիշում, որ երբեք դասից չի ուշացել ու չի բացակայել, ընդհակառակը՝ դասամիջոցներին միշտ գիրք էր կարդում: Միշտ ավելի հասուն է եղել շրջապատի հասակակից ընկերներից: Վարդանը լուրջ է վերաբերվել ցանկացած գործի, որը հանձնարարվել է իրեն: Վարդանի այս հատկանիշներն էին հենց, որ տարիներ անց պիտի դրսևորվեին հայրենիքի սահմանները պաշտպանելիս և ընկերներին վերահաս վտանգից փրկելիս…

«Սիրում էր մարդկանց հասնել, օգնել, պատասխանատվություն վերցնել իր վրա, դրա համար էլ ոչ ոք ու երբեք Վարդանից չի բողոքել: Չէր սիրում խոսել իր խնդիրների մասին, տանը մենք չենք իմացել, որ ինքը խնդիրներ ունի, չէր բողոքում, չէր տրտնջում,- հուզմունքով պատմում է Վարդանի հայրը: - Ասում էր՝ «Ծառայությանը լուրջ պետք է վերաբերվել, ինչ-որ բաներ էլ երբեմն պետք է լուռ հանդուրժես»»:

Դեռևս փոքր տարիքից Վարդանն աչքի է ընկել բարձր կազմակերպվածությամբ, աշխատասիրությամբ և ստեղծագործական ջիղով: Սիրել է բնություն, ընտրել այնպիսի զբաղմունքներ, ինչպիսիք են որսորդությունը, ձկնորսությունը: Վարդանի նոթատետրը լի է գեղեցիկ բանաստեղծություններով ու նկարներով: Բանաստեղծությունների մեծ մասը ձոնված է մորը, ընտանիքին, սիրուն, իսկ նկարներից յուրաքանչյուրն ունի հատուկ խորհուրդ-գաղտնագիր: Վարդանը բանակից զանգում և մայրիկին պատմում էր դրանցից յուրաքանչյուրի իմաստը:

Ծնողների պատմելով ստացվել է այնպես, որ Վարդանը ժամանակից փոքր-ինչ շուտ է մեկնել բանակ: Հենց ծննդյան օրը Վարդանն անձամբ գնացել է զինկոմիսարիատ և խնդրել իր ծանուցագիրը: «Մա՛մ ջան, ես չգնամ՝ ո՞վ պետք ա գնա: Մեր հայրենիքին ամուր մարդիկ են պետք: Ես պետք ա օգտագործեմ իմ ուժը հայրենիքս պաշտպանելու համար»:

Ծառայության ժամանակ Վարդանը երբեք չի տրտնջացել, չի բողոքել իր ծառայությունից և առհասարակ շատ քիչ է խոսել ծառայությունից: Չնայած սրան՝ որդու խոսքերից ծնողները հասկացել են այն մեծ հիացմունքը, որ վերջինս տածել է բանակի հանդեպ: Դեռևս դպրոցական տարիներից Վարդանի ամենասիրելի առարկաներն աշխար-

հագրությունն ու մաթեմատիկան են եղել: Բանակում զինվորը շարունակել է կրթվել: Տնից ստացած կապոցները, որ իր խնդրանքով ծնողներն էին ուղարկում, տարբերվում էին մյուս զինծառայողների ցանկացածից: Դրանք պարտադիր պարունակում էին քարտեզներ, գրքեր, բառարաններ:

«Դիրքերում պետք է զգոն լինել ու աչալուրջ»,- սա ծառայությանը վերաբերող այն հազվադեպ մտքերից էր, որ Վարդանը հաճախ էր կրկնում ծնողների հետ խոսելիս…

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՏՇՏՊԱՆԸ

Հունվարի 2-ի լույս 3-ի գիշերն էր: Դիրքապահ ընկերների հետ Վարդանը հսկում էր Հայաստանի խաղաղությունն ու հայերիս ուրախ Ամանորը:

Ժամը 02:00-ի հատվածում շները սկսում են անհանգիստ ձայներ արձակել: Վարդանը ծառայակից ընկերներից մեկի հետ շարժվում է ձայնի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ստուգել խրամուղու անվտանգությունը: Շների ձայներն աստիճանաբար լռում են, և թվում է, թե ձմեռային գիշերը խաղաղ է: Սակայն հենց այդ պահին 001 և 002 դիրքերի[176] միջդիրքային տարածությունում Վարդանը նկատում է թշնամու կենդանի ուժի շարժ: Բարձրանալով խրամապատնեշի վրա՝ նկատում է թշնամու շուրջ հինգ դիվերսանտի: Հետ իջնելով՝ ընկերոջը կարգադրում է վերադառնալ 001 դիրք և հայտնել դիվերսիոն հարձակման մասին, մինչ ինքը դիրքավորվելով՝ կսկսի խոցել թշնամուն: Ընկերը փորձում է հետ պահել Վարդանին՝ առաջարկելով

[176] Դիրքերի համարները պայմանական են:

միասին հետ քաշվել, ինչին Վարդանը պատասխանում է՝ «Փախչել չկա, ո՞ւմ առաջ փախչենք, թուրքի՞»:

Վարդանը նախօրոք հավաստանշած վայրում գիշերային թույլ տեսանելիության պայմաններում սկսում է խոցել թշնամուն: Ցավոք, տարածությունը բավականին մոտ էր, և թշնամին կարողանում է գտնել կրակի ուղղությունը: Բացի այդ՝ թշնամու ևս մեկ դարանակալած խումբ կար հենց խրամուղու միջնամասում, ուստի՝ Վարդանը մարտի է բռնվում միաժամանակ երկու խմբի դեմ: Հերոսը վիրավորվում է թշնամու գնդակից, սակայն շարունակում է կրակ տեղալ: Վարդանի զենքը լռում է միայն այն ժամանակ, երբ դավաղիր թշնամու նռնակը խոցում է իրեն…

Մարտը տևեց մի քանի րոպե, առաջինը կրակն իր վրա վերցրեց Վարդանը, մինչ րոպեներ անց հայկական համապատասխան ստորաբաժանումները գիշերը ծավալված մարտում ստիպեցին թշնամուն նահանջել: Առավոտյան աղրբեջանական զինծառայողների դիրքավորված տարածքում հայտնաբերված արյան հետքերը հաստատում էին, որ թշնամին ունեցել է վիրավորներ կամ զոհեր, որոնց հասցրել է նահանջելիս դուրս քաշել:

Առավոտյան արդեն Վարդանի հերոսության մասին գիտեր ամբողջ զորամասը: Մարտի տարածքում կատարված քննության արդյունքում հաստատվել էր, որ թշնամու դիվերսիոն խմբի նպա-

տակը 001 և 002 դիրքերի միջև ընկած խրամուղու հատվածը ականապատելն էր: Ու թեև Վարդանի զոհվելուց հետո դիվերսիոն խումբն իրականացրել էր տարածքի ականապատում, այնուամենայնիվ, թշնամու ռազմական պլանը ձախողվեց, քանզի հենց առավոտյան Վարդանի ընկած տեղում և մերձակայքում հայկական համապատասխան ստորաբաժանումներն իրականացրին ականազերծում:

«Վարդան Մկրտչյանն … իմ հերոսներից է, … նրա սխրանքն անգնահատելի է: Միայնակ փրկել է բոլոր զինվորների կյանքը, մարտը շարունակել նաև վիրավոր՝ պառկած վիճակում: Վարդանն ունեցել է փախչելու հնարավորություն: Սակայն նախընտրել է գիտակցված մահը՝ հանուն հայրենիքի ու ընկերների»,- հերոս դիրքապահի մասին պատմում է ծառայակից ընկեր Միեր Օթարյանը:

Նահանջելու և կռվելու երկընտրանքի առաջ Վարդանը քայլեց անմահության ճամփով, փրկեց ծառայակիցներին և զոհվեց՝ մեզ ժառանգելով երդվյալ զինվորի և անվեհեր հերոսի իր փառքը…

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության և անձնազոհության համար ՀՀ զինված ուժերի կազմավորման 23-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2015 թ. հունվարի 21-ի հրամանագրով շարքային Վարդան Մարտիկի Մկրտչյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտ-

Վարդանի փառքի անկյունը Հովտաշենի դպրոցում: Լուսանկարը՝ Անի Գևորգյանի («Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ)

պանության բանակի N զորամասի շարքային Վարդան Մկրտչյանը 2014 թ. հունվարի 3-ին հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով N զորամասի շարքային Վարդան Մկրտչյանը 2015 թ. մայիսի 9-ին հետմահու պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Հովտաշենի դպրոցում կահավորվել է Վարդան Մկրտչյանին նվիրված անկյուն՝ հերոսի դիմանկարով և անձնական ստեղծագործություններով:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ[177]

Սահմանի գծում ձյուն է փչում,
Զինվորը սառել, իր տունն էր հիշում:
Հիշել էր նա մորը թանկագին
Ու գեղեցկուհի սիրած էակին:
Մի թախծոտ օր էր, մի մռայլ գիշեր,
Մատները սառել, իսկ սիրտը հուզվել,
Լալիս էր անվերջ, կարոտն էր խեղդել.
Կարծես զգում էր, որ էլ չի տեսնի,
Որ էլ չի տեսնի մորը հեզ ու թանկագին,
Չի տեսնի սիրուն սիրած էակին՝
Իր սիրո միակ սիրո հրեշտակին:
Մարմինը սառել, չէր ըզգում ոչինչ,
Անդամահատվել էին ոտքերը նրա:
Նա չէր շարժվում, չէր կարում շնչել
Ցրտաշունչ օր էր, ահարկու գիշեր…
Ցրտից մեռնում էր ահա զինվորը
Ողջ մարմնում բաբախում էր սիրտը,
Տանջվում էր հոգին, մեռնում մարմինը…
Ու վերջին զարկը, որ խփեց սիրտը
Վերջին զարկի հետ լվեց այս միքտը՝
«Աստված պահի իմ հրաշք մորը»:

Հեղ.՝ *Վարդան Մկրտչյան*, 09.12.2014 թ.

Զինվորի կյանքը մարտում
Նման է վառվող մոմի,
Որ չգիտես, թե երբ կհանգչի
Զինվորի համար պետք չէ արտասվել,
Զինվորի համար պետք է աղոթել[178]:

Հեղ.՝ *Վարդան Մկրտչյան*

---

[177] Վարդանն այս բանաստեղծությունը գրել է մահից 24 օր առաջ և նվիրել զոհված զինծառայողների հիշատակին:

[178] Վարդան Մկրտչյանի այս տողերը դաջված են հերոսի շիրմաքարին:

ԱՐՇԱԿ ԿԱՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(1995 - 2015)

Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել...

Ծնվել է 1995 թ. մարտի 15-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2015 թ. մարտի 19-ին Մարտակերտի շրջանում:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Արշակ Հարությունյանը ծնվել է 1995 թվականին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում: Ընտանիքի անդրանիկ զավակն էր: «Արշակը թուխ երեխա էր, շիկահեր ռուսների մեջ հեշտ տարբերվում էր, ու տեսնողները միանգամից ասում էին՝ «հայի երեխա է»»,- հիշելով տղայի մանկությունը՝ պատմում է հայրը՝ Կարեն Հարությունյանը:

Արշակի ծնվելուց հինգ ամիս հետո ընտանիքը վերադառնում է Հայաստան: Արշակը սովորում է Երևանի թիվ 64 միջնակարգ դպրոցում: Ավարտելով 9-րդ դասարանը՝ Արշակն ընդունվում է Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարան՝ խոհարարական բաժին: «Արշակ Հարությունյանը խելացի, համեստ երեխա էր»,- հիշում է ուսումնարանի տնօրեն Ռուզան Տոպոլյանը:

Արշակը և Վահեն

Մինչ բանակ զորակոչվելը Արշակը զբաղվել է եռամարտով: Առհասարակ սիրել է սպորտը: Դեռ մանկուց մեծ սեր է ունեցել նաև կենդանիների նկատմամբ: Սովորություն ուներ Էրեբունու սարից օձեր բռնելու. վախ չուներ անգամ վերջիններից: Արշակի հայրը արհեստավոր էր, մայրը՝ տիկին Ջավահիրը՝ զինվորական բուժքույր: Վերջինս հիշում է, որ Արշակը դեռ փոքրուց է շփվել զինվորականների հետ, ծանոթացել նրանց նիստուկացին ու վարքին:

Արշակն առանձնանում էր ընկերասիրությամբ: Ընկերներ ուներ բակում, դպրոցում, բանակում՝ ամեն տեղ, ուր հասցրել էր լինել կյանքի ինչ-որ ժամանակահատվածում: «Ամեն անգամ, երբ գնում էի «Եղնիկներ»՝ Արշակիս տեսնելու, ոչ մի անգամ չէր լինում, որ միայնակ գար, միշտ ընկերների հետ էր գալիս, բոլորին հետս ծանոթացնում, ներկայացնում»,- հիշում է Արշակի հայրը: Չնայած ընկերական մեծ շրջապատին՝ Արշակը, այդուամենայնիվ, եղել է ինքնուրույն և սիրել է սեփական համոզմունքներով որոշումներ կայացնել, սեփական ուժերով լուծել խնդիրները:

Ուշագրավ է բանակ զորակոչվելու պատմությունը: Ծանուցագիրը ստանալուց հետո Արշակը սկզբում մեծ դժվարությամբ է հարմարվում բանակ գնալու մտքին: Սակայն հաշված օրերի ընթացքում ապագա հերոսի տրամադրությունը կտրուկ փոխվում է, ու երիտասարդը մեծ պատրաստակամու-

թյամբ մեկնում է հավաքական: Ավելին՝ Արշակն ուրախացել էր Արցախում ծառայության անցնելու համար: Այսօր արդեն դժվար է ասել, թե ինչն էր այդքան խանդավառել տղային՝ Արցախի անառիկությունը, «Եղնիկների» խորհրդավորությունը, թե ընկերասիրության սեփական հավատամքի կենդանի դասերը Շահումյանի անտառներում սրբագրելու իղձը…

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

Արշակը պատերազմի շունչը զգաց դեռևս օգոստոսյան միկրոպատերազմի օրերին: Նույն զորամասում ծառայելով՝ միշտ աչքի առաջ ունեցել է Ազատ Ասոյանի ու Արարատ Խանոյանի սխրանքը: Օգոստոսյան հենց այդ օրերին Արշակը պատվոգիր և դրամական պարգև ստացավ: Դժվար չէ ենթադրել, թե ինչի համար… Արշակի հենց այդ մարտական փորձը դեռ պետք է դրսևորվեր 2015 թ. մարտի 19-ին՝ օգնելու ծառայակիցներին և պաշտպանելու նախորդների արյամբ սրբագործված հայրենի հողը:

2014 թ. դեկտեմբերին Արշակը ծառայակից ընկերներ Սամվել Հակոբյանի ու Սարգիս Գաբրիելյանի հետ միասին արձակուրդ էր եկել: Արշակի հայրը նրանց բերել էր՝ մասնակցելու իրենց մարտական ընկերոջ՝ Արարատ Խանոյանի հուշաքարի բացմանը: Առհասարակ մարտական լարվածության օրերին Արշակը քիչ էր խոսում ընտանիքի անդամների հետ, հանգստացնում էր, որ ամեն բան լավ է, իսկ կնճռոտ հարցերին նախընտրում էր չպատասխանել, ուստի՝ դեկտեմբերյան այդ կարճլիկ արձակուրդն Արշակի հոր համար պատեհ առիթ էր

զրուցելու որդու հետ և տեղեկանալու ծառայության մասին:

Վերջին մարտից չորս օր առաջ՝ մարտի 15-ին, Արշակը նշել էր ծննդյան 20-ամյակը: Զորամասում ծնունդը նշելու հաջորդ օրը տղաները բարձր տրամադրությամբ բարձրացել են դիրքեր… Մարտի 17 -ի լույս 18-ի գիշերը լարված էր անցել. անդադար կրակոցներ: Դիրքապահ զինվորները, սակայն, ամբողջ գիշեր չէին կորցրել զգոնությունը:

Մարտի 19-ի առավոտյան՝ ժամը 08:00-ի սահմաններում, դիրքափոխության պահին, երբ դեռևս հարյուր մետր էին հեռացել նախկին դիրքից, դասակի հրամանատար Սարգիս Գաբրիելյանը և իր տասը զինվորները կրակոցի ձայն են լսում, ինչպես նաև ծառերի հետևում շարժում են նկատում: Թշնա-

Արշակի անվան դասարանը

մու հատուկ նշանակության ջոկատի ուժեղացված խումբը փորձում էր շրջապատել հայ դիրքապահներին…

«Երբ արդեն նկատել էինք թշնամիներին, դիրքավորվեցինք, պատրաստեցինք զենքերը,- պատմում է Սարգիս Գաբրիելյանը: - Հարությունյան Արշակն իմ առաջն ընկավ, սկսեց կատաղած կրակել թուրքերի վրա, այնուհետև Խաչատրյան Հակոբն առաջ ընկավ»: Չնայած վիրավորվելուն՝ Արշակը շարունակել է մարտը նաև պառկած վիճակում: «Հարությունյան Արշակի ու Հակոբյան Սամվելի նման դուխով զինվոր չկար մեր զորամասում»,- անթաքույց թախիծով հիշում է մարտում ողջ մնացած դասակի հրամանատարը:

«Մենք այդ օրն օգնեցինք մեր ընկերներին մի քանի րոպե ավել տեսնել այս երկինքը: Եթե մենք չկռվեինք, բոլորս միանգամից կզոհվեինք»,- գարնանային այդ ցուրտ ու մառախլապատ օրը տեղի ունեցած մարտի փիլիսոփայությունն ու ընկերասիրության խորհուրդը այսպես է մեկնում Սարգիսը[179]…

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և անձնազոհության համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2015 թ. սեպտեմբերի 5-ի ՆՀ-514-Ա հրամանագրով N զորամասի զինծառայող, շարքային Արշակ Կարենի Հարությունյանը հետմահու

[179] 2015 թ. մարտի 19-ին Գյուլիստանում տեղի ունեցած մարտի նկարագրությունը տես նաև Էդուարդ Հայրապետյանին և Հակոբ Խաչատրյանին նվիրված հատվածներում:

պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Արշակ Հարությունյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Արշակ Հարությունյանը պարգևատրվել է ««Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհուրդ» իրավաբանական անձանց միություն կողմից սահմանված «Զինվոր հայրենյաց» մեդալով:

Թիվ 64 հիմնական դպրոցում բացվել է դասարան Արշակի անունով: Դասասենյակում առանձնացված է Արշակին նվիրված անկյուն:

Գրքի նախապատրաստման ընթացքում հայտնի դարձավ, որ այս տարի Երևանի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարանում բացվելու է Արշակ Հարությունյանի անվան դասասենյակ:

Արշակ Հարությունյանը հուղարկավորվեց «Եռաբլուր» զինվորական պանթեոնում զինվորական կարգով: Հուղարկավորությանը ներկա էին Արշակի հարազատները, ընկերները, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանը, ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը, ՊՆ այլ պաշտոնյաներ:

Հուղարկավորության ժամանակ հերոսի շիրմին դամբանական ճառ արտասանեց ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը.

«Մեր ոչ արդար հարևանների կողմից պարտադրված լարված իրավիճակում նրանց կողմից իրականացված սադրանքի արդյունքում մենք ու-

նեցել ենք զոհեր:

Անհավասար մարտում մեր զինվորները՝ Արշակ Հարությունյանի մարտական ընկերները, ծառայակից ընկերները, դասակի հրամանատարի և այնուհետև նաև օգնության հասած զորամիավորման հրամանատարի և հատուկ նշանակության ստորաբաժանումների հետ միասին մեր հայրենիքի պաշտպանության մարտում կարողացան արժանի հակահարված տալ հակառակորդին: Դարանակալված հակառակորդը հանկարծակիի բերեց այն ստորաբաժանումը, որի կազմում ծառայում էր Արշակ Հարությունյանը: Մեր սիրելի Արշակը և նրա ընկերներն անձնուրացությամբ մարտի մեջ մտան:

Ես երեկ անձամբ [Պաշտպանության] բանակի հրամանատարի … հետ միասին եղել եմ այդ նույն վայրում, որտեղ մեր տղաները կարողացել են անմիջապես դիրքավորվել և դասակում ունեցած բոլոր հնարավորություններով, կրակային միջոցներով խոցում իրականացնել հակառակորդին: Իրականության մեջ նրանք հերոսություն են կատարել, հերոսություն, որի արդյունքում մենք կարողացել ենք հակառակորդին հետապնդել մինչև իրենց դիրքերի մատույցները և խմբավորումն ամբողջությամբ ոչնչացնել:

Մարտի մեջ են բռնվել Արշակի հետ միասին այնուհետև միավորման հրամանատարը, զորամիավորման հրամանատարը, զորամասերի սպայական կազմը… Բայց քանի որ մարտն ի սկզբանե անհավա-

սար էր, եթե չկատարվեր այդ ամենը՝ … Արշակի ընկերները իր հետ միասին հակառակորդին սկզբնական փուլում չխոցեին, ապա նրանք անպատիժ կարողանալու էին արագ փախչել, ճողոպրել և անպատիժ մնալ: Նրանք ստիպեցին, որ … (ի նկատի ունի՝ Արշակը և ընկերները՝ իրենց հերոսության շնորհիվ – *Է.Է.*) ժամանակի մեջ մենք կարողանանք որոշում ընդունել և կողքի դիրքերից և զորամասից արագ վերախմբավորվել, օգնության ուղարկել համապատասխան ստորաբաժանում և հասնել հաջողությունների:

Այսօր մենք բոլորս ցավ ենք ապրում: Բայց միևնույն ժամանակ մենք բոլորս պետք է հասկանանք, ինչպիսի վայրում ենք մենք գտնվում:

Արշակը էսօր լրացնում է մեր բոլոր մարտական ընկերների այն շարքը, ովքեր որ թեկուզ ֆիզիկապես մեզ հետ չեն, բայց նրանք Երկնքից մեզ վերահսկում են, նրանց ոգիները մեզ հետ են, նրանց ոգիների կողմից մեզ եկող հուրը, անդրադառնալով իրենց էս քարեղեն կոթողներին, արտացոլվում է մեր այսօրվա սերնդի, մեր երիտասարդների գործողությունների մեջ: Արշակը նաև լրացրեց իր պապիկի շարքը: Մարդ, որը որ Արցախյան գոյապայքարում իր անձնազոհության շնորհիվ մնացած բոլորի հետ ապահովեց հայ ժողովրդի և՛ հաջողությունները, և՛

հաղթանակը, և՛ այսօրվա խաղաղ արարումը:

Բանակի ողջ անձնակազմը, ղեկավար կազմը և Պաշտպանության նախարարությունը, Գլխավոր շտաբը այսօր … խորին ցավակցություն [են] հայտնում բոլոր զոհված ազատամարտիկների, բոլոր զոհված զինվորների հարազատներին: Առաջին հերթին մենք խոնարհվում ենք մինչև գետին Արշակի հիշատակի առջև: Հավատացե՛ք՝ այսօր՝ այս պահին, քանի որ նոր է ցավը մեզ պատել, մենք դեռևս միգուցե չենք գիտակցում այնքան, բայց Արշակի և նրա ընկերների անձնազոհությունը, ըմբոստ կեցվածքը, հայրենիքին նվիրվածությունը, նրա անձնական արժանիքները, նրա՝ հայրենիքի պաշտպանի կարողությունները և այնուհետև նաև մեր բոլորիս կողմից գտնվելը նրա հարազատների մոտ … և նաև ժամանակը երևի թե՝ կսփոփի [այդ ցավը]: Եվ մենք այնուհետև հպարտանալու ենք Արշակի նման տղաների և մեր բոլոր … նվիրյալների համար:

… Ուզում եմ տեղեկացնել, որ այս ցավը կուտակվում և ավելի հզոր ուժով հարվածում է առաջին հերթին հենց բանակի ղեկավարությանը, որովհետև մենք ենք պատասխանատուներն այս բոլորի համար:

… Եվս մեկ անգամ խոնարհում Արշակի հիշատակի առջև»:

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

««Բանակի գերազանցիկ» կրծքանշանը ստանալու առթիվ՝ Արշակին վերջին ծննդյան օրը արձակուրդ էին տվել, սակայն նա նախընտրել էր չգալ. ասում էր՝ «երեք ամիս բան է մնացել, ավելորդ ծախսեր չեմ ուզում պատճառել»:

Փոքր ժամանակից լուսավոր երեխա էր, նրբազգաց, խելոք: Ինքն իմ լուսավոր կետն էր: Անսահման մարդասեր էր: Երբ մեր տուն մարդ էր գալիս, ամեն ինչ տալիս էր, ամեն բան անում էր բոլորի համար: Այդչափ ընկերասեր մարդ ես շատ քիչ եմ տեսել: Արշակս մի տեսակ շուտ հասունացավ, դարձավ կոփված, տղավարի: Սիրում էր ուժը, չէր հանդուրժում թույլ մարդկանց, անգամ ֆիլմերի մեջ չէր սիրում թույլ կերպարներին:

Շատ ընկերասեր էր: Իր կյանքում ընկերներն առանձնահատուկ օղակ էին: Ինքն իր համար չէր ապրում: Ընկերները մի ուրիշ աշխարհ էին նրա համար: Ընկերների համար կյանքն էլ կտար: Կռվի օրն իր հետ եղած տղաներից մեկը (թո՛ւյլ տվեք անունը չնշել) մի անգամ ասաց. «**Որ Արշակի ընկերասիրությունը չլիներ, ես էսօր չէի լինի**»:

Ես գիտեի, որ նա շատ լավ է ծառայում, չեմ կասկածել, բայց չեմ իմացել, որ այդքան բանի միջով է անցել: Անցած տարվա օգոստոսյան դեպքերի ժամանակ պատվոգիր էր ստացել Արշակս: Այդ օրերին նա արգելել էր՝ ինձ ասեին, որ ինքը դիրքերում է: Բայց հետո, երբ խոսում էինք, շատ էր կրկնում՝ «Մա՛մ ջան, ես սիրում եմ մարտի մեջ մտնել, կռվել»: Հիմա արդեն գիտակցում եմ, որ իր նման մարդիկ են կերտում մեր ապագան ու վաղվա պատմությունը…

Վերջին արձակուրդի ժամանակ[180] ասում էր. «Մամա՛, ես էնտեղ ամեն մի թուփը, կածանը, ծառի ճյուղերն անգամ անգիր գիտեմ՝ աչքերս փակ»: Մեծ հպարտությամբ էր խոսում իր զորամասի մասին. սիրում էր «Եղնիկները», պարծանքով խոսում սպասվող զորավարժությունների մասին: Ասում էր. «Մա՛մ ջան, ամեն ինչ իրական ա, ու ես մթության մեջ էնքան արագ եմ կողմնորոշվում, անգամ ճանճին եմ տեսնում»: Զգում էի՝ **Արշակս դարձել էր իսկական հետախույզ**: Ես ինքս գլուխ եմ խոնարհում իմ որդու անձնուրացության առաջ»:

Զավահիր Գրիգորյան, *հերոսի մայրը*

[180] Վերջին անգամ Արշակն արձակուրդ է եկել 2014 թ. դեկտեմբերին (*Է.Է.*):

ԷԴՈՒԱՐԴ ԳԱԳԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
(1995-2015)

Հայաստանը ես եմ

Ծնվել է 1995 թ. փետրվարի 4-ին Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքային համայնքի Մուղնի գյուղում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2015 թ. մարտի 19-ին Մարտակերտի շրջանում:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է ծննդավայր Մուղնի գյուղում:

Էդուարդ Հայրապետյանը ծնվել է 1995 թվականին Աշտարակ քաղաքային համայնքի Մուղնի գյուղում՝ աշխատավորի ընտանիքում: Հայրը՝ Գագիկ Հայրապետյանը, պարտադիր զինվորական ծառայությունն անցկացրել է Ուկրաինայում, որտեղ ծանոթացել ու ամուսնացել է Կիտ-Նատալիա Հայրապետյանի հետ: Վերադառնալով Հայաստան՝ ապրել են Գագիկի մոր՝ Կատար (Կատյա) Հայրապետյանի և եղբոր ընտանիքի հետ՝ մեկ հարկի տակ:

Էդուարդը տան երրորդ զավակն էր, ուներ երկու քույր և մեծ եղբայր: Նա տատի ցանկությամբ կրում էր պապի անունը: Դեռ վեց տարեկան էր, երբ ուկրաինուհի մայրը, չցանկանալով մնալ ու անժամկետ սպասել ազատազրկված ամուսնուն, վերցնում է երկու դուստրերին, ավագ որդուն և տեղափոխվում իր ծննդավայր: Մոր հորդորները, որ

Էդուարդն իրենց հետ մեկնի, զուր էին. «Մա՛մ, իլը ուշաղիր էրեսիս նայի, ես հա՛յ եմ, ի՞նչ գործ ունեմ ուրիշի քուչեքում: Եթե ուզում ես, գնա ծնողներիդ մոտ, իսկ ես կմնամ տատիս հետ է՛ս երկրում»,- վեցամյա Էդուարդի խոսքերն արցունքով հիշում ու պատմում է Կատյա տատը:

Էդուարդի համար տատը եղել է թե՛ հայր, թե՛ մայր, քանզի տղայի իրական ծնողներին առանձնապես չի հետաքրքրել, թե ինչպես և ինչ դժվարություններով է ապրում իրենց երեխան: Հայրը երկու անգամ ազատազրկվել է, որից հետո ամուսնացել է երկրորդ անգամ, իսկ մայրը մեկնելուց հետո այլևս երբեք չի տեսել Էդուարդին: «Էրեխես մանկություն ու պատանեկություն չի ունեցել. միանգամից ծերացավ,- հիշում է տատը:- Յոթ-ութ տարեկան էր՝ տուն էր գալիս, այգին մշակում, լվացք անում, բայց ամաչում էր փռել. ասում էր «ամոթ ա, սաղ նայում են»: Արձակուրդներին միշտ աշխատում էր. միրգ էլ է վաճառել, շինարարական աշխատանքներ էլ է արել: Գիտեք՝ ի՞նչ երեխա էր. եթե տանը հաց չէր լինում, չէր թողնում՝ գնամ, պարտքով վերցնեմ, ասում էր՝ եթե էսօր վեց հարյուր դրամ չենք կարողանում տալ, վաղը ո՞նց հազար երկու հարյուր կտանք»:

Չնայած դժվարություններին՝ Էդուարդը սիրով է հաճախել դպրոց ու աչքի է ընկել իր ինքնատիպությամբ: 2002-2009 թթ. սովորել է Մուղնու Մ. Աշճյանի անվան միջնակարգ դպրոցում, որից հետո տեղափոխվել է Աշտարակի Նորայր Սիսակյանի անվան ավագ դպրոց, որն էլ ավարտել է 2012 թվականին: Գուցե առաջադիմությամբ չի փայլել, բայց մարդկային հատկանիշների շնորհիվ երկու դպրոցներում էլ եղել է սիրելի աշակերտ: Մուղնու դպրոցի փոխտնօրեն Գայանե Ավետիսյանը, հուզմունքը զսպել չկարողանալով, վերհիշում ու պատմում էր իրենց դպրոցի ամենապարտաճանաչ ու լուսավոր

Փոքրիկ Էդուարդը (աջից) հորեղբոր որդու հետ

սանի մասին. «Անկախ իրեն բաժին հասած դժվարություններից՝ մարդատյաց չէր, մի փոքրիկ քաղցր խոսքից անգամ ոգևորվում էր: Մինչ բանակ գնալը մի օր պատահաբար փողոցում հանդիպեցինք, հեռվից ինձ տեսել ու մոտեցել էր: Այնքան ուրախ ու ոգևորված էր, ասաց, որ շատ քիչ մնաց, մի քանի օրից բանակ է գնում: Հիշում եմ՝ այդ ժամանակ Աշտարակի խանութներից մեկում վաճառող էր աշխատում, գումար էր խնայել ու բանակ գնալու առթիվ խնջույք կազմակերպել»:

Հենց այդ խնջույքի ժամանակ մի արտահայտություն էր արել, որը մինչ օրս Կատյա տատը մոռանալ չի կարողանում. «**Տատի, հեչ չնեղվես, ես թքել եմ էն տղու վրա, որ պիտի վիզը թեքի ու ասի՝ «վախենում եմ, մամայիս ո՞նց թողնեմ, էթամ»: Ես պիտի՛ էթամ էլ, պիտի՛ կռվեմ էլ: Ես հո չեմ թողի, որ թուրքը գա իմ քրոջը մորթի**»…

Դասղեկ տիկին Հուրիխանյանն իր Էդուարդի մասին միշտ է հիշում. «Հաճախ էինք մեր դասղեկական ժամերի ընթացքում խոսում հայրենիքի ու բանակի թեմաներով: Նա միշտ մեծ ոգևորությամբ էր խոսում հայրենիքին իր պարտքը տալու մասին, դեռ ավելին՝ շտապում էր ծառայել, միշտ ասում էր, որ ուզում է գնալ, կռվել, բայց վերադառնալ ու օգնել ընտանիքին ու մասնավորապես՝ տատին»:

Այսօր դպրոցում ամեն երեխա գիտի Էդուարդի, նրա սխրանքի մասին: Նրանք մեծանում են որպես փոքրիկ էդուարդներ՝ հայրենիքի նվիրյալ զավակներ: Թերևս Էդուարդն էլ իր հերթին ոգեշնչվել էր իր

համագյուղացի՝ մերօրյա հերոս կրտսեր սերժանտ Վարդան Օհանյանի օրինակից, ով զոհվել էր 2012 թ. հունիսի 5-ի լույս 6-ի գիշերը Հադրութի շրջանում՝ հետ մղելով Հորադիսի ուղղությամբ թշնամու դիվերսիոն հարձակումը: Այսօր արդեն անսահման հպարտությամբ Մուղնի փոքրիկ գյուղը փաստում է, որ իր որդի Էդուարդ Հայրապետյանն արժանավոր հայորդի է, քաջարի զինվոր ու սխրագործ:

Էդուարդի փառքի անկյունը Մուղնու դպրոցում

Իր Էդուարդով ամենից շատ հպարտ է Կատյա տատը, քանզի հերոս թոռը երբեք ոչ մի դժվարության առաջ ծնկի չի եկել, գիտակցաբար գնացել է ծառայության, չի տրտնջացել և հերոսական անուն է թողել իրենից հետո: «Երբ առաջին ու վերջին անգամ բանակից արձակուրդ եկավ, ամուր գրկեց ինձ ու ասեց՝ «Տատ մի երազանք ունեմ. ուզում եմ գամ, տունը սարքեմ, մի էնպիսի բարձր աթոռ առնեմ ու քեզ բարձրության վրա նստացնեմ, որ բոլորը ձեռքերը մեկնեն՝ քո ձեռքին չհասնեն»: Հիմա ես էդ բարձրության վրա եմ, տղաս իր երազանքը կատարեց»…

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

2013 թ.-ին Էդուարդ Հայրապետյանը զորակոչվեց ՀՀ զինված ուժեր՝ պարտադիր զինծառայության անցնելով «Եղնիկներում»՝ որպես զորամասի հետախուզական վաշտի 2-րդ հետախուզական դասակի 1-ին հետախուզական ջոկի հետախույզ-

Էդուարդի պարգևները: Ձախից աջ՝ «Արիության համար», «Զինվոր հայրենյաց», «Արիության» մեդալներ

գնդացրորդ: 2015 թ. մարտի 19-ին թշնամու հատուկ նշանակության ջոկատի ուժեղացված խումբը հարձակվեց Գյուլիստանի ուղղությամբ տեղակայված դիրքերի վրա: Էդուարդը կռվեց և զոհվեց՝ արիաբար հետ մղելով թշնամու գրոհը[181]:

«Թշնամին բոլոր հնարավորություններն ուներ մեզ շրջափակման մեջ առնելու ու կոտորելու,- հիշում է դասակի ողջ մնացած հրամանատար Սարգիս Գաբրիելյանը,- բայց չկարողացավ: Աշխարհում ոչ մի գումարով չես կարող գնել մի բան՝ հայի դուխը: Ես ծնկաչոք եմ հողի տակ պառկած իմ զինվորների առաջ: Հարությունյան Արշակի ու Հակոբյան Սամվելի նման դուխով զինվոր չկար մեր զորամասում, ոչ էլ Հակոբի ու Էդուարդի նման հայրենասեր: Ու այդ տղաները հենց շաղախեցին իրենց արյունը հայրենի հողին, մեր սիրելի «Եղնիկներին»»…

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և անձնազոհության համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2015 թ. սեպտեմբերի 5-ի ՆՀ-516-Ա

[181] 2015 թ. մարտի 19-ին Գյուլիստանում տեղի ունեցած մարտի նկարագրությունը տես նաև Արշակ Հարությունյանին և Հակոբ Խաչատրյանին նվիրված հատվածներում:



Տարիկի հետ

հրամանագրով N զորամասի զինծառայող, շարքային Էդուարդ Գագիկի Հայրապետյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Էդուարդ Հայրապետյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Էդուարդ Հայրապետյանը պարգևատրվել է ««Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհուրդ» իրավաբանական անձանց միություն կողմից սահմանված «Զինվոր հայրենյաց» մեդալով:

Էդուարդի մահվան քառասուներորդ օրվան ընդառաջ՝ Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոցը, Մուղնու զորամասը, Արագածոտնի մարզի երկրապահները, Պ. Պռոշյանի անվան հիմնական դպրոցը կազմակերպել են «Հավերժ քո զինվորն եմ, հայրենի՛ք» խորագրով հուշ-երեկո[182]:

---

[182] Գրքի նախապատրաստման ընթացքում մեզ հայտնեցին, որ այս տարի Մուղնու հիմնական դպրոցում բացվելու է Էդուարդ Հայրապետյանի անվան դասասենյակ:

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Այն մարդկանցից էր, որ երկրորդ անգամ իրեն նկատողություն անել թույլ չէր տա, ստանձնած պարտականությունը պարտադիր պետք է կատարեր, իսկ հանրօգուտ աշխատանքներում առաջինն էր: Մի խեթ հայացքն էլ բավական էր, որ նա կարմրեր: Բացառիկ էր նաև իր գեղեցկությամբ»:

Գայանե Ավետիսյան,
Մուղնու դպրոցի փոխտնօրեն

«Հրաշալի տրամաբանություն ուներ, աչքի ընկնող ընկերասեր էր, արժանապատիվ ու պատվախնդիր: Միշտ պատրաստ էր բոլորին օգնել, անչափ շատ էր սիրում աշխատել»:

Տկն. Հուրիխանյան, *Էդուարդի դասղեկ և մաթեմատիկայի ուսուցչուհի*

«Հարգանքով էր, միանշանակ կարող եմ ասել, որ աշխատասեր ու խելոք երեխա էր, սիրված էր համագյուղացիների կողմից, ոչ մեկը նրանից անշնորհք պահվածք չի տեսել: Ամեն հարցում փորձում էր օգնել տատիկին»:

Մնացական Գրիգորյան,
Մուղնու թաղապետ

«Ամբողջ գյուղը գիտի, որ նա յուրահատուկ էր, կյանքում իրանից մեծի հետ բարձր չէր խոսա, անգամ խոսալիս՝ գլուխը կախում էր: Երբեք նրանից ուսուցիչները չեն բողոքել»:

Կարեն Հայրապետյան, *հերոսի տատիկը*

ՀԱԿՈԲ ԳԱԳԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(1996 – 2015)

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն...

Ծնվել է 1996 թ. մարտի 28-ին Արարատի մարզի Արտաշատ քաղաքում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվել է 2015 թ. մարտի 19-ին Մարտակերտի շրջանում:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է Քաշաթաղի շրջանի Աղաջոր գյուղում:

Հակոբ Խաչատրյանը ծնվել է 1996 թվականին Արարատի մարզի Արտաշատ քաղաքում: Ընտանիքի միակ տղան էր: Ուներ երկու քույր, որոնք Հակոբից մեծ են տասներեք-տասնչորս տարով: Քույրերից մեկին անունով էր դիմում՝ Լիանա, իսկ Նաիրային, որ Հակոբից մեծ էր տաներեք տարով, «քուրո» էր ասում: «Հենց վիճում էինք, ասում էր՝ «սրանից հետո քեզ կասեմ Նառա». մտածում էր, թե դրանով ինձ պատժում է»,- ժպտուն արցունքներով հիշում է Նաիրա Խաչատրյանը: Քրոջ խոսքերով՝ միասին են խաղացել, մեծացել, ապա նաև՝ որոշումներ կայացրել: «Նրանով ապրում էի, շնչում: Երբ ասում էի՝ «Հակոբս», կոլեգաներս ասում էին՝ «քո Հակոբը չի, մամայինդ է»»,- անկեղծանում է Հակոբի քույրը:

Նաիրան Երևանում է սովորել, և ամառային

Գյուլիստանի անտառներում

արձակուրդներին Հակոբն այցելել է քրոջը: Պրպտուն երիտասարդը հետաքրքրվում էր պատմությամբ, այցելում Մատենադարան, Ազգային պատկերասրահ, թանգարաններ… Չնայած տարիքային տարբերությանը՝ Նաիրան փոքր եղբորից շատ բան է սովորել. «Հակոբից սովորեցի, որ թշնամուն երբեք պետք չէ խղճալ: Ասում էի՝ «Հակոբ նրանք էլ են որդի, ընտանիքի զավակ»: Ասում էր՝ «Չէ, քուրո՛, բոլորին կարող ես խղճալ, բայց ոչ թշնամուդ»»:

Երբ Հակոբը վեց տարեկան էր, Խաչատրյանների ընտանիքը բնակության տեղափոխվեց Քաշաթաղի շրջան, սկզբում՝ Վարդանանց, ապա՝ Աղաձոր գյուղեր: Հակոբը հասակ է նետում և սովորում Աղաձորի միջնակարգ դպրոցում: «Ճշտախոս, արդարամիտ, պատասխանատու, եթե բոլոր դրական բաները վերագրեմ Հակոբին, սխալված չեմ լինի»,- ասում է դպրոցի տնօրեն Լուսիկ Հարությունյանը: Վերջինիս խոսքով՝ Հակոբը պատմության և հերոսների սիրահար էր, ակտիվ աշակերտ, ով սիրում էր մասնակցել տարատեսակ մրցույթների: «Շահեն Մեղրյանը, Մոնթե Մելքոնյանը նրա իդեալներն էին: Անգամ նախադասություն կազմելիս միայն հերոսների անուններ էր գործածում: Մասնակցում էր առարկայական օլիմպիադաների, ինտելեկտուալ մրցույթների: Առաջին անգամ Հակոբն է մեր դպրոցի անունից մասնակցել սպորտային մրցույթի և շրջանում զբաղեցրել առաջին տեղը: Ցանկացած

հարցում ակտիվ էր, միայն թե բեմը չէր սիրում: Վերջին զանգից երեք օր առաջ ուսուցիչներից մեկին հաջողվեց համոզել, որ բեմ բարձրանա»,- պատմում է Աղաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն Լուսիկ Հարությունյանը:

Քրոջ՝ Նափրայի հետ

Հենց Լուսիկ Հարությունյանն էլ Հակոբին նախապատրաստել է հայոց լեզվի և գրականության միասնական քննությանը: «Սկզբում հայոց լեզուն Հակոբին անհասանելի բան էր թվում: Շատ էր ոգևորվել, երբ երրորդ պարապմունքի ժամանակ խոսքի մասերի տարբերակման փոքրիկ նրբություն էի ասել: Հաջորդ պարապմունքին եկավ, ասաց՝ «Ընկե՛ր Հարությունյան, Ձեր տված «բանալին» օգտագործել եմ, ամեն ինչ լավ է ստացվել»: Դրանից հետո ամեն անգամ, երբ բացատրում էի նոր նյութը, միշտ ասում էր՝ «Ընկե՛ր Հարությունյան, «բանալին» տվեք էլի»»,- հիշում է հերոսի ուսուցիչը:

Ավարտելով վերջին՝ տասներկուերորդ, դասարանը՝ Հակոբն ընդունվում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմահրավագիտական ֆակուլտետի հեռակա բաժին: Մեկ տարի համալսարանում սովորելուց հետո զորակոչվում է բանակ: «Ասում էի՝ «Արի տարկետում վերցնենք, այս տարի բանակ մի գնա»: Ինքն էլ, թե՝ «Չէ, տատի՛ ջան, ես պիտի գնամ, իմ տարիքի էրեխեքի հետ ծա-

Հոր՝ Գագիկ Խաչատրյանի հետ

ռայեմ»»,- հիշում է հերոսի տատը՝ Հրանուշ Նանայանը, ով թոռանը բնորոշում է որպես խելոք, կազմակերպված, մեծ ու փոքր ճանաչող և հարգանքով մարդ: «Էլի թոռնիկներ ունեմ, բայց Հակոբը յուրահատուկ էր ամեն ինչով, նվիրված, ազնիվ մարդ էր»:

Բանակ գնալուց առաջ Հակոբն ընկերների հետ Եռաբլուր է գնացել: «Ասում էր՝«Մա՛մ, տեսնես՝ ինչ տղեք են, թուրքն իրավունք չունի ապրելու»»,- պատմում է Հակոբի մայրը՝ Գայանե Խաչատրյանը: Որպես անվախ զինվոր՝ Հակոբն աչքի է ընկել հենց ծառայության սկզբից: «Զինվորական երդման արարողությունից չորս օր հետո կրակայինի էր գնացել, լավ կրակելու համար տարել էին մրցման»,- նշում է Հակոբի հայրը՝ Գագիկը: «Ոգի կար Հակոբի մեջ, ես չեմ սերմանել: Պատմություն էր սովորում: Անգիր գիտեր գրեթե բոլոր ազգային հերոսների թևավոր խոսքերը: Շատ էր ոգևորվել, երբ Ազատ Ասոյանի սպասքն իրեն էին տվել ու ասել՝ սրբության պես կպահես»: Ընտանիքի անդամները հիշում են, թե ինչ անհագ սիրով էր Հակոբը լցված Գյուլիստանի լեռների ու անտառների՝ բնության այդ գեղասքանչ տեսարանի հանդեպ: Մի անգամ էլ պատմել էր մայրիկին, որ իր դիրքերից տեսնում ու հսկում է Շահեն Մեղրյանի տունը:

Առհասարակ Հակոբը ծառայությունից դժգոհել

չէր սիրում ու չէր տրտնջում. սիրում էր իր գործը: «Հակոբն ասում էր՝ երկու տարի իրավունք չունեմ պապայի, մամայի մասին մտածելու, հայրենիքի որդի եմ հիմա»,- հիշում է Նաիրան:

«Դեպքից մի քանի օր առաջ պատվոգիր էր ստացել: Զանգեց, ասեց՝ «Մա՛մ, ինձ պատվոգիր են տվել կրակայինից»: Ես էլ թե՝ «Հա՛կ ջան, պատվոգիրն ի՞նչ ես անում, ասա՛, թող մի հինգ օր թողնեն՝ գաս տուն»: Պիտի դիրքերից իջնելուց հետո ստանային պատվոգրերը, բայց Հակոբս իր պատվոգիրը չտեսավ»,- պատմում է հերոսի մայրը…

Մոր՝ Գայանե Խաչատրյանի հետ

Ծառայությունն ավարտելուց հետո Հակոբը շատ նպատակներ ուներ: Ուզում էր ընդունվել Ոստիկանության ակադեմիա, ինչպես նաև թնութիկունք լինել հորն ու վերանորոգել իրենց տան բակի երկհարկանի կառույցը: Տղան նաև շատ էր ուզում մատուռ կառուցել: Այժմ արդեն հայրը պատրաստվում է որքան հնարավոր է շուտ իրագործել որդու ցանկությունը…

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆԸ

2015 թ. մարտի 19-ի առավոտյան՝ 08:00-08:30 հատվածում, դարանակալած թշնամին հարձակ-

վում է դիրքափոխություն իրականացնող տղաների վրա: Առաջինը հակառակորդի դեմ է նետվում Արշակը՝ կենդանի վահան դառնալով ընկերների համար: Հաջորդիվ դիրքավորվում և թշնամու ուղղությամբ կրակել է սկսում Հակոբը: Թշնամու գնդակը վիրավորում է հերոս դիրքապահին, սակայն Հակոբը շարունակում է կրակ տեղալ նաև վիրավոր վիճակում: Մարտից հետո ողջ մնացած ընկերները պատմում են, որ Հակոբը այդ օրը զոհված երեք տղաներից վերջինն էր: Ավելին՝ մարտի ընթացքում վիրավորված զինծառայողներից մեկը հետագայում հիշում էր, որ մինչև իր վիրավորվելն ու գիտակցությունը կորցնելը Հակոբը դեռ կրակում էր:

«Կարճ ժամանակ է տևել, բայց ուժեղ բոյ են տվել տղաները»,- զորամասի հրամանատարության պատմածներից եզրակացնում է հերոսի հայրը: Վերջինիս վկայությամբ, երբ տղայի դին տեղափոխեցին Աղածոր, ձեռքերի մեջ ակնհայտ էին այրվածքի հետքերը, ինչից կարելի է ենթադրել, որ հանկարծահաս մարտում Հակոբը գնդացրից կրակել է առանց զենքի ոտնակները բացելու:

Դասակի ողջ մնացած հրամանատար Սարգիս Գաբրիելյանի խոսքերով՝ «Կողքիդ զոհված ընկերը քո մեջ բարձրացնում է կռվելու եռանդը, իսկ մարտից հետո՝ թևաթափ անում: Մարտից հետո չէի հավատում, որ Արշակը, Էդուարդը ու Հակոբը չկան. Հակոբի նման հայրենասեր զինվոր չկար մեր զորամասում»[183]…

[183] 2015 թ. մարտի 19-ին Գյուլիստանում տեղի ունեցած մարտի նկարագրությունը տես նաև Արշակ Հարությունյանին և Էդուարդ Հայրապետյանին նվիրված հատվածներում:

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և անձնազոհության համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2015 թ. սեպտեմբերի 5-ի ՆՀ-515-Ա հրամանագրով N զորամասի զինծառայող, շարքային Հակոբ Գագիկի Խաչատրյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Հակոբ Խաչատրյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Հակոբ Խաչատրյանը պարգևատրվել է ««Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհուրդ» իրավաբանական անձանց միություն կողմից սահմանված «Զինվոր հայրենյաց» մեդալով:

Հակոբ Խաչատրյանի և ծառայակից մյուս ընկերների հիշատակին մոմավառություն է կայացել Քաշաթաղի շրջանի տարբեր բնակավայրերում, այդ թվում՝ շրջկենտրոն Բերձորի սբ. Համբարձման եկեղեցում:

Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի Հովհաննես Թումանյանի անվան դպրոցում գործող համակարգչային կենտրոնը Երևանի պետական համալսարանի Ռազմավարական հետազոտու-

Հակոբը (երկրորդ շարքում՝ ձախից առաջինը) ծառայակից ընկերների հետ: Հակոբի կողքին 2014 թ. հուլիսի 31-ին թշնամուն հետ մղած Նորայր Քամալյանն է

թյունների գիտահետազոտական լաբորատորիայի նախաձեռնությամբ 2015 թ. հոկտեմբերի 12-ին անվանակոչվել է Հակոբ Խաչատրյանի անվամբ:

Նախատեսվում է, որ 2016 թ. մարտի 28-ից Հակոբ Խաչատրյանի անունն է կրելու նաև Աղաձորի միջնակարգ դպրոցը: Ըստ դպրոցի տնօրենի՝ «Վարչակազմի և կրթության բաժնի համաձայնությունը կա, մենք աշխատանքներ ենք տանում այդ ուղղությամբ»[184]:

---

184 Դպրոցի տնօրենի վկայությամբ անվանակոչման խնդրանքով իրեն դիմել են նաև աշակերտները. «Հակոբի մահվան երկրորդ օրն էր, մենք մոմավառություն էինք կազմակերպել դպրոցում: Բարձր դասարանի աշակերտներից մեկն ինձ ասաց՝ «Ընկեր Հարությունյան, խնդրում եմ՝ արեք ամեն ինչ, ես ուզում եմ ավարտել Հակոբ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցը»»:

ՍԱՄՎԵԼ ՍԱՍՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(1995 - 2015)

Ընդմիշտ կյանքին սիրահարված

Ծնվել է 1995 թ. հոկտեմբերի 2-ին Արարատի մարզի Արևաբույր գյուղում:

Հայաստանի սահմանները պաշտպանելիս վիրավորվել է 2015 թ. մարտի 19-ին Մարտակերտի շրջանում: Մահացել է 2015 թ. մարտի 26-ին:

«Արիության» մեդալի (ՀՀ) և «Արիության համար» մեդալի (ԼՂՀ) շքանշանակիր է:

Թաղված է ծննդավայր Արևաբույր գյուղում:

Սամվել Հակոբյանը ծնվել է 1995 թվականին Արարատի մարզի Արևաբույր գյուղում: Հնգանդամ ընտանիքի երկրորդ զավակն էր: Հակոբյանների ընտանիքի մեծ երեխան Սամվելի քույրն էր՝ Հերիքնազը, իսկ իրենից փոքր ուներ մեկ եղբայր՝ Միտուշը:

Ամեն ինչին հարմարվող, մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր Սամվելը կամ, ինչպես տանն ու ընկերներն էին ասում, Սամոն իրեն համարում էր խաղաղության աղավնի, ով ամենքին հաշտեցնում ու ամենուր խաղաղություն էր փորձում հաստատել: Նրանք, ովքեր շփվել ու ճանաչում են Սամվելին, միաբերան փաստում են նրա համեստ, ամաչկոտ, բայց հումորով ու կենսախինդ լինելը:

Սպորտը Սամվելի տարերքն էր: Տասնմեկ տարի զբաղվել է քիքբոքսինգով: Մասնակցել է մրցույթ-

ների և արժանացել բազում մեդալների: Սամվելն իրեն պատկերացնում էր սպորտում, ուզում էր բանակից վերադառնալ, խումբ ստեղծել ու երեխաների հետ պարապել: Սամվելն օժտված էր նաև ստեղծագործական ձիրքով. սիրում էր գրել, նկարել, մասնավորապես՝ խաչեր: Ընդհանրապես, Սամվելն աստվածավախ էր, մեծ հավատ ուներ առ Աստված և հաճախ էր եկեղեցի գնում:

«Իմ խաղաղության աղավնին էր: Երեխուցս ոչ մի անշնորհք քայլ չեմ տեսել, երբեք նրանից չեն բողոքել: Բանակ գնացել է մեծագույն սիրով, ոչ մի օր չի դժգոհել ոչնչից՝ ո՛չ սննդից, ո՛չ ցրտից: Արձակուրդ ուշ-ուշ էր գալիս, ասում էր՝ ծառայությանը պիտի լուրջ մոտենալ»»,- արցունքով և հպարտությամբ հիշում է մայրը՝ տիկին Մարինեն:

Թեև դպրոցում Սամվելը գերազանց չէր սովորում, սակայն ուսուցիչների ու դասընկերների սիրելին էր: Վարդուհի Ղազարյանը, ով ութ տարի եղել է ապագա հերոսի դասղեկը, ծնողական սիրով էր կապվել նրա հետ ու այսօր ծնողի պես հպարտ է նրանով. «Միշտ է իրենով ուրախանալու և հպարտանալու առիթներ տվել: Դժվարությունների շատ է հանդիպել, բայց գտել է առաջ գնալու ուժ: Դպրոցում շաբաթօրյակի ժամանակ ավելը վերցնում էր ու գործ անում: Կապ չուներ իր համար՝ դա տղայի աշխատանք է, թե չէ: Ինչ տարիք էլ լինեմ, մինչև խոր ծերություն ես միշտ հպարտությամբ եմ խոսելու իր մասին»:

Հետաքրքրիր է, որ բոլորը, որպես Սամվելին բնորոշող հիմնական հատկանիշ, նշում են հայրե-

նասիրությունը: Դասավար Արևիկ Օհանյանի հուշերում դեռ թարմ է առաջին դասարանում «Ի՞նչ է հայրենասիրությունը» հարցին Սամվելի տված պատասխանը. «Կանգնեց, բռունցքն ամուր սեղմեց ու բարձր ձայնով ասաց՝ «Հայրենասիրություն նշանակում է գնալ հայրենիքը պաշտպանել և թուրք սպանել»»:

Ասում են՝ հայրենասիրությունը գալիս է արյան հետ. Սամվելը դրա վառ օրինակն էր: Նա իր հայրենասեր պապի՝ Միտուշ Հակոբյանի, գաղափարների կրողն ու արժանի հետնորդն էր: Պապ, ում կենդանության օրոք սիրել է առանձնակի ջերմությամբ, խրատներ ստացել, իսկ արդեն բանակային օրերին անգամ մեկ օրով արձակուրդ գալու դեպքում՝ այցելել նրա շիրիմին: Սամվելի Ծաղիկ տատը ամեն օր թոռանը հորդորում էր զգոն լինել. «Ասում էի՝ զգույշ կլինես, բալե՛ս, ինքն էլ թե՝ «Տատի՛, դու իմ համար մի վախեցիր. ես իմ վրա վստահ եմ»: Ասում էր, որ իրենից միշտ գոհ են: Շատ սիրով էր ծառայում»:

2013 թ.-ին Սամվելը զորակոչվեց ՀՀ զինված ուժեր՝ պարտադիր զինծառայության: Ծառայությունն անցկացնում էր «Եղնիկներում» եղբոր հետ միասին: Որդու ծառայության օրերից դրվագներ է հիշում հերոսի մայրը. «Դեկտեմբերի 5-ին գնաց, 16-ին զանգեց, ասեց՝ «Մամա՛, չլացես, եթե լացես, անջատում եմ, պիտի պինդ մնաս, երկու տարի ա՝ կծառայեմ, կգամ»: Որ ասում էի՝ «Սամո՛ ջան, ուշ-ուշ ես գալիս, ասում էր՝ «Մամա՛ ջան, թող գոնե մի քիչ կարոտեմ, նոր գամ, հո ես անլուրջ չեմ վերաբերվելու իմ ծառայությանը»: Օգոստոսի լարված դիվերսիաների օրերին Սամոս մեդալ ստացավ, ասում էի՝ «Ինչի՞ համար են տվել, բալա՛», չէր ասում: Երևի դեպքեր են եղել, էրեխեքն էլի թշնամուն հետ են մղել, իրենց լավ են դրսևորել»,- արցունքոտ հպարտությամբ խոսքը եզրափակում է Սամվելի մայրը:

Սամվելի ծառայությունը առանձնակի գորովով է հիշում դաստակը. «Հեռախոս չէր սիրում պահել: Ասում էր՝ «ում ցանկանամ տեսնել, կգնամ, կտեսնեմ»: Անգամ հոսպիտալից եկել էր, ընկճված չէր, դասարանի աղջիկների համար ծաղիկներ էր բերել: Ինձ համար էլ նվեր էր բերել: Սուրճի բաժակներ էին, որ այժմ մասունքի նման եմ պահում: Ասում էր՝ «Նայեք-տեսեք՝ ճաշակով է, թե չէ. ես եմ է՞ գնել, կխմեք, ինձ կհիշեք»: Ասում էի՝ «Սամվե՛լ ջան, եթե դու ես բերել, ուրեմն ամենաթանկն ու ամենալավն է ինձ համար»: Հիմա, երբ աչքերս ընկնում են այդ բաժակների վրա, չեմ կարողանում արցունքներս զսպել»:

2015 թ. մարտի 19-ին թշնամու հատուկ նշանակության ջոկատի ուժեղացված խումբը՝ բաղկացած 20-25 հոգուց, հարձակում ձեռնարկեց Գյուլիստանի ուղղությամբ տեղակայված դիրքերի վրա, որի ժամանակ արիաբար կռվելով ծանր վիրավորվեց և նույն թվականի մարտի 26-ին հոսպիտալում մահացավ Սամվել Հակոբյանը[185]:

ՀԻՇԱՏԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ, հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության և անձնազոհության համար ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2015 թ. սեպտեմբերի 5-ի ՆՀ-517-Ա հրամանագրով N զորամասի զինծառայող, շար-

[185] 2015 թ. մարտի 19-ին Գյուլիստանում տեղի ունեցած մարտի նկարագրությունը տես նաև Արշակ Հարությունյանին, Էդուարդ Հայրապետյանին և Հակոբ Խաչատրյանին նվիրված հատվածներում:

Մոր՝ Մարիևն Հակոբյանի հետ

քային Սամվել Սասունի Հակոբյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Արցախի նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի զինծառայող Սամվել Սասուի Հակոբյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

2015 թ. հոկտեմբերի 2-ին Արարատի մարզի Արևաբույր գյուղի դպրոցում կազմակերպվել է հուշցերեկույթ՝ նվիրված Սամվել Հակոբյանին:

2015 թ. հոկտեմբերի 2-ին այն դասավարական դասասենյակը, որտեղ առաջին անգամ ոտք է դրել Սամվելը, անվանակոչվել է հերոսի անվամբ:

ԱՊՐՈՂՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

«Անչափ հումորով ու բարի էր: Նրանից երբեք չեն դժգոհել: Ծառայության գնացել է մեծ սիրով, անհամբեր էր. ուզում էր շուտ գնալ ու հենց Ղարաբաղ: Նրան բոլորն էին սիրում, ամեն միջավայրի ուրախությունն էր: Միշտ ասում էր՝ «մամա՛, ես խաղաղության աղավնին եմ, որտեղ էլ գնամ, ես նենց կանեմ, որ խաղաղություն լինի»»:

Մարիևն Հակոբյան, *հերոսի մայրը*

«Ինչքան էլ ծանր է, ես չեմ կարող նրա մասին առանց արցունքների խոսել: Ծնողական սեր, կապվածություն, ինքն ուրիշ աշխարհ էր ինձ համար: Ինքը հայրենասեր ծնվել էր, ինքը զինվոր էր ծնվել: Սկսել էր սպորտից: Հիմա, երբ հետ եմ նայում, տեսնում եմ, որ նրա սերն առ հայրենիք սկսվեց սպորտից: Մի անգամ մրցույթի ժամանակ աղրբեջանցու էր հաղթել, զանգեց, ասաց՝ «թուրքի եմ խփել». աննկարագրելի ուրախ էր: Ինքը հպարտ էր, որ հայրենիքն էր ներկայացնում: Ուզում էր այնպիսի մարդ դառնալ, որ բոլորն իրեն հիշեն, ճանաչեն: Միջակությունը Սամվելի համար չէր, նա առաջավոր էր ամեն հարցում: Ավագ դպրոցում կատարյալ տղամարդ էր, ում հետ կարելի էր նստել ու ժամերով զրուցել»:

Վարդուհի Ղազարյան,
Սամվելի դասղեկ և մաթեմատիկայի ուսուցչուհի

«Հողամասում չէր թողնում՝ գործ անեմ, նենց սիրուն, կոկիկ գործ կաներ էրեխես, ձեռքիցս կվերցներ, կասեր՝ «տատի՛, ես կանեմ, դու թո՛ղ»: Հաց էի թխում, հանում, ամբողջ փողոցին հյուրասիրում էր: Չափից դուրս խղճով էր»:

Ծաղիկ Հակոբյան, *հերոսի տատիկը*

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՂՆԻԿՆԵՐ

Սարերից այն կողմ՝ ամպերից էլ վեր,
Ծառայելու եմ եկել Եղնիկներ,
Ուր ավարտվում է ամբողջ աշխարհը,
Ուր քարքարոտ է իմ ճանապարհը:

Այստեղ կարոտը զինվորի սրտում
Փշալարերով իր բույնն է հյուսում:
Ամենքից հեռու՝ ընտանիք ու սեր,
Երկար ճանապարհ, քարքարոտ սարեր:

Սիրող տղայի մտքին բան չկա,
Միայն պատկերն է սիրած աղջկա:
Ես մորս ձայնն եմ անուշ կարոտել,
Կուզեի գնալ, աչքերը մաքրել:

Աչքերը՝ որոնք շատ են արտասվել,
Իր զինվոր որդու ճամփին ըսպասել,

Մա՛յր իմ հարազատ, չտխրես հանկարծ:
Ես չեմ գնացել ձեզանից անդարձ,
Ես ետ եմ գալու, միայն սպասեք
Եվ իմ հետևից զուր մի՛ արտասվեք…

Հեղ.՝ *Սամվել Հակոբյան*, 05.10.2014 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ (1988-1994 ԹԹ.) 9
«ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ». ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2014-2015 ԹԹ.) 53

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆ
ԱՐՄԵՆ ԼԵՎՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 83
ԱԶԱՏ ԱՐԹՈՒՐԻ ԱՍՈՅԱՆ 101
ԱՐԱՐԱՏ ՎԱՉԻԿԻ ԽԱՆՈՅԱՆ 111
ԶՈՐԻԿ ԺԻՐԱՅՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ 118
ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ 138
ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆ 146
ԱՐՇԱԿ ԿԱՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 153
ԷԴՈՒԱՐԴ ԳԱԳԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 164
ՀԱԿՈԲ ԳԱԳԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ 171
ՍԱՄՎԵԼ ՍԱՍՈՒՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ 179

Էդգար Էլբակյան

Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները

Շապիկի ձևավորումը՝ Ա. Աղաբաբյանի
Շապիկի նկարը վերցված է ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջից (www.mil.am)
Հրատ. խմբագրումը՝ Ա. Աղաբաբյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 11,75:
Տպաքանակը՝ 600:

«Գևորգ - Հրայր» ՍՊԸ
Տպագրված է ԼՈՒՍԱԿՆ տպարանում:
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6: Հեռ.՝ 52-79-74: Էլ. փոստ lusakn@rambler.ru